

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ
ՈՒՆԵՑՈՂ
ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏ ԵՎ ՀԱՅԱԳԵՏ**

Հոդվածների ժողովածու՝
նվիրված Նիկողայոս Ադոնցի ծննդյան
150-ամյա հորեյանին

Երևան
Լուսակն
2021

ՀՏԴ
ԳՄԴ
Ս

**Ժողովածուն տպագրության է երաշխավորել
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական
ֆակուլտետի խորհուրդը**

Խմբագիր՝ Մայա Գրիգորյան

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
մատենադարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու

**Նիկողայոս Ադոնցը միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ և
հայագետ:** Հոդվածների ժողովածու՝ նվիրված Նիկողայոս Ադոնցի
ծննդյան 150-ամյա հոբելյանին.- Եր.: Լուսակն, 2021.- 112 էջ:

*Ժողովածուի մեջ գետեղվել են Ն.Ադոնցի հսկայական գիտական
ժառանգության առանձին խնդիրներին նվիրված հոդվածներ, որոնց
հեղինակները Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլ-
տետն ավարտած գիտնականներ ու մանկավարժներ են:*

*Ժողովածուն նախատեսված է հայ գրականության և հայոց լեզվի
ուսուցիչների, բանասիրական ֆակուլտետների ուսանողների, Ն.
Ադոնցի ստեղծագործությամբ հետաքրքրվողների համար:*

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN

© Լուսակն, 2021

*Միտով
նվիրվում է Նիկողայոս Ադոնցի
ծննդյան 150-ամյա հոբելյանին*

ՆԱԽԱԲԱՆ

Այս տարի լրանում է մեծ հայրենասեր, միջազգային հռչակ վայելող բյուզանդագետ, հայագետ, մանկավարժ Նիկողայոս Ադոնցի ծննդյան 150-ամյա հոբելյանը:

Ադոնցը թե՛ հայրական և թե՛ մայրական գծով ազնվական ծագում ուներ: Ստացել է փայլուն կրթություն: Ավարտել է Մանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ու պատմաբանասիրական ֆակուլտետները գերազանցության վկայականով: Ուսման տարիներին կատարելագործվել է Փարիզի, Լոնդոնի, Սյունխենի, Ստրասբուրգի համալսարաններում, պարապել այդ քաղաքների, նաև Վենետիկի ու Վիեննայի մատենադարաններում: Բացի հին դասական լեզուներից ու սեպագրերի իմացությունից, ազատ տիրապետել է ռուսերենին, անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, գրել ու դասախոսություններ կարդացել այդ լեզուներով: Դասավանդել է Պետերբուրգի ու Բրյուսելի համալսարաններում: Համարվել է, որպես բյուզանդագետ, Բրյուսելի համալսարանի փառապանծ անուններից:

Ադոնցը Հայկական հարցի, Հայ դատի նվիրյալ պաշտպաններից է և թուրքական հայաջինջ քաղաքականությունը մերկացրել է Եվրոպական նշանավոր պարբերականներում տպագրված հոդվածներով:

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի հովանավորությամբ լույս են տեսել Ադոնցի գիտական ժառանգության ութ հատորները, որոնք հարստացնում են ոչ միայն հայագիտությունը, այլև իրավամբ համաշխարհային արժեք ունեն:

Նրա կոթողային աշխատություններն են «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908 թ.), «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» (1915 թ.), «Քննական պատմություն Հայոց» (1946 թ.):

«Քննական պատմություն Հայոց» աշխատությունը ֆրանսերենով հետմահու լույս է տեսել 1946 թ.: Գրքի առաջաբանում ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն ներկայացնում է, թե

ինչպես սեպագրերի ընթերցանության միջոցով Ադոնցն ապացուցեց, որ Ուրարտուն նույն Հայաստանն է, ճշգրիտ ու անկողմնակալ հողվածներով ցույց տվեց, թե Բյուզանդիան ինչեր է պարտական Հայաստանին՝ սկսած «մակեդոնական» մեծ հարստությունից, որը ձերացած պետության առջև բացեց X դարի զարմանալի վերածննդի դռները:

Ճակատագրի բերումով իր կյանքի մեծ մասն արտասահմանում անցկացրած Ադոնցը Մուշեղ Իշխանի՝ նրա սանի խոսքերով բնութագրվում է շատ դիպուկ. «Հայաստանը կարծես Նիկողայոս Ադոնցն էր, նրա լավագույն հատկանիշների մարմնացումը, նրա մարդկային պատկերը: Նա հայ տղամարդ էր, բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով»:

Մեծ հայագետի իդեալը Տիգրան Մեծն է, վերջինիս ստեղծած հզոր ու առաջադիմական Հայաստանը: Ադոնցը մերժում է հայ ժողովրդի պատմական ընթացքն արատավորող դավաճաններին, իր բոլոր գիտական գործերում քարոզում է ազգային արժանապատվություն, օտարի մոտ սեփականը պաշտպանելու կարողություն: Նա հայ առաքելական եկեղեցու պատմության գիտակն է ու հայոց լեզվի, հայոց գիտական մտքի և Լուսավորչի հիմնած եկեղեցու միասնության մեջ է տեսնում հայերի հարատևության գաղտնիքը:

Հողվածների այս ժողովածուն հարգանքի տուրք է մեծանուն հայի հորեյանին, նրան ուղղված մի փոքրիկ ընծա, որը վկայում է գիտնականի դրույթների կենսունակության ու հարատև լինելու իրողությունը:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյան

ПРЕДИСЛОВИЕ

В этом году исполняется 150-летний юбилей со дня рождения великого патриота, всемирно известного византиниста, арменоведа, педагога Николая Адонца.

Адонц имел дворянское происхождение как по отцовской, так и по материнской линии, получил блестящее образование. С отличием окончил факультеты восточных языков и историческо-филологический Санкт-Петербургского университета. Во время учебы он совершенствовался в университетах Парижа, Лондона, Мюнхена и Страсбурга, занимался в хранилищах рукописей этих городов, а также Венеции и Вены. Помимо знания древних классических языков и клинописи, он свободно владел русским, английским, французским и немецким языками, писал и читал лекции на этих языках. Он преподавал в университетах Санкт-Петербурга и Брюсселя, и как византинист, считался одним из славных имен Брюссельского университета. Адонц был одним из преданных защитников Армянского вопроса и Ай Дата, разоблачал антиармянскую политику Турции в статьях, опубликованных в известных европейских периодических изданиях.

Под эгидой Армянского отделения Фонда Галуста Гюльбенкяна издано восемь томов научного наследия Адонца, которые обогащают не только арменоведение, но и по праву имеют мировое значение.

Его монументальными произведениями являются «Армения в эпоху Юстиниана» (1908 г.), «Дионисий Фракийский и армянские толкователи» (1915 г.), «Критическая история Армении» (1946 г.).

«Критическая история армян» была опубликована посмертно на французском языке в 1946 году. В предисловии к книге член Французской академии Рене Груссе описывает, как Адонц, читая клинопись, доказал, что Урарту – это та же Армения. Кроме того, Адонц

смог точными и беспристрастными статьями показать, чем Византия была обязана Армении, начиная с огромного «македонского» богатства, открывшего перед состарившимся государством двери удивительного возрождения X века.

Адонца, волею судьбы проведшего за границей большую часть своей жизни, очень точно описал его ученик Мушег Ишхан: «Николай Адонц как-будто был самой Арменией, воплощением её лучших черт, её человеческим образом. Он был армянином в традиционном, современном, благородном смысле этого слова ».

Идеалом великого арменоведа были Тигран Великий и могущественная и прогрессивная Армения, созданная им. Адонц отвергал предателей, порочащих исторический путь армянского народа, во всех своих научных трудах отстаивал национальное достоинство, умение защищать собственное перед чужими. Он был знатоком истории Армянской Апостольской церкви и видел секрет выживания армян в единстве армянского языка, армянской научной мысли и церкви, основанной Просветителем.

Этот сборник статей – дань уважения юбилею великому армянину, маленький подарок, свидетельствующий о жизнеспособности научных тезисов ученого и реальности их долговечности.

Профессор Аэлита Долуханян

FOREWORD

This year marks the 150th anniversary of the birth of the great patriot, world famous byzantinist and armenologist, pedagogue Nicholas Adontz.

Adontz was of noble origin both on his paternal and maternal side, and received an excellent education. He graduated with honors from the Faculty of Oriental Languages and Historical Philology of St. Petersburg University. During his studies, he improved at the universities of Paris, London, Munich and Strasbourg, worked in the book depositories of these cities, as well as Venice and Vienna. In addition to knowledge of ancient classical languages and cuneiform signs, he was fluent in Russian, English, French and German, wrote and lectured in these languages. He taught at the universities of St. Petersburg and Brussels, and as a byzantinist, was considered one of the glorious names of the University of Brussels. Adontz was one of the devoted defenders of the Armenian Question and *Hay Dat*, he exposed Turkey's anti-Armenian policy in articles published in well known European periodicals.

Eight volumes of the scientific heritage of Adontz have been published under the auspices of the Armenian branch of the Galouste Gulbenkian Foundation; they enrich not only the Armenian studies, but also rightfully have world significance.

His monumental works are *Armenia in the Era of Justinian* (1908), *Dionysius of Thrace and Armenian Commentators* (1915), and *Critical History of Armenia* (1946).

The *Critical History of the Armenians* was published posthumously in French in 1946, and in the preface to the book, René Grousset, a member of the French Academy, describes how Adontz, reading cuneiform signs, proved that Urartu is the same Armenia. In addition, Adontz was able to show with accurate and impartial articles what Byzantium owed Armenia,

starting with the enormous “Macedonian” wealth that opened the doors of the amazing 10th century revival for the aging state.

Adontz, who by the will of fate spent most of his life abroad, was very accurately described by his disciple Mushegh Ishkhan: “Nicholas Adontz seemed to be Armenia, the embodiment of its best features, its human image. He was Armenian in the traditional, modern, noble sense of the word».

The ideal of the great armenologist were Tigran the Great and the powerful and progressive Armenia created by him. Adontz rejects the traitors who discredit the historical path of the Armenian people, in all his scientific works he defends national dignity, the ability to defend one’s own against strangers. He was an expert on the history of the Armenian Apostolic Church and saw the secret of the survival of the Armenians in the unity of the Armenian language, Armenian scientific thought and the Church founded by the Illuminator.

This collection of articles is a tribute to the anniversary of the great Armenian, a small gift testifying to the viability of the scientist’s scientific theses and the reality of their longevity.

Professor Aelita Dolukhanyan



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՏԱՐԱԾ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիկողայոս Աղոնցի գիտական ժառանգության ամենատարբեր գործերում տեսնում ենք խորքային անդրադարձ հայ քրիստոնեական եկեղեցու գործունեությանը՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև XX դարի 30-ական թվականները:

Աղոնցի նախնիները եղել են հոգևորականներ. քահանա էր նրա հայրը՝ Գևորգ Տեր-Ավետիքյանը, որը Սյունիքի Բոնակոթ գյուղի քահանան էր և Դավիթ-Բեկի զինակից Տեր-Ավետիքի թոռը: Տեր-Ավետիքը դարձել է գրական կերպար և՛ Րաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում, և՛ Մերո Խանգաղյանի «Միախար սպարապետ» պատմավեպում: Այս հայրենասեր, խիզախ քահանայի կերպարը ամենից հստակ ձևով երևում է Ղուկաս Մեբաստացու «Դավիթ Բեկի պատմությունը» երկում. «Այլև Տեր-Ավետիսը նույն Հալիձորում 468 հոգով. այս Տեր-Ավետիսը բազում մեծ սխրանքներ գործեց, ինչպես պատմության մեջ է երևում. շատ քաջ էր ու արիասիրտ, և խոսքով հույժ զորավոր, և սրա

համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Երուսաղեմում, շատերը նրա հայրենի գավառից հորդորում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին»¹:

Դեռևս հինգերորդ դարում Սահակ Պարթևն իր «Կանոնգիրք Հայոց» աշխատության մեջ խստագույնս պատվիրում է քահանաներին հատուկ ուշադրություն դարձնել իրենց որդիների ուսման վրա, հատկապես նրանց, որոնք ժառանգելու են քահանայական պաշտոնը. «Արդ, բարձեք այսուհետև ի ձենջ զայսպիսի թշնամանս, զորցիս ի դպրոց կալարուք, զի գիտուն լիցին: Ծաներու ք զի որպէս կուրութիւն աչաց ատելի է մարմնոյ, նույնպէս և տգիտութիւն ոգոյ՝ ատելի է Աստուծոյ...»²:

Անտարակույս Ադոնցի հայրը եղել է ուսումնասեր և իր որդուն՝ Նիկողայոսին, տվել է հիանալի կրթություն: Ադոնցը սկզբում սովորել է Տաթևի վանքի դպրոցում, հետո Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Բհարկե, ապագա միջազգային համբավի տեր բյուզանդագետի ու հայագետի հետագա կրթությունը Թիֆլիսում, Սանկտ Պետերբուրգում այլևս գիտնականի հոր միջոցներով չէր, այլ Ալեքսանդր Մանթաշյանի, որի նյութական հովանավորությամբ Ադոնցը դասընթացներ յուրացրեց Լոնդոնի, Փարիզի, Մյունխենի, Ստրասբուրգի համալսարաններում, պարապեց այդ քաղաքների, ինչպես նաև Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների գրադարաններում:

Ադոնցը հիացմունքով է նշել, որ Զաքարյանների շնորհիվ XIII դարում Մեծ Հայքում իրենց դերն են ամրապնդում մի շարք նախարարական տներ, որոնք նաև ձեռնամուխ են լինում երկրի լուսավորության գործին: Այդ տներից նշանավորագույնը Օրբելյաններն էին:

¹ Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, աշխարհաբար վերապատմեց Արշակ Մադոյանը, Երևան, 1988, էջ 42:

² Սահակ Պարթև, Կանոնգիրք Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 21:

Բագրատունիների հայկական թագավորության անկումից հետո Կիլիկյան Հայաստանի թագավորության երեք դարերի ընթացքում հայ նշանավոր նախարարներն իրենց որդիներին տալիս էին ընտիր կրթության և պատրաստում էին նրանց որպես հոգևոր առաջնորդներ:

Գրիգոր Մագիստրոսի որդին Գրիգոր Բ Վկայասերն է, որը հայոց կաթողիկոս է եղել 1066-1105 թթ.: Ապիրատ Պահլավունու որդիները նույնպես դարձան կաթողիկոսներ: Գրիգոր Գ Պահլավունին Ամենայն Հայոց Կաթողիկոս էր 1113-1166 թթ., իսկ նրա եղբայրը՝ Ներսես Շնորհալին, կաթողիկոս էր 1166-1173 թթ.:

Երբ 1285 թ. Տարասայիճ Օրբեյանը դառնում է Սյունիքի իշխան, իր որդուն՝ Ստեփանոս Օրբեյանին, որին փայլուն կրթություն էր տվել, ուղարկում է Կիլիկիա՝ Սյունիքի մետրոպոլիտ ձեռնադրվելու համար: Ստեփանոս Օրբեյանը շատ մեծ դեր է կատարել հայ եկեղեցու անկախությունը պահպանելու գործում, նպաստել է Գլաձորի համալսարանի հիմնադրմանը: Լոնդոնի Բրիտանական թանգարանում պահվող թիվ 118 հայկական ձեռագրում կա մի կարևոր հիշատակարան, որի պատմական արժեքը շատ մեծ է: Այն տեղեկացնում է, թե որքան նշանակալի նվիրատվություններ է արել Քեթիվանքին Տարասայիճ Օրբեյանը 1254 թ.: Վանքին է նվիրել իր գերդաստանին պատկանող Շնհեր, Խոտավան գյուղերն՝ իրենց սահմաններով, լեռներով և դաշտերով, Խոտագետում գտնվող իր ձեռատունկ այգին, Յուր և Հաժիս գյուղերն իրենց սահմաններով³: Սա խիստ կարևոր փաստ է, որովհետև պարզ ձևով ներկայացնում է, թե ինչպես էին նշանավոր նախարարները թաթար-մոնղոլական արշավանքների ժամանակ հովանավորում վանքերին ու վանական դպրոցներին՝ հրաշալի իմանալով նաև, թե թաթար-մոնղոլները վանքերից ու եկեղեցիներից իրավունք չունեին հարկ վերցնել ու բռնագրավել նրանց գյուղերը, դաշտերն ու այգիները, նաև ունեցվածքը: Տարասայիճը նգովք է ուղղում

³ Տե՛ս Fr. Conybear, Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, p. 294-295.

բոլորին՝ հայ, թե օտար, որոնք կփորձեն յուրացնել իր նվիրատվությունը: Այդ իրավունքը չունեին նույնիսկ նվիրատուի զավակներն ու թոռները⁴: Այս նախաբանն արվում է՝ ներկայացնելու, թե միջնադարում որքան միասնական են եղել հայ աշխարհիկ և հոգևոր առաջնորդները, որոնց նպատակն էր պահպանել ազգային ոգին, հողը և ինքնագիտակցությունը:

Հայ եկեղեցուն Ադոնցը հանգամանալի անդրադարձ ունի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» կոթողային աշխատության մեջ (1908 թ.): Աշխատությունը, որպես մագիստրոսական թեզ, գրվել է ռուսերեն: Հետագայում այն թարգմանվել է ֆրանսերեն, անգլերեն և հայերեն: Չնայած Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսը գահակալել է VI դարում, սակայն Ադոնցը Հայաստանի քաղաքական հոգևոր իշխանություններին փաստահարուստ ու գիտական անդրադարձ ունի նաև ըստ IV և V դարերի իրողությունների: Գիրքը նկարագրում է նշված ժամանակահատվածների ոչ միայն Արևմտյան Հայաստանի իրադարձությունները, այլև Արևելյան Հայաստանի, որը չէր մտնում բյուզանդական կայսրության մեջ և գտնվում էր պարսկական գերիշխանության ներքո: Որպես հայ եկեղեցու պատմության հավաստի աղբյուր՝ գիտնականը համարում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» և ոչ թե Ագաթանգեղոսի երկը. «Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ Ագաթանգեղոսի տվյալները բոլորովին պիտանի չեն Լուսավորչի օրոք եկեղեցական նվիրապետության վիճակը պարզելու համար: Հայկական եկեղեցու սկզբնական պատմության համար առավել հին ու վստահելի աղբյուրը մնում է Փավստոսի աշխատությունը: Պատմիչի նկարագրած ժամանակաշրջանում քրիստոնեական եկեղեցին Հայաստանում շատ քիչ եպիսկոպոսություններ ուներ: Փավստոսին քաջ հայտնի էին երկու տոհմ՝ Գրիգոր Լուսավորչի և Ադրիանոսի տները»⁵:

⁴ Տե՛ս Fr. Conybear, նշվ. աշխ., p. 295:

⁵ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ը, Երևան, 2016, էջ 326:

Հայ եկեղեցու դերի բացառիկ կարևորությունն ընդգծված է «Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի» հոդվածում, որը նվիրված է Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Հոգևոր կեղրոններ և Գլաձորի բարձր դպրոցը» աշխատությանը: Այս հոդվածը Գարեգին Հովսեփյանի գրքին նվիրված դրվատանքի խոսք է: Նրանում պատկերված է, թե ինչպես են Առաջավոր Ասիա և Հայաստան ներխուժում Ասիայի հեռուներից եկած բարբարոս ցեղեր. նրանց հեղեղը, սակայն, ի գորուչեր հայ հոգևոր կյանքը սպանել. «Հայ հեզ աշխատասիրությունը, շինարար ոգին և արթուն միտքը շարունակել են փայլվիլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, և հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով և ստեղծագործությամբ»⁶: Այդ հոգևոր նորանոր ճիգերի արդյունքը ներկայացված է հոդվածում: Ջաքարյանների շնորհիվ քաղաքական ասպարեզում ազդեցություն ստացած իշխանական հայ տոհմերը սկսում են հովանավորել վանքերին ու եկեղեցիներին. «Շնորհիվ Պռոշյան տան հովանավորության, սկսում է մի մտավոր շարժում, մի իսկական վերածնունդ, որ շուտով տալիս է պանծալի դեմքեր՝ Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Գառնեցի, Մխիթար Այրիվանեցի և վերջապես Գլաձորի Գիտուն Կաճառը՝ բոլորված մեծ վարդապետի՝ Եսայի Նչեցու շուրջը»⁷:

Ադոնցը հայ միջնադարյան գրականության մեջ աշխարհիկ բանաստեղծության կարապետներ է համարում Խաչատուր Կեչառեցուն, Ֆրիկին, Հովհաննես Երզնկացուն: Որպես նոր մտածողության դրսևորում՝ բերվում են Խաչատուր Կեչառեցու «Ողբ եւ մաղթանք ի Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ» տաղի հետևյալ տողերը.

Հանցգուն զինչ աշնան քամին,
Որ թափէ գտերենն ի ծառէն,
Հողմով մեղանաց իմոց

⁶ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, Երևան, 2006, էջ 495:

⁷ Նույն տեղում, էջ 498:

Զրկեցայ յանանց պըսակէն⁸:

Հովհաննէս Գառնեցիին գրում է խրատներ, որոնք լիովին նոր բովանդակություն ունենին և աշխարհային էին ու սերտորեն կապված իրական կյանքի հետ: Դրանք հայրենասիրական բնույթի էին, հայրենականին հավատարիմ մնալու պատգամով. «Մի՛ քակեցես զցանգ հայրենի եւ կամ արհամարհեցես զեղեալ կարգս և զկանոնս նախահարցն»⁹:

Ադոնցը երախտագիտությամբ է խոսում Կիլիկիայի ու Մեծ Հայքի այն հոգևորականների մասին, որոնք հրաժարվեցին քրիստոնեական այլադավանությունից և հավատարիմ մնացին հայրենի եկեղեցուն: Այդ առումով քննադատում է Ներսես Լամբրոնացուն, որը միաբարական շարժման պարագլուխներից էր. «Ներսես Լամբրոնացին, որ կոչված էր Նոր Շնորհալի լինելու Հայոց եկեղեցու համար, զերադասեց մետաքսազգեստով լինել օտարի նման, քան «խարանագգեստ» իր նախնիների հետևությամբ և հիմը դրեց օտարամոլության մի ախտավոր երևույթ, որ ավելի թեթևամտություն էր, քան ազատամտություն, և պիտի քայքայեր հայ եկեղեցու դարավոր շէնքը, եթե չլիներ արևելյան ախոյանների ընդդիմությունը»¹⁰:

Ադոնցը դրական է համարում հայրապետական այթոռի փոխադրումը Էջմիածին, որը տեղի ունեցավ 1441 թ.: Նա Գլաձորի համալսարանի սան է համարում ամեն մի կրթված հոգևորական հայի, որը նոր օրերում՝ XX դարում, ունի գիտական պատրաստվածություն և կրոնավորի անադարտ վարք¹¹:

«Պեշկիթաշյան և կցորդ խնդիրներ» հոդվածը գրվել է 1931 թ. Փարիզում և նույն թվականին էլ տպագրվել է Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրում: Հոդվածը յուրօրինակ «Թուղթ» ընդհան-

⁸ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 498: Տե՛ս նաև Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Երևան, 1988, էջ 26:

⁹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 498:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 503:

րական» է, որով հայագետը դիմում է համայն հայությանը՝ Հայաստանում և նրանից դուրս բնակվող:

Ադոնցը քննադատում է այն հայ մտավորականներին, որոնք կրոնն ու ազգը տարբեր բաներ են համարում: Կարծես հայագետն այս հոդվածը գրել է այսօր. «Ամեն կողմից շրջապատված ենք հավատաորսականներով, որոնք ձգտում են քայքայել հայության կրոնական-եկեղեցական շղթան: Երբ գայլերը մտնում են հոտի մեջ, եղբայրության աղերսներն անիմաստ են գայլի բերանում և եղկելի՝ ոչխարի բերանում, որ ուրիշ կերպ չէ հասկացվում, քան «ե՛կ և կե՛ր ինձ»¹²:

Պետք է թոթափել էժանազին ազատամտության հրապույրը և արհամարհել հետադեմ երևալու քարոզը: Պետք է ուժեղ դիմադրություն ցույց տալ բոլոր նրանց, որոնք հռչակում են մեր ազգային միությունն որևէ կողմից, որևէ մտքով: Ադոնցը շեշտում է. «Մեր ժողովրդի գիտակցության մեջ ազգն ու կրոնը ոչ միայն տարբեր չեն, այլև սերտիվ կապված են»¹³: Կրոնը հայի համար շաղկապող օղակ է, և երբեք այդ ճշմարտությունը չպետք է անտեսել:

Ադոնցի կարծիքով XX դարում քրիստոնեությունը Եվրոպայում էլ նույն դերը չունի, ինչ միջնադարում: Ազատ միտքը հեռացել է կրոնից, սակայն եվրոպական պետությունները շարունակում են կառչած մնալ կրոնին. «Եվրոպական պետությունները, չնայելով հսկայական կարեկիություններին՝ պահպանելու իրենց ժողովրդի ուրույն գոյությունը, մնում են կառչած ազգային եկեղեցիներին: Ռուսիան ուղղափառ է, Գերմանիան՝ բողոքական, Անգլիան՝ անգլիական, Ֆրանսիան՝ կաթոլիկ, Իտալիան ևս կաթոլիկ: Ֆրանսիայի հակակրոն ճիգերը ուրիշ բան չեն, եթե ոչ արտահայտություն ազգային բնագոյի՝ ազատագրվելու Հռովմի պապականությունից, նման Գերմանիայի և Անգլիայի»¹⁴:

¹² Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 556:

¹³ Նույն տեղում, էջ 556-557:

¹⁴ Նույն տեղում, էջ 557:

Եթե մեծ ազգերն այդքան կառչած են իրենց կրոնին, ապա փոքր և անուժ ժողովրդի համար եկեղեցին առավել կարևոր է. «Նա եղել է և մնում է ամրակուր գոտի հայության մեջքին: Եթե հայ ժողովուրդն այդ համոզումը չունենար, չէր ներկի եկեղեցու ամեն մի քարը արյունով, մարտիրոսական սուրբ արյունով»¹⁵:

Ադոնցը, որը փայլուն կրթություն էր ստացել Սանկտ Պետերբուրգի համալսարանում, համալսարանական դասընթացներ էր անցել Եվրոպայի նշանավոր մի շարք համալսարաններում, միշտ հաճույքով էր հիշում Գևորգյան ճեմարանի ուսումնառության տարիները և այդ մասին պատմում էր Բրյուսելի համալսարանի ուսանողներին՝ հատկապես հայերին: Նա ավստում էր, որ Խորհրդային Հայաստանում եկեղեցին դեր չունի: նրա մասին հիանալի հուշագրություն գրած Մուշեղ Իշխանը հավաստիացնում է, թե պրոֆեսորը շատ էր գնահատում ազգային եկեղեցու դերն ու արժեքը հայ կյանքում, որը, սակայն, նվազել էր: Նա հիացողն էր հայ տաճարների ճարտարապետության¹⁶:

«Հայացած Աստվածաշունչը և նորա պատմական տարողությունը» հոդվածը 1936 թ. մարտի 29-ին որպես զեկուցում կարդացվել է Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում: Ձեկուցումը եղել է ֆրանսերեն: 1934 թ. լրանում էր հայերեն Աստվածաշնչի 1500-ամյակը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանը, չնայած մեծ ցանկությանն ու ջանքերին, չի կարողանում Հայաստանում նշել այդ տոնը: Այն նշվում է Փարիզում, որին մասնակցում են նաև օտարազգի հայագետներ:

Այդ հանդիսության նյութերը Արշակ Չոպանյանը տպագրել է Փարիզում 1938 թ.¹⁷:

¹⁵ Ն. Ադոնց, Երկեր, հս. Բ, էջ 557:

¹⁶ Մ. Իշխան, Երեք մեծ հայեր, Բեյրութ, 1952, էջ 30:

¹⁷ St' u Célébration solennelle du quinzième centenaire de la traduction Arménienne De La Bible. [Texte imprimé] Au Grand amphithéâtre de la Sorbonne, dimanche 29 mars 1936. Lettres d'Antoine Meillet et de Charles Diehl ; discours de Mgr Garékin Hovsepian, MM. A. Tchobanian, N. Adontz, G. Millet et A. Gastoué, Paris, 1938, 83 p.

Հայ Աստվածաշունչը, ըստ Ադոնցի, ազատեց հայերին մազ-դեական կրոնից և պարսիկներին ձուլվելու վտանգից. «Ազգային եկեղեցի ունենալ նշանակում էր ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ բնորոշում է ամեն ազգի հոգեկան կյանքը»:¹⁸ Այս զեկուցման մեջ Ադոնցը, ըստ բյուզանդական աղբյուրների, ներկայացնում է հայազգի բյուզանդական կայսրերին ու զորահրամանատարներին, որոնց շնորհիվ հզորացել ու ծաղկել է բյուզանդական պետությունը: Հատկապես Բյուզանդիայի ամենաձաղկուն շրջանը եղել է հայկական ծագում ունեցող Մակեդոնյան դինաստիայի գահակալության ժամանակ, որը տևել է մոտավորապես երկու հարյուր տարի: Այդ մասին գրում են աշխարհի տարբեր ազգերի հանրագիտարանները: Լև Գումիլյովի հանրագիտարանում կարդում ենք, որ Մակեդոնյան դինաստիայի դերը Բյուզանդիայի էթնոգենեզում (ազգի ծագման մեջ) եղել է նշանակալի: Նա վերականգնել է Բյուզանդիայի սահմանները՝ մինչև Եփրատ ու Դանուբ, բարձրացրել երկրի տնտեսությունը, Կոստանդնուպոլսի մշակույթը ու նրա փառքը տարածել ողջ աշխարհի վրա: Եվ, ամենակարևորը, նրան հաջողվել է իր կազմում ներգրավել մեծաքանակ սլավոնների և փոքրասիացիների, որի հետևանքով բյուզանդական էթնոսը դարձել է առավել խայտաբղետ և առավել միատարր¹⁹:

Ադոնցը նույն երևույթի մասին ասում է հետևյալը. «Վերջապես հանդես է գալիս Վասիլը՝ հիմնադիրը ամենից փառավոր հարստության, որ Մակեդոնական են անվանում և իրապես հայկական է և որի տևողության ժամանակ կայսրությունն իր զինվորական ու մշակութային հզորության գագաթնակետին բարձրացավ»²⁰:

Հայտնի է, որ Ադոնցը մասնակցել է Նիկողայոս Մառի գլխավորությամբ իրականացվող Հայաստանի Անի մայրաքաղաքի հնագի-

¹⁸ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 45:

¹⁹ Л. Гумилев, Энциклопедия, Москва, 2017, с. 153.

²⁰ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 49:

տական պեղումներին: Ցարդ պահպանվում է 1912 թ. Մառի պատվերով տպագրված Անիի հուշարձանների ֆոտոալբոմը: Հիմա այդ հուշարձանների մի մասը չկա, թուրքերը քանդել են: Մակայն պահպանված է 1215 թ. կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ ներսից գեղեցիկ որմնանկարված: Որոշ որմնանկարների դեմքեր թուրքերը ջնջել են, ինչպես հատուկ է իրենց բարբարոս բնույթին: Այդ եկեղեցին եղել է եվրոպական ճանապարհորդների հիացմունքի առարկան. «Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը հայտնի է իր եզակի որմնանկարներով, պատկանում է քաղկեդոնական ծեսին հարած հայերին: Նրա հիմնադրի արձանագրությունը, որը մինչ օրս պահպանվել է, մեզ տեղեկացնում է, որ այն կառուցվել է 1215 թ. Ս. Աստվածածինն նվիրված մատուռի տեղում: Հովհաննեսի խաչը պահպանվել է նախկին մատուռից, որը հավանաբար քաղկեդոնիկների սեփականությունն է եղել»²¹:

XX դարի 30-ական թվականներին է գրված «Մի էջ կաթողիկոսության մերձավոր անցյալից» փաստահարուստ հոդվածը, որում հայագետը քննում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբին հայ կաթողիկոսական աթոռի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները՝ դրանց տալով իր գնահատականները: Երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, որոշ ժամանակ անց Ռուսաստանի կառավարությունը հայ եկեղեցու համար նոր կանոններ՝ Պոլոժենիա ուղարկեց, որը բարձրաստիճան հոգևորականության մեջ առաջացրեց տարաձայնություններ: Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսը (1885-1891) քննադատվեց այդ Պոլոժենիան ընդունելու համար: Մակայն նրա ջանքերի շնորհիվ 1886 թ. Արևելյան Հայաստանում վերաբացվել են հայկական դպրոցները, կարգավորվել է Գևորգյան ճեմարանի վիճակը, այն համարվել է ուսուցչական լավագույն կազմով: Լավագույն սաներն ուղարկվել են Արևմտյան Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ստանալու: Դրանցից մեկն է եղել հանճարեղ Կոմիտասը: Մայր տա-

²¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ե, Երևան, 2012, էջ 365:

ճարը վերանորոգվել է, և հիմնադրվել տպարանի հարմարավետ շենք²²:

Ռուսական կայսրության քաղաքականությունը Ադոնցը գնահատում է, երբ այն հայամետ է, քննադատում, երբ ճնշվում են հայերի ազգային իրավունքները. «Ռուսական կայսրությունն էր, որ Արարատյան դաշտը Մայր Աթոռով գրավելուց հետո, հետամուտ եղավ դարմանել վիրավոր Հայ եկեղեցին, կանոնավորել նրա ներքին կյանքն իր պատմական հիմքերի վրա: Տարիներ շարունակ աշխատեց մոտեն ծանոթանալ նրա անցյալին, ավանդություններին և սովորույթներին, բարք ու վարքին, դիմեց մասնագետ հայերին և նրանց հանձնեց կազմել Հայ եկեղեցու համար հիմնական մի Կանոնգիրք»²³:

Ադոնցը նկարագրում է, թե ինչ խոչընդոտներ է հաղթահարել Մակար եպիսկոպոսը կաթողիկոս ընտրվելիս: Երբ Մակարը ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, հայկական դպրոցներն արդեն փակված էին: Մակարը բացել տվեց բոլոր փակված դպրոցները: Գևորգյան ճեմարանում դասախոսելու հրավիրեց նշանավոր հայագետների՝ Մեղրակ Մանդինյանին, Կարապետ Կոստանյանցին, Արշակ Նահապետյանին, Ստեփանոս Պալասանյանին: Դրանք մանկավարժական գործին նվիրված անձնվեր և անշահասեր մարդիկ էին: Դպրոցներում սկսեցին դասավանդել Հայաստանի պատմություն և աշխարհագրություն. «Ծանր կացությունից Մակար կաթողիկոսն ելավ պատվով, կատարեց ինչ որ հնարավոր էր՝ առանց ցնցումների, առանց նոր անախորժությանց դուռ բանալու»²⁴: Ադոնցը բերում է մի ընդարձակ ցուցակ այն նշանավոր հայերի, որոնք դասախոսել են Գևորգյան ճեմարանում, պատրաստել հայրենասեր աշակերտներ, որոնք պանծացրին հայագիտությունը և հայ մշակույթը:

²² Տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոսներ, կազմ.՝ Վ. Մարկոսյան, Ա. Իսոյան, իմբ.՝ Պ. Հովհաննիսյան, Երևան, 2001, էջ 252:

²³ Ն. Ադոնց, Երկեր, հտ. 2, Երևան, 2012, էջ 36-37:

²⁴ Նույն տեղում, 44:

1903 թ. երիտասարդ Ադոնցը Ս. Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր գրականության և արվեստի» պարբերականում տպագրել է «Հայոց եկեղեցու հազար վեցհարյուրամյակի նախօրեին» հոդվածը: Նրանում հայագետը ներկայացնում է, թե XX դարասկզբին կրոնի դերը մարդու կյանքում տկարացել է: Գիտնականների կարծիքով մարդկային միտքն իր զարգացման պատմության ընթացքում անցնում է հաջորդաբար երեք շրջան՝ աստվածաբանական, բնագանցական և գիտական կամ դրական²⁵: Մարդկությունն արդեն անցել է առաջին երկու շրջանները և մտել է երրորդը:

Հայագետի կարծիքով որոշ մտածողներ հավատն ու հավատալիքները շփոթում են իրար հետ և հանգում հուսահատ եզրակացության. «Այն, ինչ որ մնում է անսասան՝ հավատն է, հոգու կենտրոնական գորությունը»²⁶: Եթե որոշ հավատալիքներ կորցրել են իրենց գորությունը, մարդիկ կարծում են, թե հավատն էլ է ապականված: Կրոնը մարդկային կյանքն է ամբողջությամբ. «Վեդաները, Ավեստան, Հոմերոսը կամ հրեից Ս. Գիրքը և նույնիսկ Ղուրանը սուկ կրոնական գրքեր չեն. նրանք ամփոփում են համապատասխան ժողովրդի կենցաղի վերաբերյալ ամեն տեսակ իմաստություններ և խրատներ»²⁷:

Հավատը չի ժխտում գիտությունը, ընդհակառակը նեցուկ է նրա համար և փարոս, որ լուսավորում է նրա հեռավոր ուղին:

Հայագետի կարծիքով գիտատեխնիկական առաջընթացն ու հավատքը՝ ճշմարիտ կրոնը, չեն հակասում միմյանց. «Ազգությունները հավետ հիշատակ են թողնում պատմության մեջ իրենց անհատականությամբ՝ այն հատկությունների միահամուռությամբ, որոնցով որոշվում են մյուսներից»²⁸:

²⁵ Ն. Ադոնց, Երկեր, հտ. 2, էջ 49:

²⁶ Նույն տեղում, էջ 50:

²⁷ Նույն տեղում, էջ 52:

²⁸ Նույն տեղում, էջ 55-56:

Բավականին աղմկահարույց հոդված է եղել Ադոնցի 1911 թ. Թիֆլիսի «Մշակ» թերթում լույս տեսած «Կաթողիկոսական ընտրություն և մամուլ» խորագիր ունեցողը:

Հոդվածում բացատրվում է, թե ավատական կարգերում հայ եկեղեցու պաշտոնյաները ևս մի տեսակ հոգևոր նախարարներ էին, և նրանցից շատերը նշանավոր նախարարական տներից էին: Մինչդեռ նախարարներին փոխարինող ներկա բուրժուազիան, գործոն դասակարգ չէ և հեռացել է եկեղեցուց, ու եկեղեցին մնացել է գյուղական ու մանր քաղաքացիական ժողովրդի ձեռքում. «Եթե քահանան տգետ է, ոչնչով չի զանազանվում իր համագյուղացուց. եթե կրթված է, նույն աշխարհական ինտելիգենտն է: Ժամանակակից հոգևորականը և աշխարհականը հարազատ եղբայրներ են և՛ արյունով, և՛ մտքով»²⁹:

Գրագետ, ազգանվեր հոգևոր դասը եղել է և մնում է հայ ժողովրդի գոյության երաշխավորը, և այդ հարցում խիստ կարևոր է Ամենայն Հայոց հայրապետի դերը, որը ոչ թե ազարակներ պետք է ջրի, ավագուտներ շենացնի, «եղուկ» դպրոցներ հիմնի, ուր չեն հաճախում Հայոց հայրապետին քննադատողների զավակները: Նրա դերը հետևյալն է. «Ամենայն Հայոց հայրապետն ամենից առաջ ընդհանուր հայության վերին պահապանն է, նրա տառապած, բայց անաղարտ խղճի վկան աշխարհի առաջ՝ մարմնացած նշանաբանն ամենուրեք տարագիր ազգի բարոյական միություն»:³⁰

1938 թ. Ադոնցը հիշատակի խոսք է ասել Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեգյանին նվիրված սգահանդեսի ժամանակ: Խորեն Ա. Մուրադբեգյանը Մտալինի անձի պաշտամունքի ժամանակաշրջանի բռնությունների զոհերից է³¹: Իր խոսքում Ադոնցը վերստին շեշտում է համայն աշխարհի հայության համար Էջմիածնի Մայր Աթոռի կատարած դերը և Էջմիածնի Ս. Կաթողիկե եկեղեցին

²⁹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. 2, էջ 67:

³⁰ Նույն տեղում, էջ 76:

³¹ Տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոսներ, էջ 260:

անվանում է «իր էությանը մարդասիրության անսասան վկայություն, քարից կառուցված Ավետարան»³²: Ամենայն Հայոց Հայրապետի եղերական մահը սգալով՝ հայագետը հիշեցնում է Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հետևյալ խոսքերը.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,

Անե՛ծք նրա չար գործքին...³³:

Ադոնցի երկերի է հատորում, որը պարունակում է մեծ գիտնականի նամականին, մեծ թիվ են կազմում այն նամակները, որոնք ուղղված են իր ապրած ժամանակի նշանավոր հայ հոգևորականներին՝ Բառնաբա սվարդապետ Պիլեզիկճյանին, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին, Ներսես վարդապետ Ակինյանին, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին, Իգնատիոս վարդապետ Աքյանին, որոնցում երևում է գիտնականի սերտ կապը հայ հոգևոր կյանքը հարստացնող դեմքերի հետ:

Նիկողայոս Ադոնցի հայ եկեղեցուն տրված գնահատականներն արդիական են և այսօր էլ ուղեցույց պետք է լինեն և՛ հայ հոգևոր կյանքի ներկայացուցիչների, և՛ հայ մտավորականության ու քաղաքական գործիչների համար:

³² Ն. Ադոնց, Երկեր, հտ. 2, էջ 283:

³³ Նույն տեղում, էջ 284: Տե՛ս նաև Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հտ. 4, Երևան, 1991, էջ 47:



ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

*Խ. Արքայանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի դեկան,
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

Ն. ԱՂՈՆՑԸ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ

Ականավոր պատմաբան, բյուզանդագետ Նիկողայոս Աղոնցը երկան ներդրում ունի հայ և համաշխարհային պատմագիտության մեջ: Նրա երկերի հրատարակիչ Պ. Հովհաննիսյանը նշում է, որ ինչպես Թումանյանը գրականության մեջ, Կոմիտասը՝ երաժշտագիտության, Հ. Աճառյանը՝ լեզվաբանության, Մ. Աբեղյանը՝ գրականագիտության, Ա. Թամանյանը՝ ճարտարապետության, այնպես էլ Նիկողայոս Աղոնցը պատմագիտության ոլորտում անկրկնելի է ու մեծ¹:

Ն. Աղոնցի բանասիրական-աղբյուրագիտական հետազոտությունների մեջ կարևոր տեղ են գրավում Մեսրոպ Մաշտոցին նվիրված ուսումնասիրությունները: Հայտնի է, որ հայոց գրերի գյուտի պատմության երկու գլխավոր սկզբնաղբյուրներ են Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»: Գրերի գյուտի մասին հիշատակում է նաև Ղ. Փարպեցին, որի պատմության այդ հատվածը, ինչպես նշում են մի շարք հետազոտողներ, ամենայն

¹ Ն. Աղոնց, Երկեր, հտ. Ա., Երևան, 2006, էջ 7:

հավանականությամբ որոշակի խմբագրման է ենթարկվել հետագայում²:

Ն. Ադոնցը 1925 թ. «Հանդէս ամսօրեայ»-ի 5-12-րդ համարներում տպագրում է «Անձանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների» հետազոտությունը, որտեղ համարձակորեն քննարկում է և՛ հայոց գրերի ստեղծման ժամանակի հարցը, և՛ գրերը ստեղծող սրբացված Մաշտոցի կենսագրության ընդունված տարբերակը, և՛ նրա կենսագիր Կորյունի մտադրությունների իսկությունը: Ն. Ադոնցը, անդրադառնալով «հայ լուսավորության հայր» Մաշտոցին և նրա աշակերտներին, շրջանառում է իր բնորոշումով «որակով և ծագումով տարբեր նյութեր», որոնք քաղաբերել է ազգային և օտար քաջահայտ աղբյուրներից: Մասնավորապես, հույն և լատին հիշատակարաններում առկա անթաքույց ակնարկներն ու տեղեկությունները լույս են սփռում Մ. Մաշտոցի և նրա աշակերտների կյանքի ու գործունեության կարևոր իրողությունների վրա:

Ն. Ադոնցը նախ քննում է *Մեսրոպ Մաշտոց* հատկանվան գործածության հարցը. «Որքան հաւաստի է Մաշթոց անունը, նոյնքան երկբայելի է Մեսրոբ, աւելի ճիշդ՝ Մեսրոպ: Հին մատենագիրները, Կորիւն եւ Ղազար, գիտեն միայն Մաշթոց անունը, մինչդեռ Խորենացին է առաջինը, որ Մաշթոցի տեղ գործ է ածում Մեսրոպ»³:

Կորյունի երկի մասին Ադոնցն ունի թեական կարծիք: Վարքագրությունը մեզանում թերևս առաջին անգամ է այդքան խիստ գնահատականի արժանանում. «Կորիւնը, որքան ճոռոմաբան, նոյն-

² Փարպեցին Մաշտոցին ներկայացնում է իբրև ավելի համեստ ունակությունների տեր անձնավորություն, որն առանց ուրիշների, առավելապես Սահակ Պարթևի օգնության, ինչպես նաև աստվածային միջամտության չէր կարող հասնել այդպիսի հաջողության:

³ Ն. Ադոնց, Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների, Վիեննա, 1925, էջ 9: Հեղինակն անդրադառնում է նաև Մաշտոց անվան ծագմանը՝ նախնական տարբերակը համարելով Մագդոցը, որը նույնանում է իրանյան mazdak անվան հետ հայերեն –ոց մասնիկի հավելումով:

քան սակաւագէտ է: Գուցէ եւ աւելի գիտէ, քան յայտնում է մեզ: Խոստումնալից յառաջաբանը, ուր ուզում է նաւել «գիամատարած ալեօքն վարդապետական ծովուն», նման է շքեղ մուտքի, որ տանում է մի խեղճ տնակ...»⁴:

Ն. Ադոնցը գտնելով, որ Կորյունի երկը քննության պետք ունի, կասկածի է ենթարկում գրերի գյուտի սկզբնական թվականը և առաջարկում այն որոնել 383-392 թթ. միջակայքում: Նա հիշատակում է Փարպեցու այն պնդումը, որ Վռամշապուհ արքան գահ է բարձրացել Պարսից Շապուհ թագավորի օրոք՝ 383-388 թթ.: Սակայն Կորյունն այլ թվական է հիշատակում՝ 406-407: Ն. Ադոնցը, այս թվականի արժեքը չընդունելով, կռահում է, որ Կորյունի հիշատակած Ամիդի Ակակ և Եդեսիայի Բարիլաս ասորի եպիսկոպոսները 404-406 թթ. շրջանում գոյություն չեն ունեցել և հարկ կա Մաշտոցի օգնող մեկ այլ եպիսկոպոս փնտրելու: Այս առնչությամբ մեջբերենք Շ. Աճառյանի դիտարկումները, որոնք հաստատում են Ադոնցի պնդումներն այն մասին, որ բազմաթիվ վճռորոշ հատվածներում Կորյունը խուսափում է ճշգրտությունից և ընդհանուր դատողություններ կատարում. «Կորյունի պատմածից կարելի չէ հասկանալ, թե այս այցելությունը ճանապարհորդակա՞ն էր, թե՞ ուսումնական. ուրիշ խոսքով՝ արդյոք Եդեսիա երթալու համար քարավանը պարտավո՞ր էր անպատճառ Ամիդ մտնել և այդ պատճառով գնաց Մեսրոպն Ամիդ քաղաքը, թե՞ նպատակ ուներ նաև Ամիդում խուզարկություններ կատարել գրերի գյուտի առթիվ»⁵:

Ըստ Ն. Ադոնցի՝ ազգային գիր ու գրականություն ստեղծելու մեծ մտքով հափշտակված հայ վարդապետը շրջել է Ամիդում, Եդեսիայում, Մամուսատում, ծանոթացել տարբեր հոգևորականների հետ, և չէր կարող զանց առնել նույն շրջանի ամենից հեղինակավոր եկեղեցական հոր Թեոդոր Մապսուեստացուն, որը եպիսկոպոսացել է 392

⁴ Ն. Ադոնց, Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների, էջ 31:

⁵ Շ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 130-131:

թ.: Նշենք, որ Ն. Ադոնցի այս տեսակետը լիովին որդեգրել է նաև Հ. Մանանդյանը: Նա սույն տեսակետը անվանում է «նոր ու հետքքքիր լուսաբանություն, արժանի հատուկ ուշադրության»: Ն. Ադոնցի վեր հանած էական փաստերը, ինչպես նաև այլ հայագետների մեկնաբանությունները համադրելով՝ Հ. Մանանդյանն ավելի ուշ զարգացնում է իր տեսությունը, ըստ որի՝ գրերի գյուտը կատարվել է 390-392 թթ.: Ըստ նրա՝ թեպետ Կորյունի բուն երկում, ինչպես նաև վերջաբանի վերականգնված տարբերակում հայ գրերի գյուտի ժամանակը նշվում է Վռամշապուհ արքայի հինգերորդ կամ վեցերորդ տարին, այդ թվականը պետք է լիներ Վռամշապուհի հինգերորդ տարվա վերջում՝ 391-392 թթ.⁶:

Տարբեր փաստերի համադրությամբ Ն. Ադոնցին թվում է, թե Թեոդորի աշակերտ Ռուբինոսը այլ անձ չէ, քան գրիչ Հռոփանոսը, որը հիշատակվում է գրերի գյուտի պատմության մեջ: Նա գրում է. «Եթե Թեոդորի աշակերտը իբրև սոսկ գրիչ մասնակցում է գիւտին, հարկաւ, նրա ուսուցիչն անէլի շօշափէլի նպաստ պիտի բերած լինէր նոյն խնդրին»⁷: Հիշատակվում է նաև, որ Թեոդորի քահանայությունն անցել է ծննդավայր Անտիոքում, իսկ նրա դասընկերն էր և մտերիմը Յովհան Ոսկեբերանը, որը քահանա էր Անտիոքում: Մաշտոցը, ըստ Ադոնցի, Թեոդորի և Ոսկեբերանի շրջանում է հաջողել հայ գրերի գյուտը, ի տարբերություն Մ. Խորենացու այն հիշատակության, թե հայերը Ոսկեբերանին չեն դիմել: Սրանով Ն. Ադոնցն ընդգծում է որոշ և դրական տարեթիվ՝ 383-392⁸:

Այս դիպուկ ենթադրությունը, սակայն, խիստ անհամոզիչ է համարում Ե. Տեր-Մինասյանը՝ Կորյունի տված տեղեկությունը հա-

⁶ Հ. Մանանդյան, Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջ, «Տեղեկագիր» ՀԳԱ ակադեմիայի, Երևան, 1952, թ. 7, էջ 41-48:

⁷ Ն. Ադոնց, Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների, էջ 42:

⁸ Նույն տեղում, էջ, 42-43:

մարելով առավել ճշգրիտ⁹: Ավելին, Ն. Ադոնցը հետագայում ձևափոխել է իր տեսությունը: Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի առթիվ 1936 թ. հրատարակած հոդվածում նշում է, որ «Մաշտոցի հետազոտությունները հայ այբուբենն ստեղծելու համար... ասարտեցան 405-ին»¹⁰:

Ն. Ադոնցը ընդգծում է, որ Մեսրոպ Մաշտոցը ավելի քան արժանի էր, որ երախտապարտ սերունդը գիտենար նրա կյանքը և նշանավոր հղացման մանրամասները: Հեղինակը, հենվելով Կորյունի փաստերին, ներկայացնում է Մաշտոցի գործունեությունը, սակայն միաժամանակ ընդգծում է, որ Կորյունի պատմությունից հետո էլ «գրերի գյուտը մնում է գաղտնիք»: «Մաշտոցին տանում է Կորյունը ասորական քաղաքները, Ամիդ և այնտեղից Եդեսիա և ուրիշ բան չէ ասում նրա ճանապարհորդության և կամ նրա ելքի մասին, քան այն, որ Եդեսիայում երկար տքնությունից հետո նրան «պարգևեր վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի սուրբ աջովն իւրով նշանագիրս հայերէն լեզուին»¹¹:

Կարծում ենք՝ պատահական չէր, որ Կորյունն առավելաբար ներկայացրել է Մաշտոցի հոգևոր գործունեությունը, չի շոշափել ժամանակի քաղաքական-եկեղեցական հարցերը: Ընդհակառակը, ամեն կերպ փորձել է ընդգծել, որ Մաշտոցին հայ գրերի ստեղծման գործում մեծ աջակցություն են ցույց տվել ասորի և հույն հոգևորականները: Ավելին, Կորյունը նշել է, որ Մաշտոցից առաջ հայ գրերի ստեղծման գաղափարը հղացել է ասորի մի հոգևորական: Այս ամենով նա ձգտել է հասկացնել ասորի և հույն հոգևորականներին՝ օրինակ վերցնելու

⁹ Ե. Տեր-Մինասյան, Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964, հտ. 7, էջ 25-48:

¹⁰ Զեկուցումը գրվել է 1934-35 թթ. Բոյուսելում, լույս է տեսել Փարիզում: Տե՛ս Ն. Ադոնց, Հայացած Աստուածաշունչը եւ անոր պատմական տարողութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1936, թ. 3, էջ 16::

¹¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., Երևան, 2006, էջ 21:

իրենց նախորդներից, բայացական լինել հայ դպրության և նրա ստեղծողի նկատմամբ:

Այս համապատկերում Ն. Ադոնցի այն դիտարկումը, թե Կորյունի «գործը հակաստորական կնիք, նեստորական խորշանք ունի», որ «աստրական նպաստը գրերի գյուտում տիպամբ սքողված է նրա գրչի տակ», չպետք է անվերապահությամբ ընդունել: Ներքուստ այլ հոգևորականության նկատմամբ բացասականորեն տրամադիր կենսագիրը, չէր կարող հակաստորական շեշտեր ներառել իր գործում: Կորյունի նպատակը բոլորովին այլ էր: Ինչպես նկատում է Մ. Աբեղյանը, Կորյունը խուսափել է անգամ *ասորի* բառը օգտագործելուց¹²: Վարքագրության մեջ երկու անգամ է հիշատակվում այն: Առաջինը՝ ասորի Դանիելի մոտ տառեր գտնելու առնչությամբ, երկրորդ անգամ՝ Եդեսիայի և Ամիդի եպիսկոպոսների՝ Մաշտոցին ցույց տրված զգալի օգնության առիթով:

Ն. Ադոնցը «Հայացած Աստուածաշունչը եւ անոր պատմական տարողութիւնը» հոդվածում Մաշտոցի գրերի առնչությամբ ուշագրավ գնահատականներ է տալիս: Ինչպես նշում է պրոֆ. Ա. Դոլուխանյանը, Ադոնցն իրապես նկատել է լատինական «Վուլգատա» և հայերեն Աստվածաշնչի թարգմանությունների հասակակից լինելը: Երկուսն էլ թարգմանվել են հինգերորդ դարի սկզբում, սակայն լատիներեն Աստվածաշնչի թարգմանությունը չունի կարևորության այն աստիճանը, ինչ հայկականը: Հայկական Աստվածաշունչը սկզբնավորեց հայ գրականությունը: Հայաստանը գրերի գյուտով փրկվեց պարսկական լծից, ամրացավ քրիստոնեությունը և խաչի ճառագայթները հակադրեց հարձակողական մագդեգականության կրակին¹³:

Ըստ Ադոնցի՝ հայկական եկեղեցին մարդկային խղճի պահպանն էր և ընդգրկում էր մարդկային մտքի դրսևորման բնագա-

¹² Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատիր. Մ. Աբեղյանի, Երևան, 1981, էջ 14:

¹³ Ա. Դոլուխանյան, Անգլիագիր հայագետները մաշտոցյան գրերի մասին, «Հայագիտությունը դպրոցում», Երևան, 2009, թ. 1-2, էջ 7:

վառները: Ահա ինչու Մ. Մաշտոցը հասկանում էր, որ ունենալ ազգային եկեղեցի, նշանակում էր ունենալ անխառն լեզու և գրականություն: Ն. Ադունցը անդրադարձ է կատարում հայ եկեղեցու եփեսոսյան դավանանքի հիմքերին, որոնք անսասան մնացին դարերի հոլովություն:

Հարկ է նշել, որ Մաշտոցը տեսնելով, որ դժվարանում է վերջնական նպատակին հասնել, վերստին տրվում է պահքին և ճգնությանը՝ «ընթանալով գառ ի վեր ընդ ափունս Եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի դղեակն Պալունեաց»¹⁴: Այս դրյակում նա Մեծ պահոց մի շրջան է անցկացնում, որից հետո տեսնում է, թե ինչպես «գՏէրն հրեշտակաց՝ մարգարեական աչալք, որ գրէր մատնագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ»:

Մ. Մաշտոցը ջանք էր թափում կատարելագործելու այբուբենը նախևառաջ քարոզչության նպատակով: Այս առումով Ն. Ադունցը ամրագրում է այն գաղափարը, որ Մաշտոցի կողմից «նորոգված» գրերը նոր և հզոր միջոց հանդիսացան քրիստոնեության քարոզչության համար: Այդ ընթացքում մի քանի գավառներ առաջին անգամ ընդունեցին քրիստոնեությունը:

Ն. Ադունցի մեկ այլ աշխատությունում հիշատակվում է Բալասական տեղանունը, որն ըստ Կորյունի, գտնվում է Միսականի, Հայաստանի, Աղվանքի և Վիրքի կողքին: Սրանք այն երկրներն են, որոնցում շրջագայել է Մ. Մաշտոցն իր քարոզչական գործունեության ժամանակ¹⁵:

Այսպիսով, Ն. Ադունցն առաջինն է, որ աներկբա վեր է հանում Մաշտոցի անձի և նրա աշակերտների գործունեության վերաբերյալ հետաքրքրական մանրամասներ՝ դրանք դնելով գիտական շրջանառության մեջ: Ն. Ադունցը խնդրո առարկա հիմնահարցին վերաբերող հունական և լատինական աղբյուրների ընդհանրացնող վերլուծու-

¹⁴ Կարապետ Սասնեցի, Ներբողեան, Վաղարշապատ, 1897, էջ 42:

¹⁵ Ն. Ադունց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 250:

թյան հիման վրա ենթադրում է, որ Մաշտոցը գործնական կապ է ունեցել ժամանակի նշանավոր հոգևոր գործիչ Թեոդոր Մապսուեստացու հետ: Եվ քանի որ վերջինիս անունն աղերսվել է Եփեսոսի տիեզերաժողովում բանադրված Նեստորի անվան հետ, Մաշտոցի կենսագիր Կորյունը միտումնավոր սքողել է «ասորական նպաստը գրերի գյուտում»:

Ըստ Ն. Ադոնցի՝ Հայաստանը եղել է այն երկրներից, որ հեշտությամբ է ընդունել Քրիստոսի թեթև լուծը: Հայ եկեղեցին ուժգնորեն է պաշտպանել ինքն իրեն, իր ավանդույթները, վարդապետությունները, ծեսերը, «ամեն ինչ, որ ազգային անհատականությունը կկազմե»: Իսկ քրիստոնեական հայտնության և դավանական ընկալման հետ է զուգորդվում գրոց ծնունդը:

Ն. Ադոնցի գիտական արդարացի, բանական հիմքերով կասկածները բոլոր ժամանակներում, նաև այսօր հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած արժեքներ են, որոնք գիտության մեջ նորանոր ճանապարհներ են բացել:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մաշտոցյան Մատենադարանի
ավագ գիտաշխատող,
Բանասիրական
գիտությունների թեկնածու*

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐԸ

Ականավոր բյուզանդագետ, հայագետ Ն. Ադոնցը (1871-1942)¹ Հայաստանի պատմության կնճռոտ հարցերն ուսումնասիրել է որպես համաշխարհային, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի պատմության և մշակույթի անբաժանելի մաս: Գիտական նյութը ուսումնասիրել, համադրել, վերլուծելուց զատ² նա ստիպված է եղել լրացնել ժամանակի հայագիտության բացը՝ գտնել, ուսումնասիրել համապատասխան աղբյուրներ, հարկ եղած դեպքում՝ հրատարակել: Խնդիրն առավել բարդացել է նրանով, որ հրատարակված շատ նոր գրքեր

¹ Ն. Ադոնցի կենսագրության մասին տե՛ս Պ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնց. մարդը և գործը, «Էջմիածին», 2011, թ. Ա, էջ 101-119; Ա. Դոլոխանյան, Մեծանուն պատմաբան, բյուզանդագետ և հայագետ Նիկողայոս Ադոնցը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2011, թ. 1, էջ 7-21:

² Ն. Ադոնցի գիտական մեթոդի և սկզբունքների մասին տե՛ս Գ. Գիւզալեան, Նիկողայոս Ադոնցը որպես պատմաբան, Անթիլիաս, 1943, էջ 12:

գիտնականին հասել են մեծ ուշացումով³:

Բնատուր ընդունակությունները ⁴, գիտական ղեկավար Ն. Մառի հետ համագործակցությունն ու աշխարհի հայտնի գիտական միջավայրերի հետ տևական շփումները հնարավորություն տվեցին Ն. Ադոնցին հայոց պատմության ուսումնասիրության համար նախապատրաստել գիտականորեն հագեցած այնպիսի հիմք, որն առ այսօր ծառայում է հայագիտությանը և չի կորցրել իր գիտական արժեքը: Դժվար է մատնանշել Ն. Ադոնցի որևէ ուսումնասիրություն, որտեղ ձեռագրագիտական մեծ կամ փոքր գյուտեր չլինեն ⁵: Հայերեն ձեռագրերը երիտասարդ գիտնականին զբաղեցրել են տակավին Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում ուսանելու տարիներից: 1898 թ. Ս. Պետերբուրգի հա-

³ Ա. Մաֆրաստյանը Ն. Ադոնցի մասին հիշում է. «Իր մնայուն գանգատն էր գիրք չունենալը»: Տե՛ս՝ Ա. Հովհաննիսյան, Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմության» ստեղծագործական ճակատագիրը (ծննդյան 130-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2001, թ. 1, էջ 65:

⁴ Ալ. Մանթաշյանի մասին պահպանված է հետևյալ վկայությունը. «Իմ արտասահամանյան սաներիս տալիս եմ բոլորին 50 ռուբլի ամիսն, բայց որովհետև գտնում եք դուք (իմա՛ Կարապետ Եզյանց), որ Նիկողայոսն ավելի պետք է ստանա, ուրեմն դորան նշանակում եմ ամիսն 80 ռուբլի երկու տարի ժամանակով...»: Տե՛ս՝ Ա. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի «Հայկական վարք սրբոց ժողովածուները» անտիպ աշխատությունը, «Աստվածաշնչյան Հայաստան», Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 331 (Ժողովածուի թվային տարբերակն ստացել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի գիտ. քարտուղար, բ.գ.թ. Մայա Գրիգորյանից, որին հայտնում ենք խորին շնորհակալություն):

⁵ Քննության համար հիմք ենք ընդունել Ն. Ադոնցի այն ուսումնասիրությունները և գրախոսականները, որոնք ամբողջությամբ ձեռագրագիտական-բնագրագիտական հարցեր են շոշափում և առնչվում միջնադարյան հայ մատենագրության կոնկրետ բնագրերի հետ: Հոդվածն անհարկի չուճացնելու նպատակով չենք անդրադարձել «Հայաստանը Հուստիանոսի դարաշրջանում» կոթողային աշխատությանը, որի աղբյուրագիտական հենքը քաջ հայտնի է գիտական շրջանակներին, մեծապես հիմնված է այլալեզու աղբյուրների վրա և ինքնին առանձին ուսումնասիրության նյութ է:

մալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը մրցանակաբաշխություն է հայտարարում՝ հետազոտության նյութ առաջարկելով «Հայկական վարք Սրբոց ժողովածուները» թեման, որին մասնակցում է նաև չորրորդ կուրսի ուսանող Ն. Ադոնցը: Ղեկավար նշանակվում է Ն. Մառը, որն, ինչպես հայտնի է, կարևորում և խրախուսում էր իր սաների հե՛նց տեքստաբանական-բնագրագիտական, լայն առումով՝ դասական բանասիրությանն առնչվող աշխատանքները⁶: Ձեռագրագիտական իր առաջին գյուտը Ն. Ադոնցն արել է հայ եկեղեցական տոներին ու սրբերին վերաբերող պրպտումների⁷ արդյունքում, երբ Ն. Մառի երաշխավորությամբ 1898 թ. ձեռագրերն ուսումնասիրելու նպատակով գործուղվում է արտասահման, Վիեննայի, ապա Վենետիկի Մխիթարյանների մատենադարաններում ընդօրինակում և ուսումնասիրում անհրաժեշտ նյութեր: 10 ձեռագիր մանրամասնորեն նկարագրելուց, քննելուց հետո Ն. Մառին ուղղված մի նամակում հայտնում է Հայսմավուրքի 1834 թ. հրատարակության հետ կապված իր կասկածների մասին⁸, որոնք հետագայում, գիտական կուռ ամբողջությամբ հյուսված, ներկայացնում է «Դիտողություններ հայոց Հայսմավուրքների մասին» ֆրանսերեն հոդվածում: Մրցանակաբաշխության խնդիրը Ադոնցն իրականացնում է փայլուն կերպով և պարզևատրվում ոսկե մեդալով, սակայն, հավանաբար չբավարարվելով արդյունքներով, աշխատությունը չի հրատարակում⁹: Այս հսկայածավալ աշխատ-

⁶ Ն. Ադոնցի նամակն՝ ուղղված Գր. Խալաթյանցին. տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հտ. Է, Երևան, 2014, էջ 210:

⁷ Ն. Ադոնց, Դիտողություններ հայոց Հայսմավուրքների մասին, առաջաբանը՝ Պ. Հովհաննիսյանի, թարգմանիչ՝ Մարիաննա Ապրերայան, «Էջմիածին», 2010, թ. Գ, էջ 103-110: Անտիպ են՝ «Տոնացույց» (600 էջ), «Ճաշոց» (հայերեն, 150 էջ) ուսումնասիրությունները:

⁸ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Է, էջ 19: Նա պարզում է, որ Տեր-Իսրայելի խմբագրության վավերական օրինակը Վենետիկի հ^տ: 631-ն է:

⁹ Ըստ Պ. Հովհաննիսյանի՝ Ն. Ադոնցն աշխատանքը չի տպագրել հետագա ճշգրտումներ և հավելումներ անելու նպատակով: Տե՛ս «Աստվածաշնչյան Հայաստան», էջ 330:

տանքի հրատարակված բեկորներից են «Դիտողություններ Հայոց Հայսմավուրքների մասին»¹⁰ հոդվածը և «Հայոց եկեղեցու սրբերն ու տոները» ուսումնասիրությունը¹¹ երկուսն էլ ֆրանսերեն:

«Դիտողություններ Հայոց Հայսմավուրքների մասին» հոդվածում Ն. Ադոնցը խոստովանում է որ «երկար ժամանակից ի վեր» զբաղվելով հայ սրբախոսական երկերի մի քանի տասնյակից ավելի ձեռագրերի «փաստագրական ուսումնասիրությամբ» (իմա՛ ձեռագրերի ուսումնասիրությամբ)՝ հանգել է հետևյալ եզրակացություններին.

1. Հայսմավուրքի՝ Տեր Իսրայելի խմբագրություն համարվող Վենետիկի հ^մ. 710 ձեռագիրը, որն ընկած է Գրիգոր Փեշտըմալճյանի հրատարակության հիմքում¹², «Տեր Իսրայելին վերագրելը սխալ է և անհիմն: Դա Գրիգոր Անավարզեցու Հայսմավուրքի կրկնօրինակն է»¹³, ըստ որի՝ Գրիգոր Դպիրի կողմից Կ. Պոլսի հրատարակության վերագրումը Տեր Իսրայելին պետք է համարել ոչ ճիշտ:

2. Հայսմավուրքներն անցել են խմբագրման չորս փուլ. ա. Տեր Իսրայելի (1240 թ.), բ. Կիրակոս Արեւելցի (1269 թ.), գ. Գրիգոր Անավարզեցի (1295-1306 թթ.), դ. Գրիգոր Խլաթեցի (1425 թ.)¹⁴:

¹⁰ “Revue de l’orient Chrétien”, Paris, 1924, vol. 24, p. 211-218: Հայերեն թարգմանությունը տե՛ս հոդվածիս ծնթ. 7:

¹¹ 30 ձեռագրի համեմատությամբ արված աշխատանքը հրատարակվել է թերի: Տե՛ս N. Adontz, Les fetes et les saints de L’Eglise Arménienne, “Revue de l’orient Chrétien”, Paris, 1927-1928, vol. 26, p. 74-104, 225-278: Այս աշխատությունը արժևորվել և գնահատվել է ճաշոց ժողովածուների այսօրյա լավագույն մասնագետներից մեկի՝ Շառլ Ռընուի կողմից. տե՛ս «Աստվածաշնչյան Հայաստան», էջ 332:

¹² Գրիգոր Դպիր Փեշտիմալճյան, Յայսմաուրք, ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաուրքաց Տեր-Իսրայելի, Կ.Պոլիս, 1834, 291+ 332+ 56 էջ:

¹³ Ն. Ադոնց, Դիտողություններ հայոց Հայսմավուրքների մասին, «Էջմիածին», 2010, թ. Գ, էջ 106:

¹⁴ Մ. Ավդալբեգյանն իր «Յայսմաուրք» ժողովածուները՝ զրքում Ադոնցի եզրակացություններին չի անդրադառնում: Հայսմավուրքի խմբագրման ադոնցյան բաժանումը կիրառում է Ն. Պողարյանը «Ծիսագիտութիւն» աշխատության մեջ: Տե՛ս Ն. Պողարյան, Ծիսագրութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 59:

3. Լատին սրբերի անունները Հայսմավուրք ժողովածուների մեջ ներմուծվել են ավելի ուշ՝ Գրիգոր Անավարզեցու ձեռքով:

Ն. Ադոնցն ուրվագծում է Հայսմավուրքի գիտական հրատարակության հետ կապված այնպիսի անելիքներ, որոնք հնարավոր եղավ իրականացնել միայն վերջերս¹⁵: «Այս չորս խմբագրությունները որոշելուց և գոյություն ունեցող բազմաթիվ ընդօրինակություններից լավագույն օրինակները առանձնացնելուց հետո հեշտ կլիներ հրատարակել Հայսմավուրքը այնպիսի ձևով, որ իրարահաջորդ հավելումները զատորոշվեին իրենց համապատասխան անուններով»¹⁶:

Պ. Հովհաննիսյանի կարծիքով՝ Ն. Ադոնցի ուսումնասիրության վերաբերյալ երկու հատակտորները մեծ ծրագրի բեկորներն են միայն. այս «թեմային աղերսվող բազմաթիվ այլ նյութերի... շուտափույթ ուսումնասիրությունն ու տպագրությունը պետք է դառնան հայագիտության առանջնահերթ խնդիրներից մեկը»¹⁷. Կնշանակի՝ Ն. Ադոնցը դեռ ասելիք ունի իր ընթերցողին:

Գիտական աշխարհում պատահում է, երբ բնագիրն ի՛նքն է գտնում ուսումնասիրողին, այսինքն՝ միայն և միայն գիտնականի անհատական հատկանիշներով պայմանավորված հայտնաբերված բնագիրն սկսում է «ապրել» իր երկրորդ կյանքով, ինչպես օրինակ՝ Եղիշեի «Արարածոց մեկնությունը» Լ. Խաչիկյանի, միջնադարյան շատ և շատ բնագրեր Ասատուր Մնացականյանի, Դիոնիսիոս Թրակացու և նրա «Քերականության» մի շարք մեկնիչների երկեր՝ Ն. Ադոնցի միջոցով և այլն: Այսօրինակ մի քանի բնագրերի «ծնունդով» գիտական աշխարհը պարտական է Ն. Ադոնցին:

¹⁵ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյան, Նախածերենցյան Հայսմավուրքային խմբագրությունները, «Էջմիածին», 2005, թ. Ա., էջ 52-61; Համաբարբառ Յայսմավուրք (նախածերենցյան յոթ խմբագրությունների), հտ. Ա-ԺԲ, աշխատասիրությամբ Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2008-2011:

¹⁶ Ն. Ադոնց, Դիտողություններ հայոց Հայսմավուրքների մասին, «Էջմիածին», 2010, թ. Գ, էջ 110:

¹⁷ «Աստվածաշնչյան Հայաստան», էջ 333:

Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) հ^{մբ}. 659 ձեռագրում (Կանոնագիրք հայոց, 1368 թ.) պահպանված է Գրիգոր Լուսավորչին վերագրվող եզակի կարևորություն ունեցող մի բնագիր՝ «Գրիգոր Պարթևի Հարցարանը» խորագրով, որը գիտական աշխարհին հայտնի դարձավ Գալուստ Տեր-Մկրտչյանի¹⁸ և Ն. Ադոնցի միջոցով:

Նախքան 1913 թ. Գ. Տեր-Մկրտչյանը Ս. Տիգրանյանի միջնորդությամբ այս բնագրի (ՄՄ հ^{մբ} 659) ընդօրինակությամբ տեսրակը (լուսանցքներում՝ ՄՄ հ^{մբ} 778, 2886, 657 ձեռագրերի ընթերցումներով) ուղարկում է Ն. Մառին, վերջինս՝ Ն. Ադոնցին, որն էլ կազմում է համեմատական բնագիր՝ տողատակի ծանոթագրություններով և հրատարակում «Revue de l'orient Chrétien» հանդեսում¹⁹: Հենց այս հրատարակությամբ Գրիգոր Լուսավորչին վերագրվող Հարցարանի բնագիրը հայտնի դարձավ գիտական աշխարհին, որը, սակայն երկար ժամանակ (մինչև Լ. Խաչիկյանի անդրադարձը) հայ գիտական շրջանակին ծանոթ չի եղել: «Գրիգոր Պարթևի Հարցարանը և Եզնիկ»²⁰ խորագրով հոդվածում Ն. Ադոնցն ազդարարում է Գրիգոր Լուսավորչին վերագրվող մի աշխատության գոյության փաստը և նորահայտ բնագիրը քննում Եզնիկի «Եղծ աղանդոց» աշխատության զուգահեռներում՝ հանգելով հետևյալ եզրակացությունը. «Գրիգորի հարցումը հնության հազվագյուտ բեկոր է, որ իր ժամանակին մտել, կլանվել է գրեթե ամբողջովին Եզնիկի գործի մեջ, բայց դիպվածով պահել է և իր անհատական գոյությունը, թաքնվելով կանոնագրքի ծալքերում»²¹: Ն. Ադոնցն առանձին-առանձին քննում է Հարցարանի բնագրի Գ. Տեր-

¹⁸ Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Հտ. Բ, աշխատասիրությամբ Պ.Հ. Հակոբյանի, Երևան, 1998, էջ 8:

¹⁹ N. Adontz, Le questionnaire de sant Grégoire l'illuminateur et ses rapports avec Eznik, "Revue de l'orient Chrétien", Troisième série, tome V(XXV), Paris, 1925-26, N 3 et 4, pp. 309-357.

²⁰ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, Երևան, 2006, էջ 143:

²¹ Նույն տեղում, էջ 170:

Մկրտչյանի նշած 3 ձեռագրերի ընթերցումները և համեմատում Եզնիկի երկի համապատասխան ընթերցումների հետ գիտական այնպիսի անաչառությամբ, որ թույլ է տալիս պնդել. Հարցումը «բուսած է հայ հողի վրա և կազմված է գուտ հայ նյութերից»: Իր դիտարկումների բնագրային ատաղձը բավարար չհամարելով, հարցի վերջնական լուծումը մեծանուն գիտնականը թողել է ապագային: Տասնյակ տարիներ հետո Լ. Խաչիկյանը, հիմնավորելով Ն. Ադոնցի պնդումները, ի թիվս այլ գուգահեռների, ուշադրություն է հրավիրում «Եղծ աղանդոցի» և Հարցարանի աստվածաշնչյան քաղումների էական տարբերությունների վրա. Եզնիկի մոտ դրանք համահունչ են կանոնական Աստվածաշնչին, իսկ Հարցարանի մեջ՝ «Հարցումի հեղինակը, ամենայն հավանականությամբ, իր ձեռքի տակ ունեցել է Հին և Նոր կտակարանների թարգմանության հնագույն մի օրինակ»²²: Սա կարևոր պնդում է, որ այսօր էլ կարող է իր նպաստը բերել Աստվածաշնչի քննական բնագրի ապագա աշխատանքներին: Այսպիսով, Լ. Խաչիկյանը Ն. Ադոնցի այն հարցին, թե «արդյո՞ք հնարավոր է հայ ֆոլկլորի թանկագին էջերը պարունակող «Հարցմունք Գրիգորի» հիշատակարանը... տանել զետեղել հայ դպրության արևածագին», պատասխանում է. «այո, կարելի է. ավելին՝ այն կարող է զետեղվել միայն և միայն հայ դրպության սկզբնավորման առաջին տասնամյակներին, հանդիսանում է հայ ինքնուրույն մատենագրության ցարդ հայտնի հնագույն հուշարձանը և գրվել է, հավանաբար, Մեսրոպ Մաշտոցի կողմից»²³:

²² Լ. Խաչիկյան, Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես հայ մատենագրության երախայրիք, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964, թ. 7, էջ 305:

²³ Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964, թ. 7, էջ 311: «Մատենագիրք հայոց» մատենաշարում Հարցմունքը տպագրված է Գրիգոր Լուսավորչի անվան տակ: Տե՛ս հտ. Ա, Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 3:

Հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը ²⁴ մշակութային կապերի կոնկրետ դրսևորումների մեջ շարունակում էր մնալ հայագիտության կարևոր հարցերից մեկը, և աղբյուրների ավելի մանրամասն, ձեռագրագիտական-բնագրագիտական քննությունը սպասված էր: Ն. Մառի պնդմամբ Ն. Ադոնցն ուսումնասիրության թեմա է ընտրում հույն մտավոր աշխարհում հայտնի Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունը և նրա հայերեն մեկնությունները²⁵: Այս երկը մեծապես ազդել է հայ քերականական մտքի ձևավորման վրա, կարևորվել և թարգմանվել է հայերեն՝ սկիզբ դնելով քերականական մեկնությունների, որոնց ուսումնասիրությունը թույլ է տվել Ն. Ադոնցին քննել հայերեն թարգմանության հեղինակային, բնագրային հարցեր և հունաբան դպրոցին վերաբերող ընդհանրական երակացություններ անել²⁶:

1911 թ. Ն. Ադոնցի խնդրանքով Կայսերական գիտությունների ակադեմիայի պատվերով Էջմիածնից բերված քերականական բովանդակությամբ երեք ձեռագիր մատյանները²⁷ բավարար նյութեր չտվեցին: Ն. Ադոնցը 1911-1913 թթ. ստիպված մեկնեց Վենետիկ, Վիեննա, Էջմիածին՝ Դիոնիսիոսի Քերականության ընդօրինակությունների ստեղծում ծանոթանալու նպատակով: Շուրջ 30 ձեռագրի քննության հիման վրա նա հեղինակեց աղբյուրագիտական մի իսկական գլուխգոր-

²⁴ Ն. Ադոնցն արդեն մեծ ներդրում ուներ այս ասպարեզում “Армения в эпоху Юстиниана: Политическое состояние на основе нахарарского строя” (С.-Пб., 1908) աշխատությամբ:

²⁵ Н. Адонц, Диониссий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915; Ն. Ադոնց, Երկեր հինգ հատորով, Հտ. Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ. Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին, թրգմ. և ծնթ.՝ Օլգա Վարդազարյանի, Երևան, 2008, էջ XIII-CLXXXIII, բնագիրը՝ էջ 1-305, ծնթ. էջ 425-448:

²⁶ Ն. Ադոնցի հրատարակած բնագրերը և հունաբանության հետ կապված դիտարկումները լայնորեն կիրառված են Գ. Մուրադյանի աշխատության մեջ: Տե՛ս Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Երևան, 2010, էջ 8, 9, 34 և այլուր:

²⁷ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Գ, էջ XIII:

ծոց: Բնագրագիտական վերլուծական մեթոդի բժախնդիր կիրառմամբ, որն իրավամբ համարվում է «աղբյուրագիտական հրաշագործություն»²⁸, Ադոնցը վերականգնեց և գիտական շրջանառության մեջ դրեց Դավթի, Մովսեսի, Ստեփանոս Սյունեցու, Անանունի, Համամ Արևելցու մեկնողական բնույթի քերականագիտական աշխատությունները: Այս ուսումնասիրությունը շատ կարևորել է Ն. Մառը՝ գրելով. «Հայկական բանասիրության յուրաքանչյուր ուսումնասիրողի համար, «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները», անկասկած պետք է դառնա սեղանի գիրք»²⁹:

Իր ուսումնասիրության երեք («Ձեռագիր հուշարձանների տեսություն», «Նկարագրած ձեռագրերի դասակարգություն», «Կորած բնագրերի վերականգնում») բաժիններում Ն. Ադոնցը զարգացնում է ձեռագրերի ուսումնասիրության եղանակ, որի միջոցով վերլուծման եղանակով վերականգնեց ու առանձնացրեց բանասիրությանը մինչ այդ անվանաբար հայտնի քերականական աշխատություններ, որոնք ներհյուսված վիճակում պահպանված են Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացի Պլուզի և Եսայի Նշեցու կազմած դասագրքերում³⁰: Ն. Մառը, նկատի ունենալով Ն. Ադոնցի ուսումնասիրության մեթոդի բարդությունը, միաժամանակ բազմաճյուղությունը, այն բնորոշում է մեկ բառով՝ «խճանկարային»:

²⁸ Բնորոշումը «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» աշխատության հայերեն թարգմանիչ Օ. Վարդապարյանինն է: Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հտ. Գ, էջ 428:

²⁹ Из рецензии на докторскую диссертацию Н. Адонца “Диониссий Фракийский и армянские толкователи” (С.-Петербург. 1915 г.); Новый взгляд на историю Армении, Сборник статей, посвященных творчеству Николая Адонца, Санкт-Петербург, 2009. с. 40: Ավելորդ չենք համարում նշել՝ «սեղանի առաջին գիրքը», որ մեր թեկնածուական ատենախոսության համար որպես միջնադարյան բնագրերի ուսումնասիրության դասագիրք հանձնարարել է գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Դուրվասնյանը, եղել է Ն. Ադոնցի այս ուսումնասիրությունը:

³⁰ Եսայի Նշեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 5:

Ն. Մառն իր սանի գիտական սխրանքին տալիս է շատ նուրբ բնորոշում. այս աշխատանքը «հույժ արգասալից ազդակ է»³¹ պարունակում և չի սխալվում: Միա՛յն Դավթի բնագրի հետ կապված ադոնցյան դիտարկումները հնարավոր դարձրին Գ. Ջահուկյանի հայտնաբերած՝ Դավթի մեկնության մի շարք համեմատություններ և դիտարկումներ³²: Միա՛յն և միա՛յն Ն. Ադոնցի ամենախիստ քննական մոտեցումը հնարավոր դարձրեց 1950-ականներին մի շարք քերականների աշխատությունների հրատարակումը (Լ. Խաչերյանը հրատարակեց Ն. Ադոնցից արծարծված մեկնությունների բոլոր բնագրերը³³): Հիրավի, Ն. Ադոնցի գիտական սխրանքի իսկական գնահատականները:

Որպես համաշխարհային մշակույթի գանձ՝ մեծ արժեք են ներկայացնում հնության կնիք ունեցող հայերեն երկու վաղագույն ձեռագրեր՝ Էջմիածնի և Մլքեի Ավետարանները³⁴, որոնք օգնում են լուծել ոչ միայն հայկական, այլ նաև այլ ժողովուրդների մշակութային ժառանգության հետ կապված հարցեր: Ձեռագրական արվեստի այս եզակի նմուշները չեն վրիպել Ն. Ադոնցի ուշադրությունից, որոնց նվիրված հոդվածները հրատարակել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության «Միոն» պաշտոնաթերթում: 1936 թ. «Միոնի» 9-րդ համարում խմբագրակազմն ուրախությամբ ողջունում է Ն. Ադոնցի առաջին՝ «Փղոսկրյա Ավետարանի արվեստը» հոդվածի հրապարա-

³¹ «Он содержит в высокой степени плодотворное возбуждающее начало». Новый взгляд на историю Армении, Сборник статей, посвященных творчеству Николая Адонца, с. 40: Խորապես շնորհակալ ենք փ.գ.թ. Օ. Վարդապարյանին թարգմանական անհարթությունները շտկելու համար:

³² Գ. Ջահուկյան, Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագրի տեքստը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1956, թ. 3, էջ 241-264: Նույնի՝ Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, 395 էջ:

³³ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Գ, տողատակի ծանոթագրություններ 1-7, էջ 435:

³⁴ Կուրթ Վայցման, Հայկական մանրանկարչությունը X դարում և XI դարի սկզբին, գերմաներենից թարգմանեց Սեդա Մանուկյանը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2017, թ. 24, էջ 285-308:

կումը՝ հույս հայտնելով, թե «այսուհետև իր հայագիտական բաժինը նոր փայլ մը պիտի ստանա մեծանուն բանասերին ուսումնասիրություններով»³⁵: «Փղոսկրյա Ավետարանի արվեստը» Ս. Տեր-Ներսեսյանի «Էջմիածնի Ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը» հոդվածի գրախոսությունն է: Ս. Տեր-Ներսեսյանը եզրակացնում է, թե քննվող Ավետարանի սկզբի թերթերի մանրանկարները հայ ծաղկողի գործ են՝ արված X դարում³⁶: Ձեռագրի հիշատակարանի և համաբարբառ կանոնների քննությունը Ն. Ադոնցին բերում են այն եզրակացության, որ «ընդունելով հանդերձ թե Ավետարանի նկարները հայ արվեստի արդյունք են... պետք է առայժմ առկախ թողնել ժամանակի խնդիրը: Մեր կարծիքով նրանք ժամանակակից չեն ձեռագրին, ավելի ճիշտ ասած, նրա մասը չեն կազմած սկզբից նեթ... Ով գիտե, գուցե նրանց բախտը կապված է եղել փղոսկրե կազմի հետ»³⁷:

Էջմիածնի Ավետարանի շուրջ ծավալված բանավեճը մղում է Ն. Ադոնցին անդրադառնալ նաև Վենետիկի Մխիթարյան մատենադարանի գարդ՝ Մլքեի Ավետարանի ժամանակին: Մլքեի Ավետարանի գրության ժամանակի ճշգրտումը ձեռագրագիտության այնպիսի լուծումներից է, որ վկայում է ուսումնասիրողի փայլուն պատրաստվածության, գիտական ողջ ներուժի և ստեղծագործական երևակայության մասին:

Մլքեի Ավետարանի գրության ժամանակի հարցում հայագետները համակարծիք չեն եղել. Ղ. Ալիշանն ու Հացունին գրության թվական համարում էին 902-ը, Բարսեղ Սարգսյանը՝ 852-ը: Եվ այս բոլոր տարաձայնությունները կապված էին հնագրության հետ. գրչության նշված «ՅՕՄ Թ. Արաց իը, ք Արեգ գ, ե» թվականը տարբեր կերպ էր ընթերցվում: Ն. Ադոնցը, որ Հայսմավուրքների, Ճաշոցների ուսումնասիրության արդյունքում հրաշալիորեն տիրապետում էր տոմարա-

³⁵ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 612:

³⁶ Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 55:

³⁷ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 485:

կան հաշվարկներին³⁸, կարևորում է գրչի աննշան, սակայն «արտակարգորեն կարևոր պարագան: Այստեղ է թաքնված վիճելի հարցի ճշմարիտ բանալին»: Գրիչն սկսել է ընդօրինակել ձեռագիրը Արաց ամսի երկուշաբթի 28-ին և ավարտել Արեգ 6ի հինգշաբթի: Ն. Ադոնցը տումարական հաշվարկների իր սկզբունքով դիտարկում է գրչության թվականի հետ կապված շրջանառվող բոլոր վարկածները՝ ստուգելով, թե որ տարում է Արաց 28-ը եղել երկուշաբթի և Արեգի 6-ը՝ հինգշաբթի: Կուռ տրամաբանությունը Ն. Ադոնցին բերում է այն եզրակացության, որ «Մլքե թագուհու Ավետարանը գրված է ո՛չ 851 և ո՛չ 902 կամ 922, այլ 862 թվին, հոկտեմբեր 19-ից մինչև նոյեմբեր 26-ը, սկսված երկուշաբթի և վերջացրած հինգշաբթի»³⁹: Այս հաշվարկների համաձայն Մլքե թագուհու Ավետարանը «այսուհետև անցնում է Լազարյան ճեմարանի Ավետարանից Մլքե թագուհու Ավետարանին, 25 տարով ավելի ծեր, քան առաջինը»⁴⁰: Այս թվականն անվերապահորեն ընդունվել և այսօր շրջանառվում է⁴¹ որպես Մլքե թագուհու Ավետարանի գրչության թվական:

Հայերեն ձեռագիր մատյանների նկատմամբ Ն. Ադոնցը ցուցաբերել է նաև գործնական մոտեցում. ցանկությունը մեկն է եղել, որ աշխարհով սփռված հայերեն ձեռագրերի հավաքածուներն ի մի բերվեն և հանգրվանեն հայրենի հողում:

1918 թ. Խորհրդային կառավարության կողմից Մոսկվայի Հայկական ինստիտուտի հետ կապված ծրագիր էր՝ միավորել Լազարյան ճեմարանի, Մոսկվայի Հայկական եկեղեցիների գրադարանները և Ս. Էջմիածնի մատենադարանի հարուստ հավաքածուն, որ այն ժամա-

³⁸ Տումարական հաշվարկների նույն եղանակն է կիրառում Դիոսկորոսի մահվան տարվա հետ կապված՝ Գ. Տեր-Մկրտչյանի ձեռագրական սխալ ընթերցումն ուղղելիս և խոստովանում. «Ուրախ եմ, որ այդպես կենտրոնացած էք տումարի ուսումնասիրության վրա, մի ժամանակ ես էլ խիստ հետաքրքրած էի և մեծ կարևորություն էի տալիս»: Տե՛՛ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Է, էջ 68:

³⁹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 489:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 732:

նակ գտնվում էր Մոսկվայում, և մուծել Ալեքսանդր III կայսեր անվան գրադարանի ֆոնդերի մեջ, իսկ հայկական բաժնի տնօրեն նշանակել պրոֆ. Ադոնցին, որի անունը 1918 թ. հունիսից Մոսկվայի Հայկական ինստիտուտի դասախոսների ցուցակում էր: Ադոնցը կտրականապես մերժում է այդ ծրագիրը «փորձելով համոզել կոմիսարներին, որ հանցագործություն է հայերեն ձեռագրերի այդ եզակի հավաքածուն ռուսական գրադարանի ֆոնդերի մեջ մուծելը»⁴²: Ի պատասխան Ն. Ադոնցի մտահոգությանը՝ Մովսես արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը մեծանուն գիտնականին ուղղված շատ ջերմ նամակի վերջում իրեն պարտավորված է համարում հատուկ շեշտել, որ հայերեն ձեռագրերն ապահովաբար ապաստանել են հայրենիքում (1922 թ.)՝ Էջմիածնի մատենադարանում⁴³:

Ն. Ադոնցը հայագիտության Խաչատուր Աբովյանն է, հայ ժողովրդի պատմության գիտական համակարգողն ու իմաստավորողը. «Հայաստանն իսկ է Նիկողայոս Ադոնց... Անոր լաւագոյն յատկանիշներուն մարմնացումը, անոր մարդկային պատկերը» (Մուշեղ Իշխան):

⁴² Պ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնց. մարդը և գործը, «Էջմիածին», 2011, թ. Ա, էջ 108-109:

⁴³ Պ. Հովհաննիսյան, Արժեքավոր վավերագիր Մայր Աթոռի 1920-ական թվականների կացության վերաբերյալ (Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նորահայտ նամակը պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցին), «Էջմիածին», 2001, թ. Բ-Գ, էջ 103:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Ընդհանրապես շատ քիչ մանրամասներ ունենք միջազգային հոշակի տեր բյուզանդագետ և հայագետ Նիկողայոս Ադոնցի կյանքի մասին: Չնայած 2006 թվականից սկսած Երևանի պետական համալսարանը սկսեց հրատարակել Ադոնցի գիտական ժառանգությունը ամփոփող ութ հատորները, շնորհիվ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի տրամադրած աջակցության, սակայն այդ հատորներում գիտնականը չնչին անդրադարձ ունի իր անձնական կյանքին:

Այս առումով իսկական հայտնություն են Մուշեղ Իշխանի հուշերը, որոնցում տաղանդավոր ձևով պատմվում է մեծ գիտնականի կյանքի որոշ դրվագների մասին¹:

Կենսագրական որոշ փաստեր Ադոնցն իր մասին հաղորդել է «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» բացառիկ ուշագրավ հոդվածում²: Այս հոդվածից իմանում ենք, որ Ն. Ադոնցը Դավիթ Բեկի զինա-

¹ Տե՛ս Մ. Իշխան, Երեք մեծ հայեր, Պէյրոթ, 1952, 98 էջ:

² Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա, Երևան, 2006, էջ 547-554:

կից քահանա Տեր Ավետիքի ծոռն է և ունի ազնվական ծագում: Նրա մայրը՝ Դանա Ռոստոմբեկյանը, նույնպես ազնվական ծագում ուներ և դուստրն էր Մելիք Մանուչարի եղբայր Ռուստամ բեկի³:

Ադոնցը ծնվել է 1871 թ. Սյունիքի Բռնակոթ գյուղում: Նա սովորել է Տաթևի վանքի դպրոցում, Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: Ալեքսանդր Մանթաշյանի նշանակած կրթաթոշակով կրթությունը շարունակել է Ս.Պետերբուրգի համալսարանի միանգամից երկու բաժիններում: Ուսումնառության ընթացքում եղել է Մոսկվայում ու Եվրոպայի մի շարք կարևոր կենտրոններում՝ Փարիզ, Լոնդոն, Վիեննա, Վենետիկ, Սյունիսեն և այլուր, ուր հաճախել է գրադարաններ և մասնակցել տարբեր համալսարանների դասընթացների՝ լեզուների մեջ խորանալու և բյուզանդագիտությամբ զբաղվելու համար: 1904-1920 թթ. նա Ս. Պետերբուրգի համալսարանի դասախոս էր: Սկզբում՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» կոթողային մագիստրոսական թեզը պաշտպանելուց հետո, դառնում է համալսարանի պրիվատ-դոցենտ, իսկ 1915 թ., երբ պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը՝ «Դիոնիսոս Թրակացին և հայ մեկնիչները», նրան տրվում է դոկտորի և պրոֆեսորի աստիճանն ու կոչումը:

1920 թ., երբ Ռուսաստանում տեղի էր ունեցել 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունը, և երկիրը ղեկավարում էին բոլշևիկները, Ադոնցը դիմում է նոր կառավարությանը՝ արտասահման մեկնելու և գիտական գործունեություն ծավալելու համար, սակայն պատասխան չստանալով՝ մի խումբ ռուս մտավորականների հետ հեռանում է Ռուսաստանից՝ այնտեղ չվերադառնալու վճռական որոշմամբ: Այս տարագրությամբ է նաև բացատրվում Ադոնցի անձնական կյանքին վերաբերող փաստերի բացակայությունը:

Վերոհիշյալ կենսագրական փաստերը պարունակող հոդվածից պարզ է դառնում Ադոնցի մտահոգությունը հայ-թուրքական հա-

³Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա, էջ 587:

րաբերությունների շուրջ: Մեծ գիտնականը նաև մեծ հայրենասեր էր. դա ընդգծված է Մուշեղ Իշխանի հուշերում, ինչպես և նրա հասարակական ու գիտական գործունեության մեջ: 1915 թ. երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունից հետո նա եղել է Հայ դատի երդվյալ պաշտպաններից մեկը: Տեր Ավետիքի ծոռը լինելուն և իր Ադոնց ազգանունը բացատրող նույն հոդվածում նա, որ մանկությունն անցկացրել էր Սյունիքում և լսել էր հայ գյուղացիների պատմությունները, 1937 թ. Բոստոնի «Հայրենիք» պարբերականում տպագրված հոդվածում կարծես մարգարեաբար պատգամում է սթափ լինել և չթույլատրել, որ թուրքերը շարունակեն կողոպտել ու ոչնչացնել հայերին. «Քոչվորները մեծ վնասներ են պատճառում հայ գյուղերին, արտերը արածացնելով և աշնան սարից իջնելիս խառնում են իրենց ապրանքին հայ գյուղացիների անասուններին և քշում դեպի իրենց ձմերանոցը: Կուրի ավերից լեռնային Արցախի վրայից բարձրանում են մինչև Սիսիանի և Նախճավանի սահմանագլուխ սարերը»⁴: Այս նույն երևույթը, ցավոք, առկա է նաև հիմա և՛ Արցախում, և՛ Զանգեզուրի սահմանային գյուղերում:

Մուշեղ Իշխանը Հայոց ցեղասպանությունից հրաշքով վերապրածներից էր: 1938-1940 թթ. Բրյուսելի համալսարանում հետևել է մանկավարժության և գրականության դասընթացներին: 1931-1941 թթ. Ադոնցն աշխատում էր Բրյուսելի համալսարանում և հայագիտության ամբիոնի վարիչն էր: Այդ ամբիոնը բացվել էր հատուկ նրա համար: Ահա այդ տարիներին էլ Մուշեղը շփվել է Ադոնցի հետ և, բարեբախտաբար, հետագա սերունդներին է ավանդել նրա կերպարը՝ որպես գիտնականի, դասախոսի և իսկական հայրենասեր հայի:

Բրյուսելի համալսարանում Ադոնցը այն երևելիներից էր, որոնցով համալսարանը պարծենում էր: Այս փաստի մասին է խոսում այն տարակեզու պարբերականների ցանկը, որոնց տարբեր համարներում հայ գիտնականը հանդես էր գալիս ամենատարբեր բնույթի

⁴ Ն. Ադոնց, Երկեր, Ա, էջ 554:

գիտական հոդվածներով՝ պատմություն, գրականություն, բանասիրություն, լեզվաբանություն, հնագիտություն, արվեստ և այլն: Նա գրում էր հայերեն՝ արևմտահայերեն և արևելահայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն: Այդ հանդեսներն են՝ «Արձագանք», «Հանդես ամսօրեայ», «Արարատ», «Բանբեր գրականութեան եւ արուեստի», «Նոր Դար», «Մշակ», «Յուշարձան», «Բազմավեպ», «Հայրենիք» (ամսագիր), «Հայրենիք» (օրաթերթ), «Յառաջ», «Ազդարար», «Ապագայ», «Զվարթնոց», «Հայ մշակոյթի օրը», «Վեմ», «Միոն», «Յուսաբեր», «Անահիտ», «Ակօս», «Անդաստան», “Византийский временник”, “Записки восточного отделения императорского русского археологического общества”, “Журнал Министерства народного просвещения”, “Христианский Восток”, “Новая жизнь”, “Международная политика и мировое хозяйство”, “The New Armenia”, «Revue de L'Orient chrétien», «Armeniaca», «Revue des études arméniennes», «Byzantinische Zeitschrift», «Byzantion», «Annuaire de L'institut de philologie et D'histoire orientale», «Revue des études indoeuropéennes» և այլն⁵:

Այսբան մեծ դիպացոնի տեր գիտնականը, որի անունը հայտնի էր Եվրոպայի գիտական աշխարհում, պետք է դասավանդեր Մ. Իշխանին: Նախապես նա գիտեր, որ Ադոնցն արդեն ծերության շեմին է և իր մտապատկերում նրան տեսնում էր հետևյալ ձևով. «Պրոֆեսոր տիտղոսն ինձ համար խրտնեցնող բան ունէր իր մեջ: Երևակայում էի տեսնել խոժոռ դեմքով, ճաղատ գանգով, մորուքի ու ակնոցի զույգ հեղինակությամբ պաշտպանված մի ծերունու»⁶: Մինչդեռ տեսնում է ձիգ կազմվածքով, հաճելի ժպիտը դեմքին, մողայիկ, կոկիկ հագնված, խիտ սպիտակ մազերով, դեմքը թարմ սափրած, համակրելի մի տղամարդու, որն իր տարիքից շատ երիտասարդ էր երևում:

⁵ Ն. Ադոնց, Երկեր, Ա, էջ 7-8:

⁶ Մ. Իշխան, նշվ. աշխ., էջ 6: Մ. Իշխանի գրքից կատարված մեջբերումները դարձրել ենք արևելահայերեն – Ռ.Դ.:

Երկրորդ անակնկալն այն էր, որ Ադոնցն ապրում էր Բրյուսելի հարուստ թաղամասում՝ համալսարանին մոտ գտնվող ծառագարդ փողոցի վրա, որտեղ կային գեղեցիկ առանձնատներ, ու քաղաքի այդ մասն իր ծառերով, ծաղկանոցներով, հրաշալի շենքերով թվում էր անդորրավետ մի պուրակ: Ահա այդ թաղի պանսիոն կոչված ու ծաղկանոցով շրջապատված մի գողտրիկ շենքում էլ իր բնակարանն ուներ Ադոնցը:

Նույնքան հիացմունք պատճառող էր Ադոնցի կացարանը՝ ընդարձակ, մաքրությունից փայլող, կոկիկ կահավորված և ամենուր գրապահարաններ, որոնցում գրքերը շարված էին իրենց դարակների վրա: Գիտությամբ զբաղվող մարդու համար զարմանալի կարգ ու կանոն: Միանգամից պարզ է դառնում, որ գիտնականը կարգ ու կանոնի սիրահար է: Մ. Իշխանը, որը տեսել էր Արշակ Չոպանյանի սենյակը Փարիզում, միանգամից տեսնում է երկու նշանավոր մտավորականների կենցաղային տարբերությունը: Չոպանյանի սենյակը կորած էր թափթփված գրքերի ու թղթերի մեջ:

Ադոնցը հաճույքով է ընդունել Մ. Իշխանին ու նրա ընկերոջը, հետաքրքրվել Սիրիայի ու Լիբանանի հայ երիտասարդության կյանքով, հատկապես մանրամասներ հարցրել իր վաղեմի ընկերների՝ Լևոն Շանթի ու Նիկոլ Աղբալյանի մասին, որոնց գիտեր դեռ Գևորգյան ճեմարանից: Այդ երկուսն էլ իր նման մանկավարժներ էին, հայրենասերներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Նրանք նույնպես հիանալի կրթություն էին ստացել Եվրոպայում:

Թեպետ Ադոնցը այլևս Հայաստան չկարողացավ գալ, սակայն իր տեսադաշտում պահեց թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքահայության կյանքի ընթացքը:

Հուշերից իմանում ենք, որ Ադոնցի շնորհիվ շատ հայ երիտասարդներ գնում էին Բրյուսելում սովորելու, և Բրյուսելը դարձել էր հայ ուսանողության համար նոր Ժնև: Բրյուսելի համալսարանում սովորող բոլոր հայ ուսանողների նկատմամբ Ադոնցն ուներ հատուկ գուրգուրանք: Առաջին հերթին ջանում էր, որ վերջիններս ուսումնա-

տենչ լինեն, և օտար երկրում հիացմունք առաջացնեն և՛ իրենց գիտելիքներով, և՛ վարքագծով, և՛ արժանապատվությամբ: Անկախ նրանից, թե որ ֆակուլտետում էին սովորում հայ ուսանողները, Ադոնցը նրանց համար շաբաթը երկու անգամ կազմակերպում էր գրաբարի ու հայոց պատմության դասեր. «Ադոնցի անունը գիտական հմայքի ձգողություն ուներ»⁷:

Մուշեղի ընկերն ավելի վաղ էր ընդունվել համալսարան և ասում էր, թե Ադոնցն իր գիտելիքներով բարձր է համալսարանի այլ պրոֆեսորներց. «Բոլորին ջուրը կտանի ու ծարավ հետ կբերի»:

Տեղին է մեջբերել Ադոնցի մի բանաձևումը բանասիրության մասին. «Չկարծեք,- ասել է նա,- թե գյուտերը միայն քիմիական կամ մեքենագիտական աշխարհի մեջ են տեղի ունենում: Մեծագույն գյուտն է, և հանճարեղ մտքի գյուտը, երբ մի բանասեր հաջողեցնում է մի բառի վրա հիմնված ժողովրդի քաղաքակրթության անցյալ մեկ շրջան վերականգնել կամ ցեղաբանական կազմությունը ճշտել և կամ մի դեպք իր ժամանակաշրջանի մեջ տեղավորել»⁸:

Ադոնցն իր դասախոսություններում այնպես էր խոսում և այնպիսի փաստերով, որ չգիտես ինչպես, ինչ ձևով դուրս էր ցայտում մեր նախնիների կյանքի և գործի մեծությունը: Հետաքրքիր է Մուշեղ Իշխանի այն վկայությունը, ըստ որի՝ հայագետը չի ընդունել Տիգրան Մեծի որդու դավաճան լինելու մասին տարածված կարծիքը: Ադոնցը հիշեցնում է, թե Տիգրան Մեծը Տիգրան Կրտսերին էր թողնելու գահը, և վերջինս գնացել էր Պոմպեոսի մոտ բարեխոսելու հոր համար և ոչ թե՝ դավաճանելու:

Այդ դեպքի մասին հայ պատմիչները ոչինչ չեն գրում, իսկ օտարները փորձել են նսեմացնել Տիգրան Մեծին ու նրա որդուն: Այս դեպքերի մասին գրել է հույն պատմիչ, փիլիսոփա Պլուտարքոսը (ծն. մոտ 45, մահ. 127), որի պատմության՝ Պոմպեոսին վերաբերող հաս-

⁷ Մ. Իշխան, նշվ. աշխ., էջ 9:

⁸ Նույն տեղում, էջ 12:

վածում կարդում ենք. «Այդ միջոցին Պոմպեոսը ներխուժեց Հայաստան, ուր նրան հրավիրում էր երիտասարդ Տիգրանը: Վերջինս արդեն ապստամբել էր հոր դեմ և Պոմպեոսին դիմավորեց Արաքս գետի մոտ: ...Երբ արքան (Տիգրան Մեծը – Ռ.Դ.) ձիով եկավ հասավ ճամբարի մոտ, Պոմպեոսի երկու լիկտորներ մոտենալով նրան՝ հրամայեցին ձիուց ցած իջնել ու ոտքով գնալ, քանի որ երբեք հռոմեական ճամբարում ձիավոր չէին տեսել: Տիգրանը հնազանդվեց և նույնիսկ սուրն արձակելով՝ հանձնեց նրանց: Վերջապես, երբ արքան կանգնեց Պոմպեոսի առաջ, հանեց իր խույրը՝ մտադիր լինելով դնել զորավարի ոտքերի մոտ, և որ ամենամոթալին է, ծունկի գալ նրա առաջ: Պոմպեոսը, սակայն, հասցրեց բռնել արքայի աջ ձեռքը և իր կողմը քաշել: Ապա նրան նստեցրեց իր կողքին, իսկ նրա որդուն մյուս կողմում նստեցրեց: Պոմպեոսն արքային հայտնեց, թե նրա նախկին բոլոր դժբախտությունների համար մեղավորը Լուկուլլոսն է եղել, որը նրանից խլել է Ասորիքը, Փյունիկյան, Կիլիկիան, Գալաթիան և Սովետները: Այն հողերն էլ, որոնք դեռ մնացել են նրան, թող տիրի՝ հռոմեացիներին հասցրած վիրավորանքի համար վճարելով յոթ հազար տաղանդ, իսկ Սովետներում թագավոր կլինի նրա որդին»⁹:

Ադոնցը հայոց պատմությունը մշտապես դիտարկել է միջազգային նշանակության առումով:

Չնայած Ադոնցը 70 տարեկանն անց էր, սակայն ունեցել է թարմ ու վառվռուն մտածողություն: Դասախոսելիս երբեք տեսրի չի նայել, խոսել է շատ հստակ, սահուն ու առանց կանգառի. «Հայաստանը կարծես Նիկողայոս Ադոնցն էր, նրա լավագույն հատկանիշների մարմնացումը, նրա մարդկային պատկերը: Նա հայ տղամարդ էր՝ բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով»¹⁰:

⁹ Պլուտարքոս, Երկեր, ռուսերենից թարգմանեց Համո Հարյանը, Երևան, 1987, էջ 258-259:

¹⁰ Ս. Իշխան, նշվ. աշխ., էջ 17:

Մեծ հայագետը Հայաստանը օտար երկրներում ներկայացրել է ըստ արժանվույն՝ միաժամանակ շրջապատին փոխանցելով հայ հոգու ազնվական բույրը և մեր լեռների խրոխտ շունչը: Նա գիտեր արժևորել իրեն ու իր ազգը՝ օտարներին պարտադրելով հաշվի նստել այդ իրողության հետ: Ձգտել է, որ իր ուսանողները ձերբազատվեն օտարին ստորադասվելու տխուր զգացումից: Պրոֆեսոր Ադոնցի փափագն էր հայ ուսանողին տեսնել ներկայանալի հագուստով, գիտելիքի առաջընթացի մեջ: Ամեն հայ ուսանողի հաջողությունն ընդունել է հոգեկան բերկրանքով: Տանել չէր կարողանում, եթե հայը խղճալի տեսք էր ունենում:

Հիանալի գիտեր ողջ պատմական Հայաստանը, ոտքով ու ձիով շրջել էր որպես հնագետ, երբեմն որպես հետաքրքրասեր ճանապարհորդ:

Բոլորովին չէր սիրում իր անձի շուրջ հոչակ սարքելը: Մ. Իշխանը պատմում է հետաքրքիր մի դեպք: Հայտնի բյուզանդագետ, հայագետ Անրի Գրեգուարը (1881-1964), որը 20 օրվա մեջ կարող էր նոր լեզու սովորել և այդ լեզվով դասախոսություն կարդալ, նոր էր վերադարձել Ամերիկայից ու Բրյուսելի համալսարանում դասախոսություն էր կարդում: Նա նշել է, թե Ադոնցը աշխարհի բյուզանդագետների համար հայտնագործել է նոր աշխարհ: Նա միջազգային բյուզանդագիտությունը հարստացրել է հայ մատենագիրներից քաղած նյութերով¹¹:

Ադոնցը մշտապես մասնակցում էր հայերի ցեղասպանության սգահանդեսներին, որոնք մեծամասամբ հենց ինքն էլ կազմակերպում էր և հանդես էր գալիս խիստ ազդու և հակիրճ խոսքով:

Հատկապես այսօր Արցախի պատերազմի ազգակործան կապիտուլացիայից հետո նոր սերունդն արժի, որ հիշի Ն.Ադոնցի 1929 թ. ապրիլի 24-ի սգահանդեսի խոսքը, որը ուղարկել է հետո «Յառաջ» օրաթերթին:

¹¹ Մ. Իշխան, նշվ. աշխ., էջ 21:

«Մեծ դաշնակիցներն ամեն տարի տոնում են իրենց հաղթանակը, նրանք միշտ ծաղիկներով զարդարում են իրենց նահատակների գերեզմանը, իսկ մե՞նք: Մենք ամեն տարի հավաքվում ենք ոչ թե մեր հաղթանակը տոնելու, այլ մեր պարտությունը սգալու:

Ես կոզեկոչեմ մեր անթաղ մեռելիների ուրվականները, որպեսզի տեսնեմ, թե ինչպես հարգալիբ կտոնենք իրենց հիշատակը:

Մեր զոհերը ջարդվեցին նրա համար, որ գերադասեցին ապրել իբրև Հայ և ոչ թե իբրև ստրուկ: Հերոսը նա է, որ արհամարհում է մահը հանուն որևիցե բարձր գաղափարի: Մեր ապրիլյան նահատակները գնացին միանալու Հայոց պատմության մյուս անհամար զոհերին, որոնք իրենց արյունը տվին՝ պահպանելու համար հայությունը և նրա քաղաքակրթությունը: Գաղութների մեջ մեր պարտականությունն է պահպանել մեր գոյությունը: Չկա հաղթանակ՝ առանց պարտության: Երբ որևէ ծառի ճյուղերը կտրում են, այն թարմ ծիլեր է արձակում: Ձեզնից յուրաքանչյուրը պետք է կատարի իր պարտականությունը՝ հանուն ազատագրության»¹²:

Ադոնցը սիրել է աշխարհիկ կյանքը: Նա ամուսնացած էր Հովնաթանյաններից սերող Հուրի Հովնաթանյանի հետ, որը օպերային երգչուհի էր, և «Յառաջ» թերթը գովեստով է գրել Փարիզում նրա հաջողությունների մասին: Հուրին ամուսնուց բավականին երիտասարդ էր: Ադոնցը պաշտում էր իր կնոջը, որը հաճույքով նկարագարում էր ամուսնու գրվածքները: Սակայն Հուրին անբուժելի հիվանդության պատճառով երկու տարի տառապելուց հետո վախճանվում է 1935-ին: Ադոնցն անձամբ է խնամել իր կնոջը և ամեն տարի Ջատիկի տոնին մեկնում էր Փարիզ՝ կնոջ գերեզմանին ծաղիկներ դնելու:

Գիտնականը սիրում էր օրվա լրագրերը կարդալ սրճարանում: Նա վերցնում էր սուրճը, ծխում հավայական սիգարը՝ չնայած երբեք մոլի ծխող չէր և կարդում թերթերը: Եղել է շատ հաճելի գրուցակից, որովհետև շատ զարգացած էր և ուներ գիտելիքների անսպառ

¹² Ն. Ադոնց, Երկեր, հտ. է, Երևան, 2014, էջ 131-132:

պաշար: Նկարչությունը, երաժշտությունը, գեղարվեստական գրականությունը և, հատկապես, քաղաքական ու ազգային խնդիրները լայնորեն լցնում էին նրա ազատ ժամերը:¹³ Խոսում էր ամեն ինչից, բացի իր անձից ու գործերից: Սիրում էր վերհիշել Գևորգյան ճեմարանի ուսումնառության տարիները և զվարճալի դրվագներ էր պատմում կաթողիկոսներից ու նրանց խորհմաստ պատմություններից:

Շատ բարձր էր գնահատում ազգային եկեղեցու դերն ու արժեքը հայ կյանքում: Ադոնցը չի ընդունել խորհրդային կարգերը՝ չնայած կողմ էր հայերի ռուսական կողմնորոշմանը: Հեղափոխությունից հետո Ռուսաստանը դարձել էր աթեիստական երկիր. քանդվում էին քրիստոնեական տաճարներն ու եկեղեցիները: Նույնը կատարվում էր Հայաստանում: Ադոնցը հիացողն էր հայ ճարտարապետության, որի վկայությունը Հայաստանի հոգևոր շինություններն էին: Հայաստանում եկեղեցու դերը նվազել էր: Սիրում էր հայ եկեղեցու տոները՝ հատկապես Ծննդյան և Զատիկի, և ուսանողներն այդ օրերին ծաղկեփնջերով այցելում էին սիրելի պրոֆեսորին:

Հայ բանաստեղծներից սիրում էր Հովհաննես Հովհաննիսյանին և Ավետիք Իսահակյանին: Շատ բարձր էր գնահատում Սիամանթոյի պոեզիան¹⁴: Նա ջատագովն էր ազգերի քաղաքական անկախության. դա համարում էր ազգային մշակույթի ծաղկման առաջին պայման: Շարունակ մտածելով իր ազգի, իր երկիր Հայաստանի մասին՝ դժվարանում էր նրա ապագայի համար կանխագուշակումներ անել:

Ադոնցն ատում էր պատերազմը: Սա հասկանալի է, որովհետև հենց Առաջին համաշխարհային պատերազմից օգտվելով Թուրքիան իրականացրեց Հայոց ցեղասպանությունը, հետո Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով յուրացրեց Արևելյան Հայաստանից հսկայական տարածքներ՝ ստիպելով նաև Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանի գավառը տալ նորաստեղծ Ադրբեջանին:

¹³ Մ. Իշխան, նշվ. աշխ, էջ 26:

¹⁴ Նույն տեղում, էջ 34:

Գիտնականի կյանքի ավարտը համընկավ Երկրորդ աշխարհամարտին: Այդ օրերին Մ. Իշխանին ասել է. «Երանի թե գետինը ճեղքվեր, գրքերովս, սեղանիս և աղոտ ճրագովս ինձ իր հետ առներ, չլսեի այս բոլորը, կարողանայի աշխատել հանդարտ սրտով և վերջացնեի ծրագրած գործս»¹⁵: Նա ծրագրել էր գրել «Քննական պատմություն Հայոց» չորս հատորից բաղկացած աշխատությունը և արդեն ավարտում էր առաջին հատորը: Հայաստանի պատմությունը գրում էր ֆրանսերենով, որպեսզի հրատարակվի ֆրանսերենով և շատերը կարդան: Մուշեղը գրքի էջերին տեսել է ուրարտական շրջանի ամանների ու իրերի պատկերներ, որոնք նկարել էր Ադոնցի կինը:

Հայագետը համոզված է եղել, որ իր շարադրած «Քննական պատմություն Հայոց» գիրքը հետագայում կթարգմանվի հայերեն: Նա իրավացի էր: Գիրքը ֆրանսերենով լույս է տեսել հետմահու՝ Փարիզում 1946 թ.: Առաջաբանը գրել է Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ռենե Գրուսեն, որն իր հիանալի առաջաբանն ավարտում է հետևյալ բնութագրականով. «Դա հռչակավոր գիտնականի կողմից մի փառավոր նվեր է իր հայրենակիցներին, քանի որ Ադոնցը նրանց վերադարձնում է մոտավորապես տասը դար: Մա Ադոնցի՝ մահվան ժամին ընծայած արքայական պարգևն է իր երկրին, որի պատմությունը նա կրկնապատկում է»¹⁶:


Մուշեղ Իշխանը խորապես ամոսոսում է, որ միջազգային հռչակի տեր գիտնականը չի հանգչում իր պաշտելի հայրենի հողում. «Ադոնցի տեղը Հայաստանի պանթեոնն է՝ անմահների հանգստարանի մեջ»¹⁷:

Ներկայումս Միսիան քաղաքում երախտագետ սիսիանցիները կանգնեցրել են Ադոնցի արձանը, որի հեղինակն է մեծատաղանդ քանդակագործ Արտաշես Հովսեփյանը:

¹⁵ Մ. Իշխան, նշվ. աշխ, էջ 37:

¹⁶ Ն. Ադոնց, Երկեր, Դ, Երևան, 2009, էջ 30:

¹⁷ Մ. Իշխան, նշվ. աշխ, էջ 41:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական
գիտությունների թեկնածու*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

Նիկողայոս Աղոնցը այն գիտնականներից է, որը ստացել է համակարգված կրթություն: Նրա կրթական ուղին ընթացել է շատ հետաքրքիր: Տաթևի վանքի դպրոց, չմոռանանք, որ այդ վանքում է եղել Գրիգոր Տաթևացու համբավավոր համալսարանը: Այնուհետև ուսումը շարունակել է Գևորգյան ճեմարանում: Այդ հաստատությունում սովորողներն ուսումնասիրում էին գրաբար, ռուսերեն, գերմաներեն, բնագիտություն, տիեզերագիտություն, մաթեմատիկա, Հին և Նոր Կտակարաններ, Հայոց եկեղեցու պատմություն, եկեղեցական երաժշտություն, տրամաբանություն և այլն: Դպրոցն ավարտելուց հետո նա արդեն տրիապետում էր ռուսերենին, որպեսզի սովորեր Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: Դրանից հետո Մանթաշյանի կրթաթոշակով սովորել է Մանկտ Պետերբուրգի համալսարանի միանգամից երկու ֆակուլտետներում՝ ավարտական ունենալով գերազանցության վկայականը:

Մանկտ Պետերբուրգում սովորելու տարիներին Նիկողայոս Մառի օժանդակությամբ և Մանթաշյանի դրամական միջոցներով մեկնել է Եվրոպա, կատարելագործվել ֆրանսերենի, անգլերենի, գեր-

մաներենի և բյուզանդագիտության մեջ: Այդ նպատակով դասընթացներ է վերցրել Մորբրնի, Օքսֆորդի, Սյունիսենի համալսարաններում, պարապել Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Վենետիկի գրադարաններում: Շարունակական նամակագրական կապի մեջ է եղել Մառի հետ: 1898 թ. օգոստոսի 10-ին Վենետիկից գրած նամակում Մառին հայտնում է, որ իր վրա հատկապես մեծ տպավորություն են թողել Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության երկու հայերը՝ Ալիշանն ու Զարբհանայանը:¹ Փարիզում, Լոնդոնում, Սյունիսենում և Եվրոպայի այլ կենտրոններում Ադոնցը կապեր էր հաստատում նշանավոր հայագետների ու բյուզանդագետների հետ: Մառին գրած նամակներից մեկում հայտնում է, որ Սյունիսենից մեկնել է Ստրասբուրգ՝ պրոֆեսոր Հյուբշմանին հանդիպելու համար²:

Ապագա մանկավարժը, որը 1916-1920 թթ. պրոֆեսոր էր Սանկտ Պետերբուրգի համալսարանում, իսկ 1931-1942 թթ. գլխավորում էր Բրյուսելի համալսարանի հայագիտության ամբիոնը, իր գիտական ու մանկավարժական գործունեությանը նախապատրաստվել էր շատ պատասխանատու ձևով:

Մանկավարժի համար՝ հատկապես, եթե պատրաստվում է իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները մատուցել բարձրագույն դպրոցում, պարտադիր է խոր և հստակ գիտելիքներ ունենալը: Այս կարևորագույն ճշմարտությունը մշտապես ուղեկցել է Ադոնցին: 1902 թ. Լոնդոնից գրված նամակում, որն ուղղված էր Ն. Մառին, նամակագիրը ներկայացնում է իր գիտական նպատակների իրականացման ընթացքը: Անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել VI-IX դարի բյուզանդացի պատմիչների գրածը՝ հայերի ու Հայաստանի մասին: Նա հունարենով կարդացել է Ամմիանոս Մարկելլիհնուսի (IV), Թեոփանես Խոստովանողի (IX), Պրոկոպիոս Կեսարացու (VI) պատմությունները, որոնք ծավալուն տեղեկություններ են հաղորդում Հա-

¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. է, Երևան, 2014, էջ 20:

² Նույն տեղում, էջ 34:

յաստանի մասին: Պրոկոպիոս Կեսարացու պատմությունը հունարենից հայերեն է թարգմանել նշանավոր բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը: Պատմության մի հատվածը, որում պատմվում է Արշակ Երկրորդի Անհուշ բերդում ինքնասպան լինելու մասին, նույնությամբ քաղված է Փավստոս Բյուզանդի «Հայոց պատմությունից»: Ահա այդ հատվածը. «Դա արքային շատ դժվար դրության մեջ գցեց, որովհետև նա ստիպված էր խախտել վաղեմի օրենքը, սակայն ցույց տալու համար, որ իր խոսքի տերն է, թույլ տվեց, որ խնդիրքը կատարվի: Արքայի թույլտվությամբ նա մտավ Անհուշ բերդը, համբուրեց Արշակին և երկուսը գրկախառնված ողբացին իրենց ճակատագիրը և հազվիհազ իրարից բաժանվեցին: Ողբից հետո հայր լողացրեց Արշակին և արեց ինչ որ ընդունված էր, հագցրեց նրան արքայական հանդերձանքը ու բազմեցրեց բազմոցի վրա: Այնտեղ Արշակը արքայավայել, ըստ նախկին սովորության, հյուրասիրեց ներկա եղողներին: ...Պատմում են, որ այն ժամանակ Արշակն ասել է, որ լավագույն օրն է անցկացրել, հանդիպել է իր ամենասիրած մարդուն, և որ այլևս ի վիճակի չէ տանել կյանքի տառապանքները: Այդ ասելուց հետո ինքնասպանություն է գործել այն դանակով, որ ճաշկերույթի ժամանակ դիտմամբ թաքցրել էր»³:

Հրաչ Բարթիկյանը հայերեն է թարգմանել նաև Թեոփանես Խոստովանողի պատմությունը՝ կցելով ընդարձակ առաջաբան և փաստահարուստ ծանոթագրություններ: Առաջաբանում ունի հետևյալ արժեքավոր նկատումը. «Ահա հիմնականում Թեոփանեսից ենք իմանում, որ VII դարի երկրորդ կեսին և հատկապես ամբողջ VIII դարի ընթացքում բանակաթեմերի ղեկավարությունը հիմնականում վստահված էր հայազգի նշանավոր գործիչների, որոնցից շատերը անհայտ են հայ պատմիչներին: Այդ գործիչներից ոմանք տիրանում

³ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, կազմ.՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Արքահամյան, Երևան, 1981, էջ 491-492: Տե՛ս նաև Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 317-319:

են անգամ բյուզանդական կայսեր ծիրանքին ու գայիսունին»⁴: Նույն առաջաբանի վերջում բյուզանդագետը ներկայացնում է մի ծավալուն ցուցակ այն հայերի, որոնք VII-IX դարերում բյուզանդական պետության մեջ եղել են երևելի դեմքեր⁵:

Ադոնցը նույն նամակում նշում է, որ հանգամանալի պետք է հետազոտի նաև հետևյալ պատմիչներին՝ Փավստոս, Փարպեցի, Եղիշե, Սեբեոս, Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի, Ասողիկ⁶:

1929 թ. անհայտ անձին ուղղված նամակում Ադոնցը կարծիք է հայտնել, թե հայ գրողների կյանքը հաճախ վավերագրական ձևով չի ներկայացվել, այլ գրվել է այնպես, ինչպես կուզեին, որ լիներ: Այդ նամակում նա հայ գյուղը մոտիկից ճանաչելու առումով Համաստեղին դնում է խաչատուր Աբովյանի և Պերճ Պռոշյանի կողքին⁷:

Հայտնի է, որ նշանավոր գրողների կյանքի պատմությունը սերտորեն կապվում է նրանց ապրած ժամանակի պատմական և քաղաքական իրադարձություններին: Դրա համար էլ թե դպրոցներում, թե հումանիտար ուղղվածություն ունեցող ֆակուլտետներում պարտադիր է իմանալ նաև գրողի ուսուցանվող կենսագրությունը: Երբեք հնարավոր չէ ճշգրիտ բացատրել Մովսես Խորենացու ողջ ստեղծագործությունը, եթե պատմությունից չքաղվի նրա կրթության մատենագրական նախասիրությունների հեղինակային վկայությունները: Նույն ձևով չենք կարող Ֆրիկի բանաստեղծությունների թեմատիկան ճշգրտորեն մեկնաբանել, եթե չխորանանք վերջինիս բանքերում եղած ինքնակենսագրական փաստերի մեջ: Խաչատուր Աբովյանի ու Միքայել Նալբանդյանի կյանքի ոչ երկարատև ընթացքի փոթորկուն դեպքերը հիմք են նրանց ստեղծագործությունները ճիշտ

⁴ Բյուզանդական աղբյուրներ, Հտ. Դ., Թեոփանես Խոստովանող, Թարգմ. բնագրից, առաջաբ. և ծանոթագր. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1983, էջ XVIII-XIX:

⁵ Նույն տեղում, էջ XLVIII-L:

⁶ Ն. Ադոնց, Երկեր, հտ. է, էջ 47:

⁷ Նույն տեղում, էջ 135:

հասկանալու: Այդ հանգամանքին մեծապես նպաստում են դասական գրողների հոբբեյանների հասարակական լայն հնչեղությամբ նշելը:

1930 թ. հոկտեմբերի 23-ին «Ապագայ» օրաթերթի խմբագրությանն ուղղված նամակում գիտնականը պահանջելով հիշեցնում է, որ անհրաժեշտ է մեծ շուքով նշել Միքայել Նալբանդյանի և Ռաֆայել Պատկանյանի ծննդյան 100-ամյակները. «Երկուսն էլ գաղութահայ զավակներ են՝ ծնված Նոր Նախիջևանում, անգուգական դեմքեր, որ մանավանդ ներկա պայմաններում խրախուսիչ օրինակներ են տարաաշխարհիկ հայության համար, մշտավատ ջահեր՝ նրա գիտակցությունն ու գործունեությունը պահելու և առաջադրելու հայրենի ուղիների վրա»⁸: Փարիզի Հայ գրական միությունը 1930 թ. հոկտեմբերի 31-ին «Գիտնականների միության» դահլիճում կազմակերպել է հիշատակի երեկույթ, որին հրավիրվել է նաև «Անահիտ» հանդեսի խմբագիր Արշակ Չոպանյանը⁹:

Ծանոթ լինելով Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Լոնդոնի, Փարիզի, Վենետիկի, Վիեննայի, Սյունիսենի կրթական, գիտական կենտրոններին՝ Ադոնցին հայտնի էին նաև հին աշխարհի կրթական օջախները: Նա, ըստ հայ պատմիչների, հատկապես հիմք ընդունելով Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» մեծարժեք վարքագրությունը, գրել է Մեսրոպ Մաշտոցի, հայ գրերի, Մաշտոցի այցելած օտար երկրների մշակութային կենտրոնների ու վերջիններիս կրթական ու մշակութային դերի մասին. «Եթե գրերի առթիվ նա (խոսքը Մաշտոցի մասին է-Գ.Մ.) այցելել է հիշյալ քաղաքները և մանավանդ Եդեսիա, ժամանակակից լուսավորության կենտրոնը, հայտնի իր աստվածաբանական բարձր դպրոցով, համենայն դեպս այցը եղել է 420 թվականից շատ առաջ, 406 թվականին գրերը արդեն պատրաստ էին, և նրանց հոգսը վերջացած»¹⁰:

⁸ Ն. Ադոնց, Երկեր, հտ. է, էջ 136:

⁹ Նույն տեղում, էջ 137:

¹⁰ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, Երևան, 2006, էջ 30-31:

Հատկապես լեզվաբաններին ու գրականագետներին են ուղղված մեծ թվով հետազոտություններ, որոնց փաստերով ու դրույթներով պետք է ուսուցանվեն բանասիրական ֆակուլտետների ուսանողները:

Ադոնցը պարբերացնում է հայ միջնադարյան գրականության ընթացքը. «Չնայելով հայ պատմական կյանքի խեցբեկ վիճակին՝ մեր գրականությունը պահել է որոշ չափի կանոնավորություն կամ հաջորդականություն իր զարգացման ընթացքին: Կարելի է ասել, եվրոպականին համընթաց է: Ունի հին շրջան, միջին տաղասացիկ շրջան, կեղծ-դասականություն և ռոմանտիզմ»¹¹:

Այս տեսական հարցերը նա շոշափել է «Պեշիկթաշյան և կցորդ խնդիրներ» հոդվածում:

Ադոնցը հիանալի գիտեր եվրոպական գրականությունը. դրանք կարդացել էր բնագրերի լեզուներով: Նա համոզված պնդում էր, թե հայ միջնադարը զարմանալի ընդհանուր գծեր ունի եվրոպական գրականությունների հետ: Արևմուտքի հետ հայ միջնադարի գրականությունը հեռացավ զբաբարից, որն անհասկանալի էր դարձել համընդհանուր հայությանը և տեղ տվեց աշխարհաբարին՝ միջին հայերենին: Չպետք է մոռանալ, որ աշխարհականների լեզվով գրող տաղասացները ժամանակակիցն էին Դանթեի և Պետրարկայի. «զբաբարը մնաց, լատիներենի նման, եկեղեցականության գանձ առավելապես»¹²:

Այնքան ճշգրիտ է պատկերում գիտնականը գրական տարբեր մեթոդների մեկը մյուսին փոխարինելը: Հույնի համար երկինքը բաժանված չէր երկրից: Երկինքն ամփոփվում էր Օլիմպոս լեռան վրա, որտեղից աստվածներն իջնում էին Աթենքի փողոցներում և անձնատուր լինում այնպիսի գործերի, որոնց համար XX դարում մարդկանց ոստիկանություն կտանեին: Այդ ծայրահեղ իրապաշտությունն էլ ծնեց

¹¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 545:

¹² Նույն տեղում:

համապատասխան արվեստ, որին հատուկ էր բնականությունը: Ես եղել եմ Փարիզի Լուվրում, Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում և տեսել հունական անտիկ արվեստի բազմաթիվ սպիտակ մարմարից քանդակված արձաններ, որոնց մարմնական բնական ձևերը հիացմունք են պատճառում, ինչպես, օրինակ, Արտեմիսի արձանը Լուվրում: Այս անտիկ արձաններում քանդակագործը արվեստ է դարձնում այն, ինչ մարդը տեսնում է իրականում:

Միջնադարը բերեց նոր աշխարհատեսություն: Մարդն այլևս բնության ունկնդիրը չէ: Առաջ է գալիս հոգին, որն այլևս գերի չէ արտաքին աշխարհի: Միջնադարի մարդու համար երկինքը հեռու է՝ լի հրաշքներով ու տեսիլներով: Այժմ մարդը ձգտում է կտրվել երկրից ու բարձրանալ հավերժական ու երազային երկինքը: Բնականից կտրված միջնադարյան մարդու երևակայությունը սավառնում է երկնքի խորքերը: Միջնադարի գրականության հերոսները դառնում են սրբերը, որոնք մերժում ու արհամարհում են երկրային կյանքը և ընտրում հոգու հավերժական կյանքը երկնքում:

Միջնադարում քրիստոնեական կրոնական տեսիլների ու գրույցների կողքին հայտնվում են բանավոր գրականության իրական կյանքից եկող գրույցները, դյուցազնավեպերը, քնարերգությունը, լեգենդները և կամաց-կամաց խառնվում միջնադարի գրավոր գրականությանն ու արվեստին:

Ադոնցը միջնադարի գրական որոշ տեսակներ կոչում է զանանցական, որը մի քանի դար անց պետք է ունենար հակադեցիկ ուղղություն՝ շրջելով գրողների և արվեստի մարդկանց ուշադրությունը դեպի հին դարերի բնականությունը. «...գրական միտքը դարձավ և կանգնեց հին դասականության վրա՝ աշխատելով ընդօրինակել վաղուց մեռած աշխարհայացքի մեծ վարպետներին»¹³:

¹³ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 544:

Մարդկությունը շուտ ձանձրացավ հավակնոտ դասականության դրսևորումներից և նորից, սակայն նորովի, շրջվեց դեպի քրիստոնեական երազանքները:

Ադոնցը վկայում է, որ XVIII դարի վերջերին հռչակավոր Հերդեր գիտնականն ապացուցեց, որ բոլոր կիրթ ազգերն անցնում են նման հանգրվաններով և ունեն իրենց դասական, ռոմանական, կեղծ-դասական և ռոմանտիկ շրջանները:

Հայագետը հայ գրականության կեղծ-դասականությունը կապում է Մխիթար Սեբաստացու հետ, որը գրում էր գրաբարով: Մխիթար Սեբաստացին գրել է աշխարհաբարի առաջին քերականությունը. «Եթե այդ վայրկյանին, մի գերագույն ներշնչումով, ընդուներ աշխարհաբարը որպես գրական լեզու, այսօր մենք չէինք տառապիլ լեզվական երկվությունից և կունենայինք մի և հառաջացած լեզու և ճոխ գրականություն»¹⁴: Մխիթարյանների նպատակն էր կենդանացնել հնության հիշատակները և այդ ձևով շունչ տալ հին լեզվին: Եվ Մխիթարյանները հենց գրաբարով ստեղծեցին «Հայկ դյուցազն» երկը, որը դասականության կլասիցիզմի դիպուկ օրինակ է:

Հայ գրականության հաջորդ դպրոցի ծնունդը վերապահված էր Խաչատուր Աբովյանին: Իր հղացման համար Աբովյանը պարտական էր գերմանական կրթությանը: Աբովյանի քայլը խիզախ էր, չմոռանանք, որ նա երազում էր սովորել Վենետիկի Մխիթարյան միաբանության դպրոցում և դառնալ հոգևորական. «Նոր լեզուն աղաղակում է հայի «Վերք»-երը, թաթավում է հայ միտքը ռոմանտիզմի ավազանում և ստեղծում նոր գրականություն: Քիչ հետո նույն բանը կատարում է արևմտյան հայության մեջ հայր Ալիշանը»¹⁵: Ադոնցը Աբովյանին համարում է ռոմանտիզմի հրաբուխ, որը նման է Մասիսին և Արարատյան դաշտի մեջ ժայթքեց՝ արձակելով կրակ ու բոց և բերեց նոր գրականությունը: Հետաքրքիր է, որ հայագետը ուսուցչու-

¹⁴ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 545:

¹⁵ Նույն տեղում, 546:

թյունը համարում է մանկավարժական գործունեություն և ոչ բուն հասարակական¹⁶:

Միքայել Նալբանդյանը և Խաչատուր Աբովյանը եղել են հայ ազգի մեծագույն նվիրյալները և Ադոնցի հիացմունքի անձերն են. «Նալբանդյանը թանկ է հայության համար երկու մեծ գաղափարով՝ համազգային քաղաքացիական (իմա՝ գրական) լեզու, և համայն հայրենիք, գաղափարներ, որ ցայժմ էլ մնում են մեր նվիրական ձգտումների այնքան փափագելի հեռակետերը»¹⁷:

Հետաքրքիր ձևով Ադոնցը 1931 թ. «Հայրենիք» ամսագրում տպագրված այս հոդվածում սահմանում է, թե ինչ է հայրենասիրությունը, և ինչ է ազգասիրությունը. «Ազգասիրությունը հատուկ է գաղթահայությանը և իր կերտած բառն է, որ ուրիշ լեզվում չկա և որ, թերևս, ջնջվելու է հայ քաղաքական բառարանից: Նա քայքայում է հայրենասիրության գաղափարը»¹⁸:

Լիովին գրականագիտական ուղղվածություն ունի 1937 թ. Բրյուսելում գրված «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմքը և գաղափարախոսական արժեքը: Ադոնցը «Դավիթ Բեկ» պատմավեպը չի համարում Ռաֆֆու լավագույն գործը: Լեզուն հասարակ է, պարզ, շեշտը՝ ազդու և անկեղծ, մտքերը՝ վեհ, քաջության, հայրենասիրության, ազատության գաղափարները հասցված պաշտամունքի¹⁹:

Ադոնցը լրջորեն ընդդիմախոսում է Ստեփանոս Շահումյանին, որն իրեն է վերագրում Դավիթ Բեկի ազատագրական կռիվները կազմակերպելու դերը. «Գործի նախաձեռնությունը Ստեփանը վերագրում է իրեն: Այս կետը ավելի քան կասկածելի է: Ստեփանը իրեն հանձնարարում է որպես մի անձ, «որ էր սիրելի յաչս Դաւթի վասն

¹⁶ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 556:

¹⁷ Նույն տեղում, էջ 558:

¹⁸ Նույն տեղում, էջ 561:

¹⁹ Նույն տեղում, էջ 504:

ազնուականութեան և քաջության»: Բայց մեծ դեր չունի պատերազմների մեջ և չէ հաշվում նշանավոր զորավարների թվում»²⁰:

«Դավիթ Բեկի պատմությունը» գրել է Վենետիկի միաբանության անդամ Ղուկաս Սեբաստացին, որը ժամանակակիցն էր Սյունիքում Դավիթ Բեկի գլխավորությամբ տեղի ունեցած ազատագրական պատերազմի դեպքերին և անձամբ լսել է Ստեփան Շահումյանի և ուրիշ մասնակիցների պատմածները: Ահա թե ինչ է գրում Սեբաստացին Ստեփանոս Շահումյանի մասին. «Ստեփանոս Շահումյանը, երբ լսում է Գանձակի ու Շամախիի ավերման մասին, Կապանի հիսուն տանուտերերի անունից գրություն է հորինում, նրանց կնիքների նմանությամբ կնիքներ է պատրաստում և գիրը հաստատում է, գնում Վրաստանի իշխանի՝ Սցխեթի ամրոցը՝ օգնություն խնդրելու. հրովարտակի բովանդակությունը այս էր. «Մեզ մի մարդ տուր, որ գորապետ լինի, և մենք հոգ տանենք զորք հավաքելու մասին և դրանով մեր հողը թշնամիներից ազատենք»²¹:

Սեբաստացու գիրքն ավարտվում է «Դավթի զորականներն ու զորքերը» հատվածով, որում թվարկվում են զորավարներն ու նրանց զորքի քանակը: Ահա թե ինչ է ասվում Ն. Ադոնցի մեծ պապի մասին. «Այլև Տեր-Ավետիսը նույն Հալիձորում էր 468 հոգով. այս Տեր-Ավետիսը բազում մեծ սխրանքներ գործեց, ինչպես պատմության մեջ է երևում. շատ քաջ էր ու արիասիրտ և՛ խոսքով հույժ զորավոր, և՛ գործով, և՛ սրա համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Երուսաղեմում, շատերը նրա հայրենի գավառից հորդում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին»²²:

Հոդվածում Ադոնցը ներկայացնում է պատմական անցքերի իր տեսակետն ու փաստերը: Վախթանգ Վեցերորդը, որն այդ թվա-

²⁰ Ն. Ադոնց, Երկեր, Բ, էջ 512:

²¹ Ղուկաս Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 17:

²² Նույն տեղում, էջ 42:

կաններին Վրաստանի տերն էր, հատուկ սեր ուներ հայերի նկատմամբ, խորապես վստահում էր նրանց, հատկապես թիֆլիսահայերին: Հենց նա էլ խրախուսում է Դավիթ Բեկին՝ Հայաստանն ազատագրելու: Վախթանգին հայերին օգնելու խնդրում ոգևորում էր Եսայի կաթողիկոսը. նրանք երկուսն էլ մեծ հույսեր են կապում ռուսաց ցարի՝ Պետրոս Մեծի հետ. «1722 թվի վերջերը Վախթանգի և Եսայի կաթողիկոսի հույսերը ի դերն ելան: Պետրոս Մեծը ձգձգում է իր խոստումը, հայտնելով, որ մինչև չտիրանա Կասպից ծովի եզերքին, չի կարող օգնություն գալ և խնդրում է Վախթանգին միջոտողել պարսից շահի առաջ՝ զիջանել հիշյալ ծովեզերքը ռուսներին»²³:

Անշուշտ, Ադոնցը ծանոթ է Վ. Բելինսկու պատմավեպի տեսությանը և Վալտեր Սկոթի պատմավեպերին անգլերենով: Նա բացատրում է, որ պատմավեպի մեջ հեղինակն իրավունք ունի փոխել գործող դեմքերին. «Գործող անձինք կարող են լինել շինծու, անծանոթ պատմությանը, բայց եթե նրանց նկարագիրը, նրանց ոգին, աշխարհայացքը համապատասխանում են ընտրած պատմական միջավայրին, կլինեն պատմական»²⁴: Ադոնցի կարծիքով պատմավեպերը մանկավարժական նպատակներ ունեն՝ դրանք հեղինակների համար «դասարան են քաղաքական կրթության»: Նա Բաֆֆոնն անվանում է նոր Եղիշե, իսկ Դավիթ Բեկին էլ՝ նոր Վարդան. «Բայց նա տարվել է Եղիշեի շունչով, և նրանից փոխ է առել դավաճանի պատրաստ մտացածին կերպարը: Մելիք Փրանգյուլ նենգում է Եղիշեի Վասակի նման»²⁵: Ադոնցը կարևոր նկատում ունի՝ ազգի անկախությունը ապահովելու համար միայն հայրենասիրությունը քիչ է. «Հարկավոր է ամենից առաջ զինվորական կարողություն»²⁶: Նա իր հոդվածն ավարտում է մի պատգամով, որ հայ ազգը պետք է յուրացնի մշտապես. «Մենք կռվազան չենք և զենք էլ չունենք կռվելու: Բայց սովորենք գոնե

²³ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 518:

²⁴ Նույն տեղում, էջ 522:

²⁵ Նույն տեղում, էջ 527:

²⁶ Նույն տեղում, էջ 528:

զինավարժություն, ծանոթանանք ժամանակակից ահավոր զենքերին, զինվորագրվենք և ոչ թե խուսափենք օտար շարքերում: Օգտվենք պատեհությունից, խոհուն ճակատով և համր բերանով: Ոչ ոք չգիտե, անցքերի թավալզոր անիվը ու՞ր է տանում: Պատրաստ և զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ, կովողների ոտքերի տակ կոխան»²⁷:

Գրականագիտական առումով խիստ ուշագրավ է. «Շահնամեի քաղաքական ավանդը» հոդվածը, որը գրվել է 1935 թ. և տպագրվել «Յուսաբեր» օրաթերթում: 1935 թ. լրանում է պարսիկ հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակը: Ադոնցը հիացմունքով է խոսում իր հայրենիքի վերածնունդը նախապատրաստող Ֆիրդուսու հանճարեղ գործի մասին. «Համենայնդեպս Ֆիրդուսու դարում Իրանի վերածնության հավատը կենդանի էր: Նա գաղափարախոս եղավ գալիք ազատության և վերակենդանացրեց անցյալը ի սպաս մոտիկ ապագայի»²⁸: Գիտնականը հրաշալի է բացատրում «Շահնամեի» համամարդկային բնույթը. «Ֆիրդուսին սիրում է իր կրոնը, բայց մոլեռանդ չէ: Հարգանք ունի բոլոր կրոնների հանդեպ, որովհետև այն հայացքը ունի պատմության վերա, որ ղեկավար ուժը բանականությունն է և ոչ հավատը, որի նյութը, աստվածությունը, անհաս է և անմատչելի մեր քննության»²⁹:

1903 թ. Ադոնցը գրում է «Գրական նշմարներ, դեկադանս և սիմբոլիզմ» հոդվածը, որը հրատարակվել է իր իսկ խմբագրած «Բանբեր գրականության և արվեստի» պարբերականում: Գիտնականը նոր էր վերադարձել արտասահմանից, ծանոթ էր արվեստի ու գրականության մեջ եղած այն մեծ փոփոխություններին, որոնք փոթորկում էին Եվրոպայի արվեստի ու գրականության հասարակությանը: Այդ նորարարությունը դասական գրողները ընդունեցին խիստ զգուշավոր:

²⁷ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 529:

²⁸ Նույն տեղում, էջ 491:

²⁹ Նույն տեղում, էջ 492:

Նրանցից մեկն էր Նոբելյան մրցանակի դափնեկիր Անատոլ Ֆրանսը՝
Հայ դատի ջերմ պաշտպաններից մեկը:

Նոր գրական հոսանքները քննադատել է Լև Տոլստոյը «Что такое искусство?» տրակտատում: Տոլստոյը քննադատում է Շարլ Բոդլերին, որի քնարական ստեղծագործությունն անվանում է *peбyc*, որոնք դժվար է լուծել³⁰: Հենց Շարլ Բոդլերին էլ Ադոնցը համարում է նորարարության գլխավորը. «Նոր գրական շարժման ավետավորը համարվում է Շարլ Բոդլերը»³¹: Գիտնականը գրական շարժումները կապում է փիլիսոփայական մտքի վիճակի հետ:

Անդրե ժիդը արվեստի նոր տեսությունը փոխ էր առել հոշակավոր բանաստեղծ-երաժիշտ Ռիխարդ Վագներից, որը սիմվոլիզմի տեսության վարպետն էր: Տոլստոյը չէր ընդունում Վագների ողջ երաժշտությունը՝ այն ունկնդրին չհամակելու և անհասկանալի լինելու պատճառով: Բոդլերը սիմվոլի դերի մասին գրել է հետևյալ տողերը.

Բնությունը մի տաճար է, ու սյուները կենդանի
Արձակում են երբեմն անմեկին ու մուրճ խոսքեր,
Մարդն անցնում է այնտեղ սիմբոլների անտառից,
Որոնք նրան դիտում են մտերմական հայացքով³²:

Ադոնցը սիմվոլը համեմատում է այլաբանության հետ: Տարբերությունը նրանց ծագման մեջ է: Այլաբանությունը ենթադրում է միտք, խրատ, իսկ սիմվոլը նախ ներկայացնում է բանաստեղծական պատկեր, ապա հաղորդում է իդեան: Գիտնականը բացատրում է գրական նոր հոսանքները՝ նրանցում տեսնելով մարդկային կյանքի տառապանքի թեթևացման ձգտում:

Լիովին մանկավարժական ուղղվածություն ունի Ադոնցի գրախոսությունը՝ նվիրված Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի

³⁰ А.Г. Долуханян, Встречи с русской литературой в Армении, Ереван, 2001, с. 13.

³¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 568:

³² Նույն տեղում, էջ 584:

«Հոգևոր կենտրոններ և Գլաձորի բարձր դպրոցը» ուսումնասիրությունը: Գիտնականը բարձրագույն կրթության առկայությունը համարում է ազգի առաջադիմության, քաղաքական անկախության, նաև պետականություն ունենալու հիմք: Ջաքարյանների շնորհիվ Հայաստանում վերստին ամրապնդվում են որոշ իշխանական տներ: Դրանք են՝ Պռոշյան, Օրբելյան, Դոփյան, Ջալալյան, Վաչուտյան, որոնք լուսաշող աստղեր դարձան Հայաստանի մթին երկնականարում: Շնորհիվ այդ իշխանական տների՝ հնարավոր է դառնում բացել վանքերին կից նոր դպրոցներ: Գլաձորի համալսարանը և նրա ծոցից դուրս եկած սաները պաշտպանեցին Արևմուտքից եկող միաբարական շարժման վտանգից հայ եկեղեցու ինքնությունը, որը նշանակում էր ազգի դիմազօծի, ինքնագիտակցության պահպանում դարերի համար. «Գլաձորի դպրոցականների գիտական թե ազգայնական ոգին մի թանկագին ժառանգություն է ավանդած սերնդեսերունդ, ուսուցչից աշակերտ»³³: Գլաձորի հիմքի վրա բացվում է Տաթևի բարձրագույն դպրոցը՝ Հոհան Ռոտունեցի ու Գրիգոր Տաթևացի մեծ հայրենասեր հայրերով: Այս երկու լուսավոր հոգևոր հայրերը կատարյալ մանկավարժներ էին:

1295 թ. Ստեփանոս Օրբելյանը գումարում է Մեծ Հայքի նշանավոր հոգևորականների ժողով, որը մերժում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու առաջարկը միանալ Հռոմի կաթոլիկ եկեղեցուն: Մերժել Անավարզեցու առաջարկը և հավատարիմ մնալ Հայոց եկեղեցու հավատին խիզախ ու ազգափրկիչ քայլ էր, որ իրականացրեց Ստեփանոս Օրբելյանը՝ պահպանելով նաև հայոց լեզուն, հայ դպրոցը և հայ մատենագրությունը:

Մանկավարժական կարևոր հայացքներ ենք հանդիպում Մուշեղ Իշխանի հուշերում, որոնք լույս են տեսել Բեյրութում 1952 թ.: 1930-ական թվականներին, երբ Ադոնցն ամբիոնի վարիչ էր Բրյուսելի համալսարանում, իր շուրջն էր հավաքել բոլոր հայ ուսանողներին՝ անկախ այն հանգամանքից, թե որ ֆակուլտետում էին սովորում:

³³ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, էջ 498:

Հայրենասիրությունը նրանց հոգում վառ պահելու նպատակով Ադոնցը շաբաթը երկու անգամ կազմակերպում էր գրաբարի և հայ ժողովրդի պատմության դասեր³⁴: Նա իր հագուստով, շարունակ գիտության մեջ առաջադիմող հռչակավոր գիտնականի համբավով, առաքինի ու ազնվական կերպարով դարձել էր հայ ուսանողների պարծանքը: Տեղին է հիշել Ն. Ադոնցին մոտիկից ճանաչող Հ. Էսեկյուլյանի հուշերը գիտնականի վերջին օրերի մասին. «Չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, թե գրիչը ձեռքին մեռավ, գիտակից իր կոչումի վեհությանը, այն հանդուգն զորավարի պես, որ ծանրորեն վիրավոր մնում է պատնեշի վրա՝ զենքը ձեռքին, մինչև իր վերջին շունչը»³⁵:

Նիկողայոս Ադոնցի սաները նրան ներկայացնում են որպես դասական պրոֆեսորի, որի կերպարը իր գեղեցկությամբ ուղեկցել է նրանց ողջ կյանքում:

³⁴ Մուշեղ Իշխան, Երեք մեծ հայեր, Պէրոյթ, 1952, էջ 9:

³⁵ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Դ, Երևան, 2009, էջ 13: Մեջբերումը՝ արևելահայերեն-Գ. Մ.:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
«Վաչե և Թամար Մանուկյան»
մատենադարանի գիտական
քարտուղար, Բանասիրական
գիտությունների թեկնածու*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՏԱՐԱԼԵԶՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Նիկողայոս Աղոնցի գիտական գործունեության մասին խոսվել է բազմիցս՝ արժևորելով այն մեծ ներդրումը, որի շնորհիվ հայ ժողովուրդն ու Հայաստանը աշխարհին ներկայացան նորովի: Գրեթե ամբողջությամբ ուսումնասիրված են նրա հոդվածներն ու ուսումնասիրությունները, ինչի վառ վկայությունն են տարբեր գիտական ամսագրերում տպագրված հետազոտական աշխատանքները: Սակայն Ն. Աղոնցի գիտական, արխիվային ժառանգության մի մասը՝ նամակները, դեռ կարիք ունեն անդրադարձի:

Ընդհանրապես, յուրաքանչյուր ստեղծագործողի կամ գիտնականի գրական, գիտական ժառանգության բացահայտման բանալին թաքնված է նրա հրապարակախոսության մեջ, որի բաղկացուցիչ մասը կամ լրացումն է կազմում նամականին: Նիկողայոս Աղոնցն այս առումով բացառություն չէ: Սակայն կան պատճառներ, որոնք թույլ չեն տվել երկար ժամանակ անդրադառնալ նրա նամականուն:

Առաջինն այն է, որ գիտնականի արխիվային ժառանգությունն ու գրադարանը ոչնչացվել է 2 անգամ՝ 1920 թ. Պետրոգրադում,

1942 թ. Բրյուսելում¹: Հայտնի է, որ գիտնականը նամակագրական ընդարձակ կապեր է ունեցել ժամանակի հայ և օտարագրի նշանավոր անձանց հետ, և այդ հսկայածավալ նյութը պետք է որ պարունակեր անսահման տեղեկատվություն Ն. Ադոնցի գիտական գործունեության, տեսական-քննադատական հայացքների, այս կամ այն հարցի շուրջ նրա մտեցումների մասին: Ցավոք, առ այսօր մեզ հասել է այդ մեծ ժառանգության մի մասը միայն: Դրանք պահպանվել են Համագրայինի Բեյրութի գրական պահոցում, ՀՀ ազգային ու Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվներում, Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում, Վիեննայի Մխիթարյանների, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի դիվաններում: Այդ նամակների մի մասը հրատարակվել է տարբեր պարբերականներում, իսկ ամբողջական, համահավաք տարբերակով ներառվել է նրա երկերի ժողովածուի մեջ²:

Երկրորդ պատճառը հայագետի նամականու՝ որպես առանձին հատորի բացակայությունն էր մինչև 2014 թ.: Ն. Ադոնցի գիտական ժառանգության առաջին անդրադարձները սկսվում են 19-րդ դարի վերջից, երբ լույս են տեսնում նրա ուսումնասիրությունները: Հետագայում նրա գիտական աշխատանքները բազմիցս վերահրատարակվում են՝ հիմք դառնալով նորանոր ուսումնասիրությունների: 1990-ական թվականներին նախատեսվում է հրատարակել գիտնականի երկերի ժողովածուն չորս հատորով, սակայն 1996 թ. լույս է տեսնում միայն առաջին հատորը՝ ներառելով «Հայկական հարց» ուսումնասիրությունը: Ն. Ադոնցի երկերի ժողովածուի հատորները տպագրվում են ավելի ուշ՝ 2006-2014 թթ. ընթացքում: Ըստ նախնական ծրագրի՝ պետք է լույս տեսներ հինգ հատոր, սակայն ավելանում

¹ Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1988, թ. 3, էջ 87:

² Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, Հո. Է, Երևան, 2014, 288 էջ:

է մեկ լրացուցիչ հատոր, ուր ներառվում է հրապարակախոսությունը, իսկ ավելի ուշ՝ 2014 թ., տպագրվում է 7-րդ հատորը՝ ներառելով գիտնականի՝ մինչ այդ հրապարակված և դեռևս անհայտ նամակները: Այս հատորի տպագրությունն արդեն թույլ է տալիս վերլուծել նրա նամականին ամբողջության մեջ և ընդգծել նրա արժեքն ու նշանակությունը:

Մեր հետազոտության թեման Ն. Ադոնցի՝ տարալեզու պարբերականներից ուղղած նամակների վերլուծությունն է: Գիտնականի արժեքավոր, մեզ հայտնի նամակների շարքում դրանք բավական մեծ թիվ են կազմում և ներկայացնում են հեղինակի գիտական հետաքրքրությունների բոլորովին այլ շրջանակ: Սակայն ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այս թեմային նախկինում անդրադարձ ընդհանրապես չի եղել: Ավելին, առանձին գիտական ուսումնասիրության նյութ չի դարձել նրա նամականին: Հայտնի են միայն առանձին հրապարակումներ: Պատճառը, վստահաբար, այդ նամակների ամբողջական ժողովածուի բացակայությունն է եղել մինչև 2014 թ.:

Առաջիններից մեկը, ով արժևորել է Ն. Ադոնցի գիտական ժառանգությունն ամբողջության մեջ, Կ. Յուզբաշյանն է, սակայն նրա գիտական ուսումնասիրության մեջ նամականին հիշատակված չէ³:

1966 թ. Ավետիք Ադամյանի ջանքերով հրապարակվում են գիտնականի 8 նամակներ⁴, որոնց հասցեատերերն են Գալուստ Տեր-Մկրտչյանը, Տիրայր վարդապետը, Գարեգին Հովսեփյանը: Բոլոր այս նամակները պարունակում են բանասիրական ճշգրտումներ, ներկայացնում են Ադոնցի գիտական-տեսական հայացքները և արժեքավոր են հետագա ուսումնասիրողների համար:

³ Տե՛ս Կ.Ն. Յուզբաշյան, Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, թ. 4, էջ 115-128:

⁴ Տե՛ս Ա. Ադամյան, Քերովբե Պատկանյանի և Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1966, թ. 3, էջ 95-121:

1975 թ. Պ. Հակոբյանի ջանքերով հրապարակվում են Ադոնցի 17 նամակներ⁵: Ժամանակագրական առումով այս նամակներն ընդգրկում են 1895-1902 թթ., թեմատիկ առումով անդրադառնում են գիտնականի՝ Մերձբալթիկայում անցկացրած օրերին և երկու անգամ Արևմտյան Եվրոպա կատարած ուղևորություններին (Վենետիկ, Մյունխեն, Փարիզ, Լոնդոն): Նամակները հասցեագրված են բանասեր, պատմաբան Կարապետ Եզյանին և մեծ գիտնական Նիկողայոս Սառին: Այս նամակների բնագրերը պահպանվում են ՀՀ ԳԱԱ-ում և Ս. Պետերբուրգում: Այս 17 նամակների հանրայնացումը հիմք դարձավ՝ շարունակելու պրպտումները: Արդյունքը սպասեցնել չտվեց:

1988 թ. Պ. Հովհաննիսյանի անդուլ աշխատանքի շնորհիվ գիտական հանրությանը հասանելի են դառնում ևս 14 նամակներ՝ համապատասխան ծանոթագրություններով և առաջաբանով⁶: Նամակները հասցեագրված են Հովհ. Թումանյանին, Ա. Չոպանյանին, Գ. Խալթյանցին, Գ. Լևոնյանին, Կ. Կոստանյանին: Ժամանակագրական առումով ընդգրկում են 1903-1917 թթ., իսկ որոշ նամակներ անթվակիր են: Այս նամակների բնագրերը պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տարբեր անհատների ֆոնդերում:

2010 թ. Պ. Հովհաննիսյանը հանրությանն է ներկայացնում մեծ գիտնականի երկու նամակ, որոնք առնչվում են Հայկական հարցին: Նամակները գրված են 1913 թ., հասցեագրված են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ու հայ գրող, իմբազիր, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանին: Բնագրերը պահվում են ՀՀ

⁵ Տե՛ս Պ.Հ. Հակոբյան, Նիկողայոս Ադոնցի նամակները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1975, թ. 11, էջ 82-111:

⁶ Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1988, թ. 3, էջ 87-96:

Ազգային արխիվի և Մաշտոցյան Մատենադարանի արխիվային բաժնի ֆոնդերում⁷:

Հետագայում այս բոլոր պատառիկները, ինչպես նաև նոր գտնված մասունքները ամփոփվում են առանձին հատորի մեջ: Բայց, ինչպես նշվում է առաջաբանի մեջ, ներառված նյութերը ընդամենը մի մասն են Ն. Ադոնցի ընդգրկուն նամականուց: Տարբեր գիտական ուսումնասիրություններում կարելի է հանդիպել հիշատակումների, որ Ն. Ադոնցը նամակագրություն է ունեցել տարբեր նշանավոր անձանց հետ, սակայն անհայտ է՝ արդյոք այդ նամակները ինչ-որ տեղ պահպանվում են, թե ոչ:

Վերը նշված բոլոր հրապարակումների մեջ, ինչպես տեսանք, չկան այնպիսի նամակներ, որոնք հասցեագրված են պարբերականների խմբագրություններին: Բնականաբար, այս ուսումնասիրության համար հիմք կարող էր հանդիսանալ միայն երկերի ժողովածուի յոթերորդ հատորը, ուր ներառված նամակների գերակշիռ մասը հրապարակվել է առաջին անգամ:

Մեզ հայտնի նամակների շարքում տարալեզու պարբերականներին գրված նամակների թիվը 15-ն է, որոնցից միայն մի քանիսն են նախկինում տպագրվել կամ հրապարակվել: Մնացած բոլոր նամակները պահպանվել են ձեռագիր տարբերակով որևէ արխիվում: Այդ նամակները վերնագրված են տվյալ պարբերականի կամ ամսագրի անունով, սակայն հասցեատերերը միանշանակ խմբագիրներն են: Կան նաև նամակներ, որոնք հասցեագրել է այլ անձանց, սակայն նրանց մեջ շոշափել է պարբերական մամուլում արծարծված խնդիրները կամ հարցադրումները: Որպես այդպիսին՝ առաջին հերթին պետք է առանձնացնել Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանապետ Բառնարաս վրդ. Պիլեզիկճյանին, ում գրված նամակները գերակշռում են նամականու մեջ: Նա խմբագիր չի եղել,

⁷ Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Հայկական հարցին աղերսվող Նիկողայոս Ադոնցի նորահայտ նամակները, «Էջմիածին», 2010, թ. ԺԱ, էջ 105-111:

սակայն նրանից է գիտնականը ստացել «Հանդէս ամսօրեայ»-ի համարները⁸: Ահա ինչու նրան ուղղված նամակներում շատ հաճախ նա նշում է, որ չի ստացել հանդեսի այս կամ այն համարը, որ խնդիր կա որևէ նյութի հետև և այլն: Այդպիսի անհատներից են Համազասպ վրդ. Ոսկյանը, Արտաշես Չիլինկիրյանը, Ներսես Ակինյանը և այլոք:

Ն. Ադոնցի հետաքրքրությունը մամուլի նկատմամբ դրսևորվել է ուսանողական տարիներից մինչև կյանքի վերջ: Դա են փաստում տարբեր նամակներում առկա հիշատակումները: Օրինակ՝ Նիկողայոս Մառին 1901 թ. մարտին գրած նամակում⁹ նա հիշատակում է «Հանդէս ամսօրեայ», «Բիւզանդիոն», «Արեւելք» պարբերականները և նրանցում տպագրված հայագիտական ուսումնասիրությունները: 1902 թ. ուղարկված նամակում խնդրում է նրան ուղարկել «Հանդէս ամսօրեայ», «Բազմավէպ», «Արարատ», «Zeitschrift für Armenische» ամսագրերի համարները¹⁰: Նման հիշատակումները վկայում են, որ գիտնականը քաջատեղյակ է եղել ժամանակի մամուլում տպագրվող գիտական հրատարակումներին և հետազոտություններին:

Մեզ հայտնի նամակները հասցեագրված են «Հանդէս ամսօրեայ», «Բազմավէպ», «Միօն», «Վէմ», «Անահիտ», «Հայրենիք», «Զվարթնոց», «Մասիս», «Յառաջ», «Թայմս» և այլ պարբերականների կամ ամսագրերի խմբագրություններին: Այս շարքում առանձնանում է «Հանդէս ամսօրեայ»-ն, որի հետ նա միշտ ունեցել է նամակագրական կապ և որին ուղղված նամակները գերակշռում են նամականու մեջ: Սա բացատրվում է երկու պատճառով.

⁸ Վիեննայի Մխիթարյան միաբանության դիվանում պահվող Ն. Ադոնցի թվով 42 նամակների հավաքածուն դիվանի պատասխանատու հայր Վահան Հովակիմյանը տրամադրել էր ամերիկահայ ճանաչված պատմաբան Ռուբեն Ադայանին, իսկ վերջինս էլ այն փոխանցել է Պետրոս Հովհաննիսյանին: Այդ նամակները հրատարակվել են առաջին անգամ: Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, Հտ. է, էջ 7:

⁹ Նույն տեղում, էջ 44:

¹⁰ Նույն տեղում, էջ 53:

ա. Նամականին կազմելու համար անգնահատելի է եղել Վիեննայի Միխիթարյան միաբանության դիվանում պահվող Ն. Ադոնցի թվով 42 նամակների հավաքածուն, որի մեջ գերակշիռ մաս են կազմել նաև հանդեսի խմբագրությանն ուղղված նամակները:

բ. Մեծ է նաև անձնական գործոնը: 1898 թ. ամառային արձակուրդների շրջանում Ն. Ադոնցը համալսարանի կողմից գործուղվել է Վիեննա և Վենետիկ՝ տեղի հայկական ձեռագրերին ծանոթանալու, ուսումնասիրելու և իր ավարտական թեզը գրելու համար: Նա ծանոթացել է Վիեննայի միաբանության անդամների հետ, որոնց մեջ առանձնանում են Բառնաբաս վրդ. Պիլեզիկճյանը և Ներսես վրդ. Ակիկյանը: Հետագայում այդ բարեկամությունն ավելի է ամրապնդվել, ինչն արտացոլվել է և՛ անձնական շփումներում, և՛ նամակներում:

Ինչպես արդեն նշել ենք, Ն. Ադոնցի «Նամականի»-ն կազմելու համար փորձել են հավաքել տարբեր արխիվներում պահվող կամ արդեն որևէ տեղ տպագրված նյութերը: Ն. Ադոնցի գիտական ժառանգությունը ցրված է, կենտրոնացած չէ մի վայրում, այդ պատճառով բացառված չէ նոր նամակների ի հայտ գալը, որոնց մեջ կլինեն նաև տարբեր պարբերականների խմբագրություններին հասցեագրված նոր նյութեր:

Ն. Ադոնցի՝ մեզ հայտնի նամակները գրված են 1893-1940 թթ. ժամանակահատվածում: Տարալեզու պարբերականներին գրված նամակներից առաջինը թվագրված է 1893, իսկ վերջինը՝ 1937: Երբ համեմատում ենք այս նամակները, տեսանելի է դառնում Ն. Ադոնցի՝ որպես մեծ գիտնականի ձևավորման ողջ ընթացքը ուսանողական տարիներից մինչև գիտական բարձունքներ: Դա արտացոլված է նաև նամակների բովանդակության մեջ: Բացի անձնական տվյալներից, այդ նամակները արտացոլում են ժամանակաշրջանի պատկերը, գիտական աշխարհի ներկայացուցիչների գործունեության մանրամասները, գիտական աշխատությունների ստեղծման գործընթացը և այլն:

Թեմատիկ առումով այդ նամակները տարբեր են.

1. Նամակներ, որոնք սեղմ են, ունեն տեղեկատվական բնույթ:

2. Նամակներ, որոնց մեջ արձարծվում են գիտական հարցադրումներ, արտացոլվում են որևէ հարցի շուրջ բանավեճերը կամ պարզաբանվում են որոշ գիտական խնդիրներ:

Տեղեկատվական բովանդակություն ունեցող նամակների թիվը բավական մեծ է: Օրինակ՝ 1896-1897 թթ. «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրությանն¹¹ ուղարկված նամակներում նա ընդամենը հարցումներ է կատարում հանդեսի բաժանորդագրության, սակագնի կամ որևէ համար չստանալու վերաբերյալ: Նշենք, որ նշված շրջանում Ն. Ադոնցը սովորում էր Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի գրականության և արևելյան լեզուների բաժնում: Նմանատիպ նամակներ գրվել են տարբեր տասնամյակներում՝ մինչև կյանքի վերջ: Նույնիսկ կան նամակներ, որոնք հասցեագրված են անհատների, բայց նրանց մեջ նա անընդհատ հարցումներ է անում այս կամ այն պարբերականի համարի, այն ստանալու, գնելու տարբերակների մասին:

Շատ ավելի արժեքավոր, ընդգրկուն են գիտական վերլուծություն պարունակող նամակները: Նրանց մեջ ներկայանում է գիտնականը՝ իր տեսական հայացքներով, պատկերացումներով ու վերլուծություններով: Անդրադառնանք նրանցից մի քանիսին:

1892 թ. Թիֆլիսի «Արձագանք» թերթում «Մատենախօսութիւն» ընդհանուր խորագրի ներքո տպագրվում է հայագետ, Լազարյան ճեմարանի հայոց լեզվի դասախոս Խաչատուր Քոչուկ-Շովհաննիսյանի

¹¹ Այս շրջանում «Հանդես ամսօրեայ» հանդեսի խմբագիրը Գրիգորիս Գալեմբյարյանն էր:

«Ֆր. Միւլլերի հետազոտութիւնները» վերնագրով հոդվածը¹², ուր հոդվածագիրը այլ հարցերի կողքին անդրադառնում է նաև «գերեզման» բառի ստուգաբանությանը՝ գտնելով, որ այս բառը անվերծանելի է: Ն. Ադոնցը, որ այդ ժամանակ Թիֆլիսի ռուսական երկրորդ գիմնազիայի ուսանող էր¹³, անմիջապես անդրադառնում է այդ գրախոսությանը՝ նամակ ուղարկելով թերթի խմբագրություն: Ն. Ադոնցի՝ մեզ հայտնի «Նամական»-ու մեջ այս նամակը առաջին համարի ներքո է, ինչից կարելի է ենթադրել նաև, որ սա նրա առաջին նամակն էր ընդհանրապես: Գոնե առ այսօր չի հայտնաբերվել մեկ այլ նամակ, որը թվագրված լիներ ավելի վաղ: Երկերի ժողովածուի յոթերորդ հատորի մեջ այն վերնագրված է «Արձագանք» [լրագրի] խմբագրությանը: Արտատպվել է հենց «Արձագանք» թերթից¹⁴, որտեղ, սակայն, նամակը վերնագրված չէ, տեղադրված է «Գիտութիւն եւ արուեստ» ընդհանուր խորագրի ներքո:

Նամակի բնագիրը, ցավոք, չի պահպանվել, այդ պատճառով կազմողները հիմք են ընդունել տպագրության տարեթիվը՝ թվագրելով 1893: Սակայն շատ հնարավոր է, որ այն գրվել է 1892 թ. դեկտեմբերի վերջին: Խ. Հովհաննիսյանի գրախոսությունը տպագրվել է 1892 թ. դեկտեմբերի 11-ին, իսկ Ն. Ադոնցի պատասխան-նամակը տպագրվել է հունվարի 6-ին: Այսինքն՝ նամակը գրվել է այս միջակայքում:

¹² Տե՛ս Խ. Յովհաննիսեան, Ֆր. Միւլլերի հետազոտութիւնները, «Արձագանք», Թիֆլիս, 1892, թ. 144, 11 դեկտեմբերի, էջ 3: Սա ավստրիացի հայագետ, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Մյուլլերի «Zur Frage über den Ursprung der uigurisch-mongolisch-mandžu'ischen Schrift. - Neupersische und armenische Etymologien. - Bemerkungen über armenische Texte (Kleine Mittheilungen)» ուսումնասիրության գրախոսությունն է: Տե՛ս «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes», Wien, 1891, Band V, pp. 182-190.

¹³ Ն. Ադոնց Թիֆլիսի ռուսական երկրորդ գիմնազիայում սովորել է 2 տարի՝ 1892-1894 թթ.: Տե՛ս Կ.Ն. Յուզբաշյան, Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, «Ուսումնա-բանասիրական հանդես», Երևան, 1962, թ. 4, էջ 115:

¹⁴ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, թ. 3, էջ 2:

Իր նամակով Ադոնցը հակադարձում է Խ. Հովհաննիսյանին՝ առաջարկելով Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչ Գյուլզադյանի տեսակետը, ըստ որի՝ «գերեզման» բառի ստուգաբանությունը այսպես է՝ «գահ»-բարձր տեղ, «րեզ կամ բոյզ» - արձակել, ձգել, «ման» - է մարդ, մանուկ: Այսինքն՝ «գերեզման kam գահրեզման» - նշանակում է բարձր տեղից ձգել մարդուն: Նամակի մեջ նաև նշվում է, որ բառի ստուգաբանությունը կապվում է արիական մի սովորության հետ, ըստ որի՝ մահացածներին աշտարակներից ցած են նետել¹⁵:

Իր առաջին նամակով Ն. Ադոնցը հայտնվում է բանավեճի կենտրոնում: Երիտասարդ, գիտության ուղին նոր թևակոխած գիտնականի համար սա դառնում է փորձություն, որը պատվով հաղթահարում է: Նրա նամակին հակադարձում է Խ. Հովհաննիսյանը: «Արձագանք» թերթում նորից «Գիտութիւն եւ արուեստ» խորագրի ներքո շուտով տպագրվում է նրա պատասխան հոդվածը՝ վերնագրված «Գերեզման» բառի ստուգաբանությւնը», ուր պնդում է, որ Ն. Ադոնցի տեսակետը սխալ է, և բառի ստուգաբանությունը ճիշտ չի ներկայացված: Չի ներկայացված մի կարևոր հանգամանք՝ արդյո՞ք բառը փոխառություն է, թե ոչ: Ի հակադրումն Ադոնցի՝ նա ներկայացնում է եվրոպացի մի շարք հայտնի գիտնականների տեսակետներ, որոնք ավելի ուշ ներկայացված են նաև Հ. Աճառյանի բառարանում:

Խ. Հովհաննիսյանի այս հոդվածին գիտնականը չի արձագանքել: Ամեն դեպքում «Արձագանք»-ի էջերում որևէ պատասխան-նամակ չկարողացանք հայտնաբերել:

¹⁵ Բառի ստուգաբանությունը ներառված է Գևորգ Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում, ուր նշված է. «Թերևս փոխառություն է իրանական աղբյուրից, նշանակում է «գովեստի տուն», «երկինք»: Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, Ասողիկ, 2010, էջ 157: Հ. Աճառյանի բառարանում վերը նշվածին ավելացվել է. «մագդայականների երկնային օթևանը, արքայություն երկնից»: Հ. Աճառյանը տարբեր վարկածների մեջ հիշատակում է թե՛ Խ. Հովհաննիսյանի գրախոսությունը, թե՛ Ն. Ադոնցի այս նամակը: Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Բ., Երևան, Տպ. Համալսարանի ապակետիպ, 1926, էջ 149-153:

Կան նամակներ, որոնք բնութագրում են Ն. Ադոնցին՝ որպես ազգային գործիչ, արտացոլում են նրա հասարակական գործունեության դրվագները: Առանձնացնենք հատկապես 1920 թ. Լոնդոնի «The Times» թերթի խմբագրին գրած նամակը¹⁶: Նամակի բնագիրը ռուսերեն է, պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի Նիկողայոս Ադոնցի ֆոնդում¹⁷: Առաջին անգամ հայերեն հրատարակվել է Պ. Հովհաննիսյանի ջանքերով և Վ. Դիլոյանի թարգմանությամբ¹⁸: Նամակը թվագրվել է բովանդակության տվյալների հիման վրա: Ստորագրել է «Նիկոլայ Ադոնց, Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր»:

«The Times» պարբերականը հիմնադրվել է 1785 թ. և լույս է տեսնում Լոնդոնում առ այսօր: Նամակը գրվել է հատկապես այս թերթի խմբագրին, որովհետև այդ շրջանում, ինչպես և հետագայում այն ամենապահանջված էր ընթերցող հասարակության մեջ, ուներ հասարակական մեծ հնչեղություն: Բնականաբար նույնպիսի արձագանք նա սպասում էր իր նամակի բովանդակության վերաբերյալ, որտեղ արծարծված էին ազգային կարևոր հարցադրումներ: Այստեղ արտացոլվում են Ադոնցի քաղաքական հայացքները, ազգային-հայրենասիրական զգացմունքները և պատմաբանի գիտելիքները: Այս եռամիասնության շնորհիվ նամակում արծարծված հարցադրումները ծառայում են իրենց բուն նպատակին, այն է՝ բարելավել հայ ժողովրդի քաղաքական վիճակը, չեզոքացնել նրա հետագա ֆիզիկական գոյության վտանգը: «Ձեր երկիրն այժմ տոնում է խաղաղության հանդիսությունը, իսկ իմ հայրենիքը շնչահեղձ է լինում արյան մեջ», - գրում է նա հենց նամակի սկզբում: Խոսքը Համաշխարհային առաջին պատերազմի ավարտի և 1919-1920 թթ. Կովկասում տիրող քաղաքական լարված վիճակի մասին է: Նա ահագանգում է եվրոպական հանրությանը իր ժողովրդի ֆիզիկական ոչնչացման վտանգի մասին, որին անտարբեր

¹⁶ Թերթի խմբագիրն այդ շրջանում եղել է պատմաբան, լրագրող Հենրի Ուիքհեմ Մթայրը: Տե՛ս [Oxford Dictionary of National Biography](#)

¹⁷ Տե՛ս 'ս Ն. Ադոնց, Երկեր, հտ. Է, էջ 223:

¹⁸ Տե՛ս 'ս Ն. Ադոնց, Հայկական հարց, Երևան, 1996, էջ 116-118:

են բոլոր մեծ և պատասխանատու տերությունները: Նամակի մեջ հիմնավորված է գիտնականի ամեն մի խոսքը: Նրա յուրաքանչյուր մտքի մեջ տեսանելի են ազգային բարձր արժանապատվությունն ու հումանիզմը: Այս նամակն ունի արդիական մեծ հնչեղություն, քանի որ 100-ամյա վաղեմության իրադարձություններն ու մտահոգությունները առկա են նաև այսօր:

Հաջորդ նամակը, որն ունի հասարակական և ազգային մեծ արժեք, հասցեագրված է Փարիզի «Յառաջ» թերթի խմբագրությանը, որի բնագիրը, ցավոք, չի պահպանվել: Այս նամակը բովանդակում է Ն. Ադոնցի ելույթը՝ արտասանված 1929 թ. ապրիլի 24-ի սգահանդեսի ժամանակ, որը միջոցառման ավարտից հետո նա ուղարկել է թերթի խմբագրությանը, ուր և տպագրվել է առաջին անգամ¹⁹:

Պատմությունը փաստում է, որ մինչև 20-րդ դարի կեսերը Ապրիլի 24-ը՝ որպես Հայոց ցեղասպանության օր, Խորհրդային Միությունում չի հիշատակվել: Սակայն Սփյուռքում այդ օրերին միշտ կազմակերպվել են միջոցառումներ: 1920-1930-ական թվականներին Ն. Ադոնցը ապրել է հիմնականում Փարիզում, սուղ պայմաններում, որն է պաշտոն չի զբաղեցրել, սակայն գիտական գործունեությունը չի դադարեցրել: Այս նամակը փաստում է, որ նա վարել է նաև հասարակական ակտիվ գործունեություն՝ ի նպաստ իր ժողովրդի, նրա պատմական կերպարի, ազգային մշակույթի պահպանման²⁰:

Նամակը սրտի խոսք է՝ նվիրված իր կոտորված հայրենակիցներին, մարդկանց, «ովքեր գերադասեցին ապրել որպես Հայ, ոչ որպես ստրուկ»: Ողջ նամակի միջով կարմիր թելի պես անցնում է ազգային մեծ ողբերգության գիտակցումը, դրա հետևանքներն ու ազդեցությունը հետագա սերունդների վրա: Բայց դրան զուգահեռ նամակը

¹⁹ Տե՛ս Ապրիլ 11/24ի փառաշուք սգահանդեսը, «Յառաջ», Փարիզ, 1929, թ. 914, 29 ապրիլի, էջ 1:

²⁰ Սգահանդեսը կազմակերպվել է Փարիզում: Մասնակցել է մոտ երկու հազար հոգի, որի ընթացքում կազմակերպվել է նաև հանգանակություն: Կեսարիայի որբերի համար հավաքվել է 600 ֆրանկ:

ծայրից ծայր ողողված է հայրենասիրական զգացմունքներով և սեփական ժողովրդի արժանի զավակը լինելու գիտակցությամբ: Այդ են փաստում նամակի վերջին տողերը. «Չկա հաղթանակ՝ առանց պարտության: Երբ ծառի մը ճյուղերը կտրեն, անիկա թարմ ծիլերը կարձակե: Ձեզմե յուրաքանչյուրը պետք է կատարե իր պարտականությունը՝ հանուն ազատագրության»²¹:

Հայտնի է, որ Ն. Ադոնցը գործուն մասնակցություն է ունեցել փարիզահայ գրական կյանքի բոլոր նշանակալից իրադարձություններին: 1928 թ. նա ընտրվել է Փարիզի Հայ գրական ակումբի (միության) առաջին նախագահ, եղել է Փարիզի հայոց թեմական կենտրոնական առժամյա վարչության (1925 թ.) և Լենինականի երկրաշարժի աղետյալներին օգնելու կենտրոնական նպաստամատույց մարմնի (1926 թ.) անդամ, Ավետիս Ահարոնյանի քառասնամյա գրական գործունեության հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի գործադիր մարմնի նախագահ (1930 թ.), Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի հոբելյանական հանձնաժողովի (1935 թ.), Բաֆֆու ծննդյան 100-ամյակի հոբելյանական կազմակերպիչ հանձնաժողովի (1937 թ.), Սասունցի Դավիթ էպոսի 1000-ամյակի (1939 թ.), Մելքոնյան հրատարակչական հանձնաժողովների (1939 թ) անդամ և այլն: Հասարակական գործունեության առանձին դրվագները արտացոլվել են նաև նամակներում, որոնք բավական խոսուն են²²:

Որպես Փարիզի Հայ գրական միության նախագահ՝ պահպանվել և մեզ են հասել մի քանի նամակներ, որոնցից երկուսը հասցեագրված են Փարիզի «Ապագայ» շաբաթաթերթի և «Անահիտ» հանդեսի խմբագրություններին: Երկու նամակներն էլ գրվել են 1930 թ. հոկտեմբեր ամսին, երբ վարչությունը պատրաստվում էր նշել Միքայել Նալբանդյանի և Գամառ-Քաթիպայի (Ռաֆայել Պատկանյանի)

²¹ Ապրիլ 11/24ի փառաշուք սգահանդեսը, «Յառաջ», Փարիզ, 1929, թ. 914, 29 ապրիլի, էջ 1:

²² Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնց. մարդը և գործը, «Էջմիածին», 2011, թ. Ա., էջ 110:

ծննդյան հարյուրամյակ: «Ապագայ» թերթին ուղղված նամակի բնագիրը չի պահպանվել, կա միայն տպագիր տարբերակը²³24, մինչդեռ «Անահիտ» հանդեսին ուղղված նամակի բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում²⁵: Սա շրջաբերական-նամակ է, որ այդ շրջանում տպագրվել է Փարիզի մի շարք պարբերականներում: Սա կոչ է՝ ուղղված համայն հայությանը՝ ըստ արժանվույն գնահատելու գրական երկու մեծությունների ավանդը և հարգելու նրանց հիշատակը:

Փաստենք, որ տարալեզու պարբերականներին ուղղված նամակները բովանդակում են տարաբնույթ թեմաներ, որոնցից յուրաքանչյուրի մասին կարելի է անվերջ խոսել: Սահմանափակվելով սեղմ ծավալի մեջ՝ փորձեցինք ներկայացնել նրանց մի մասը: Հուսով ենք՝ դեռևս կհայտնաբերվեն մեծ գիտնականի՝ տարբեր տարիներին գրած այլ նամակներ, որոնք հնարավորություն կտան բացահայտել նրա բազմակողմանի գործունեության անհայտ կողմերը:

²³ Տե՛ս Արոնց Ն., Ձոյգ հարիւրամեակ, «Ապագայ», Փարիզ, 1930, թ. 100, 29 հոկտեմբերի, էջ 3:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Տե՛ս Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 32ա.:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի
մագիստրատուրայի շրջանավարտ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԳՆԱՀԱՏՈՂ

Դարեր շարունակ հայ ժողովրդի ծննդաբանության, պատմական ընթացքի ամբողջական, միակ փաստացի աղբյուր և դասագիրք ծառայած «Հայոց պատմություն» աշխատության և նրա հեղինակի՝ Պատմահայր Մովսես Խորենացու հարյուրավոր գնահատողների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Նիկողայոս Ադոնցը:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», «Արուեստ Դիոնիսեսյ Քերականի եւ հայ մեկնությունք նորին», «Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների», «Պատմական ուսումնասիրություններ» և այլն. շուրջ 80 հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով գրված արժեքավոր գիտական աշխատություններում՝ նվիրված գլխավորապես հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն ու գրականությանը, հայ-բյուզանդական հարաբերություններին, հայ-հունական բանասիրությանը, առասպելաբանությանը, կրոնին, լեզվաբանությանը, Նիկողայոս Ադոնցը երբեք չի շրջանցել Պատմահոր աշխատությունը՝ հաճախ այն դարձնելով իր ուսումնասիրությունների հիմքը:

«Նա պատմական մյուս հուշարձաններից տարբերվում է նախ և առաջ հեղինակի սուբյեկտիվ վերաբերմունքով դեպի իր շարադրու-

թյան առարկան: Խորենացին հասարակ պատմիչ չէ, որ վաղուց անցած-գնացած օրերի դեպքերը շարադրում է պարզամտորեն, այլ գերազանցորեն քննադատ է և հետազոտող. նա ոչ միայն պատմում է, այլև աշխատում է հասկանալ ու բացատրել երևույթները...», - գրում է Ն. Ադոնցը¹:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908 թ.) մենագրության մեջ, որտեղ գիտնականը արժեքավոր տեղեկություններ է ներկայացնում անտիկ պետականությունից դեպի միջնադարյան պետականությունն անցնելու շրջանում Հայաստանի քաղաքական բաժանման, քաղաքացիական վերակազմությունների, նախարարությունների տոհմական, ֆեոդալական հիմքերի, հոգևոր իշխանության մասին, Մովսես Խորենացու աշխատությունը ամենամեջբերվող և քննարկվող երկերից է: Աշխարհագրական բազմաթիվ տեղանուններ՝ Կղետուրք, Մանեայ այրք կամ Մանայայրք, Ճանիւք, Կոկարիս, Թեոդուպոլիս, Կասպադովկիս, Հաբանդ, Սյունիք, Արցախ, Վասպուրական, Վանանդ, Օշական, Այրարատ, Ծաղկեոտն կամ Ծաղկոտն, Աշտիշատ, Տայք, Տարոն, Աղիովիտ, Արտագ, Գեղարքունի, Սոթք, Շիրակ և այլն, քննելիս Ադոնցն անպայման անդրադառնում է «Հայոց պատմություն» աշխատության մեջ դրանց մասին տեղեկություններին:

Աշխատության մեջ անդրադառնալով Հուստինիանոսի վերափոխումների՝ Հայաստանի մտավոր կյանքի և հայ դպրության մեջ ունեցած նշանակությանը, Ն. Ադոնցը ընդգծում է, որ այդ շրջանի արգասիք են «...Դավիթ Անհաղթի փիլիսոփայական գործերը, նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացու աշխատությունները և վերջապես Մովսես Խորենացու առաջին լիակատար և քննական Հայոց պատմությունը. իսկապես մի հոյակապ հուշարձան, որ շատ կողմերով իր հավասարը չունի հայ դպրության մեջ՝ նշանավոր նախ և առաջ ազգային այն խոր գաղափարայնությամբ, որը ստեղծեց նա, և

¹ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 267:

որով շատ դարերի ընթացքում դաստիարակվեցին հետագա սերունդները»²:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեծ մասը նվիրված է հայկական նախարարական տների առաջացմանը, դրանց մասին պատմական, տոհմային, աշխարհագրական տեղեկություններին: Ինչպես գիտենք, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը այս պարագայում ևս սկզբնաղբյուր է դիտվում: Ըստ Ադոնցի՝ այդ երկը «...նախարարության պատմությունը շարադրելու առաջին փորձն է: Որպես նախարարությունների պատմիչ՝ նա իր առջև դրված խնդրին նայում է հեռանկարային տեսակետից՝ փորձելով նրանց ծագումը պարզաբանել անցյալի լույսի տակ»³: «Հայոց պատմությունը» նրա հեղինակի քննական ոգու շնորհիվ նշանավորել է անկման շրջանը, երբ նախարարական կյանքի նախկին հենարանները խախտվել էին, պատմական չափանիշները քայքայվելով՝ կենդանի իրականությունից անցել էին հիշողությունների և ավանդությունների գիրկը: Այդ վիճակը հարազատորեն բնորոշելով՝ Խորենացին Վաղարշակ Արշակունու միջոցով հարց է տալիս. «Ուստի նախարարութիւնքս որ աստ կան: Զի ոչ կարգք ինչ աստ լեալ յայտնի, եւ ոչ մեհենից պաշտամունք. եւ ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է, եւ ոչ վերջինն, եւ ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն եւ վայրենի»⁴: Այս դրվագում, ըստ Ադոնցի, արտահայտված է ոչ թե թագավորի ցանկությունը, այլ իր իսկ պատմիչի հետաքրքրասիրությունը, և այստեղ նկարագրված վիճակը, բոլորովին չի վերաբերում «...Հայաստանում Արշակունիների հայտնվելու ժամանակին, այլ պատմիչի ժամանակվա իրականության ճշմարիտ պատկերն է»⁵: Ն. Ադոնցը կարծում է, որ Խորենացու երկը արտացոլում է հեղինակին ժամանակակից աշխարհի տրամադրություններն

² Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 237:

³ Նույն տեղում:

⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 30:

⁵ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 268:

ու հայացքները և այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: «Նախարարությանը վերաբերող հարցերում կարևոր են ոչ թե այս կամ այն փաստական տվյալներն ու լուսաբանությունները, որ առաջարկում է պատմիչը, այլ արժեքավոր է հեղինակի գաղափարախոսությունը՝ թե նա ինչպե՞ս է ըմբռնում նախարարական կարգի էությունը և ի՞նչ ձևով կամ մեթոդով էր մտածում լուծել նախարարության մասին իր առաջադրած հարցերը»⁶:

Խորենացին ձեռնարկել էր մի պատասխանատու գործ այն դառն գիտակցությամբ, որ իր տրամադրության տակ չկան հայ հնագույն ժամանակների պատմությանը վերաբերող ստույգ աղբյուրներ: Ն. Ադոնցը հասկանում և ըմբռնում է պատմիչի դրությունը, թե նա ստիպված էր աշխատել՝ հենվելով կցկտուր տվյալների, պատահական տեղեկությունների, անհասկանալի ակնարկների և այլ կարգի անվստահելի նյութերի վրա, այդ պատճառով էլ ուշ շրջանի երևույթներն ու դրույթները նա ակամա վավերագրել է հին ժամանակներին: Այդ ամենը հաշվի առնելով հայագետը գտնում է, որ Խորենացու մեթոդը անկասկած գիտական է և իր հետազոտությունը մեթոդոլոգիական տեսակետից ընդհանրացնում է Խորենացու երկի հետ⁷: Շատ հարցերում Ն. Ադոնցի և Մ. Խորենացու հետազոտությունների նպատակներն ու արդյունքները, իրոք, հանգում են միևնույն եզրակացություններին, սակայն, ինչպես հենց Ադոնցն է նշում, իրենց նմանությունը միայն սկզբունքի մեջ է, իսկ փաստական տեսակետից իրենք տարբեր կարծիքի են: Այդ տարակարծությունը հատկապես երևում է Մամիկոնյան և Բագրատունի նախարարական տների ծագումնաբանության, նրանց փոխհարաբերությունների և պատմական իրողությունների մասին հայացքներում: Այս պարագայում 20-րդ դարի հայ մեծագույն գիտնականներից մեկը օբյեկտիվորեն, փաստերով քննադատում է Մովսես Խորենացուն ոչ միայն «Հայաստանը Հուստինիա-

⁶ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 544:

⁷ Նույն տեղում, էջ 545:

նուսի դարաշրջանում» աշխատության, այլև «Պատմական ուսումնասիրություններ» (1948 թ.) ուսումնասիրության մեջ:

«Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում» հոդվածում, ներկայացնելով Մամիկոնյան և Բագրատունյաց նախարարական տների միջև մշտական տարաձայնությունները, պատմիչներին, որոնք գրել են նրանց մասին, այդ թվում՝ Խորենացուն, Ադոնցը գրում է. «Բագրատունիների գուսանն է նաև Մամիկոնյանների նգովիչը: Բագրատունի իր մեկենասին հաճոյանալու համար չէ, որ Խորենացին գովում է նրա տոհմը, այլ Մամիկոնյան քաղաքականության գաղափարական հակառակորդ լինելը և հասարակական անդորրություն սիրելն է դրա պատճառը»⁸: Ադոնցի կարծիքով, Պատմահայրը, ճիշտ է, հայրենասեր էր, սակայն նրա հայացքը «...պարտաւորիչ կըլինէր, եթէ վերաբերէր իր ժամանակուան կացութեան», «Բայց ցան այն է, որ նոր կշռով մօտենում է հին պատմութեան եւ այնտեղից է ուզում հանել Մամիկոնեան փայլուն անունները, ջնջել, հանել նրանց յիշատակը»⁹: «Մրցակից հոսանքների մեկի յաջողութիւնը յաճախ մոռանալ է տալիս միւսի արժէքը»¹⁰: Ն. Ադոնցը անընդունելի է համարում, որ Մովսէս Խորենացու մոտ «չգոյ» են համարվում, իր կարծիքով 4-րդ դարի չնաշխարհիկ հերոսներ Արտավազդը, Մուշեղը, Վասակը, Մանուելը, որոնց հուզիչ նկարագիրը Փավստոս Բուզանդի լավագույն էջերն են կազմում, սակայն հիշատակվում է Վահան Ուրացողը՝ Մերուժանի ընկերը, ով, ըստ Ադոնցի, Մամիկոնյան անբիժ անունը արատավորող միակ ստվերն էր:

Ն. Ադոնցի կարծիքով, Փավստոսի հերոսների քաջագործությունները Խորենացին վերագրել է մյուս նախարարական տներին՝ Առավանյան, Ամատունի կամ էլ Բագրատունի: Մովսէս Խորենացուն անվանելով «հայ մտքի խոշոր մեծութիւն», Ադոնցը ցավում է, որ

⁸ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 545:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 44:

Պատմահայրը այդքան «նեղսիրտ է», այդքան «կուսակցական»: Հայագետի կարծիքով Խորենացին երևի դառնացած է եղել իր ժամանակի Մամիկոնյան աղմուկներից, և նշում է, թե «...Մամիկոնյան տոհմը Խորենացուց յառաջ և յետոյ էր եւ մնաց հայ ազգի բաբախուն սիրտը»¹¹:

Մամիկոնյանների և Բագրատունիների տարաձայնությունների մասին նկարագրությունները և՛ Մ. Խորենացու, և՛ Ն. Ադոնցի մոտ լիովին կարող ենք նույնականացնել այսօր Հայաստանում տիրող տրամադրություններին՝ կապված կուսակցական պատկանելիության հողի վրա տեղի ունեցող խռովություններին ու ընդհարումներին: Ն. Ադոնցի մեկնաբանությունները երկու նախարարական տների հակասությունների վերաբերյալ այսօր էլ արդիական են և ուսուցողական նշանակություն կարող են ունենալ 21-րդ դարի քաղաքական գործիչների համար. «Անմիաբանութեան համբարը համարում է ընդաբոյս խորշում մեր ալևոր ճակատին: Նա ինքն է պատճառ կարծում և մեր ճակատագրական դժբախտութեանց: Ցան եւ ցրիւ, մանաւանդ ներհակ եւ հակասուն գործունեութիւնն է, որ տանում է մէզ դեպի վտանգների եւ դառնութեան նեղուցները»¹²:

Նախարարական տների հակասություններից բացի, Ադոնցը հատուկ ուշադրություն է հրավիրում Խորենացու արձանագրած տեղեկություններին՝ ֆեոդալների, գեղջուկների և քաղաքների բնակիչների բախումների մասին: Պատմահայրը կրկին Վաղարշակ արքայի միջոցով հայտարարում է. «Հրաման տայ՝ եւ քաղաքացեաց մարդկան արգոյ եւ պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. Եւ գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. Եւ քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան եւ խաղաղութեան կենաց

¹¹ Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 44:

¹² Նույն տեղում, էջ 37:

պատճառք. Եւ որ ինչ նման այսօցիկ»¹³: Ն. Ադոնցը գտնում է, որ «...դժգացած քաղքենիութիւնը նկրտում է բռնել թառամած իշխանների տեղը»¹⁴ և ավելացնում, թէ պատմագրի համար դա բնական է և նա հորդորում է գեղջուկ դասին՝ տալ նրան պատկանելի իշխանական հարգանքը, քաղաքացիներին՝ չպերճանալ և եղբայրաբար վարվել շինականների հետ՝ ի շահ երկրի բարեկարգության:

Ն. Ադոնցը տարբեր ժողովուրդների հերոսական դրվագները համեմատում է հայ հին վիպաշխարհի ներկայացուցիչների հետ, իհարկէ մեջբերելով Խորենացուն: Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին ավանդազրույցները քննելիս նա հակադարձում է պրոֆեսոր Գր. Խալաթյանցին, որը չէր ուզում հավատ ընծայել Պատմահոր խոսքերին, թէ Արայի և Շամիրամի գրույցը քաղել է գրավոր աղբյուրներից, թէ հայ առասպելները արդարացնում են նրա ասածները: Ի պաշտպանություն Խորենացու՝ Ադոնցը հղում է անում 1893 թ. «Հերմես» հանդեսում գերմանացի գիտնական Վիլքենի «Նոր հույն վեպ» վերնագրով հոդվածին: Բեռլինի պապիրոսների ժողովածուն քննելիս հեղինակը երևան է հանել Աստրեստանի թագավոր Նինոսի մասնակցությամբ մի վեպ, որը շատ նման է Արա-Շամիրամի պատմությանը: Ըստ Ադոնցի, Գր. Խալաթյանցի կասկածները սրանով տապալվում են. «Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմությունը գրական հերյուրանք չէ, այլ զուտ ժողովրդական գրույց: Որ Շամիրամի շուրջը շատ ավանդություններ և առասպելներ են եղել, այդ երևում է Պատմահոր հակիրճ ակնարկներից»¹⁵: Նույն Շամիրամի մասին խոսելիս, Ադոնցը Խորենացուն անվանում է «Մեր Պատմահայրը»¹⁶ և մեջբերում հայտնի ավանդությունից հատվածը՝ «եւ գյուղութսն ի ծով, եւ բան ի նմանէ. «Ուլունք Շամիրամայ ի ծով»»¹⁷:

¹³ Մովսէս Խորենացի, Նշվ. աշխ., էջ 117-118:

¹⁴ Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 47:

¹⁵ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա., Երևան, 2006, էջ 22-25:

¹⁶ Նույն տեղում, էջ 64:

¹⁷ Մովսէս Խորենացի, Նշվ. աշխ., էջ 56:

Վրաց վարդապետուհի Նունեի մասին հիշատակումներ անելիս Ադոնցը գտնում է, որ Խորենացին հավատարիմ է մնացել Սոկրատեսի բերած փաստերի հետ, իհարկե, պատմությանը սեփական ավելադրումներ կատարելով:

Մովսես Խորենացուց մեզ է հասել «Մանյա այրքի» մասին պատմությունը: Այս ավանդությունը Ադոնցը հետազոտել է պատմաբանի և լեզվագետի տեսանկյունից, եզրակացնելով, որ Մանի կամ Մանե կույսը պատմական դեմք չէ: Ազաթանգեղոսը չի հիշում նրան, այլ գիտի միայն Մանյա Այրք կամ Մանայարք՝ որպես ճգնարան Գրիգոր Լուսավորչի: Այստեղից Խորենացին հանել է Մանի անունը և ենթադրել, որ նա ևս պատկանում էր Հռիփսիմյանց խմբին, միայն հետ էր մնացել և բնակվել Դարանաղյաց լեռներում՝ մի այրի մեջ, որը հետագայում կոչվեց նրա անունով: Պատմահոր արտահայտությունը կարծել է տալիս, թե նա Մանի անունը կապում է իրանական «ման» արմատի հետ, որ նշանակում է «սպասել», մոտ հայերեն «մնալ» բառին: Նույն զրույցի մասին խոսել է նաև վեցերորդ դարի մատենագիր Պրոկոպիոս Կեսարացին: Ադոնցը, օրյեկտիվ հիմնավորումներով գտնում է, որ «...Խորենացու և Պրոկոպիոսի առաջարկած ստուգաբանությունները լեզվագիտական արժեք չունին»¹⁸:

Տորք Անգեղի առասպելի մասին խոսելիս Ադոնցը կրկին նշում է, որ Խորենացու ավանդած նկարագիրը հետաքրքրական է և այն տարբեր քննարկումների առիթ է հանդիսացել գիտնականների ուսումնասիրությունների համար: Առանձնացնելով Ք. Պատկանյանի, Գր. Խալաթյանցի, Ա. Մորդմանի, Հ. Պեղերսենի տեսակետները՝ Ն. Ադոնցը նշում է. «Այդ անունը ծանոթ է Խորենացուն, անշուշտ, հայ կյանքից. Հավանական է նաև, որ հսկայի պատկերն իր հրեշավոր զծերով էապես առնված է հայ իրականությունից, իսկ Խորենացու մեկնությունը նորա լեզվաքննական ճաշակի պտուղ կարելի է համա-

¹⁸ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա., էջ 72:

րել»¹⁹: «Տարկուն հին հայերի մոտ» զեկուցման մեջ, որը ներկայացվել է 1926 թ. նոյեմբերին Ասիական ընկերության 12-րդ նիստի ժամանակ, Ադոնցը կրկին անդրադարձել է «Տորքի» խնդրին՝ նշելով, որ առասպելի՝ Պատմահոր նկարագրությունը արժեքավոր է, հատկապես երկրամասի հնագիտական տվյալների վերաբերյալ դիտողությունները, որոնք չափազանց ուշագրավ են: «Մովսես Խորենացու հաղորդած նյութը կարող է հիմք ծառայել Տարկու աստծո ծագումը քննելու համար», - նույն զեկուցման ժամանակ ասել է Ադոնցը:

«Հայ հին շինականությունը» հոդվածում Ադոնցը, կարծիք հայտնելով Հ. Մանանդյանի «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին» հոդվածի մասին, արդարացի քննադատում է նրա տեսակետները Մովսես Խորենացու մասին: Դրսևորելով լեզվաբան-հնագետ-պատմաբան-բանասերի աննախադեպ կարողություններ՝ Ադոնցը կրկին հանդես է գալիս Խորենացու պաշտպանի տեսանկյունից: Հ. Մանանդյանի և Ն. Ադոնցի հեռակա բանավեճի հիմք են դարձել հատկապես Խորենացու «Հայոց պատմության»՝ Հաշտենից, Աղիովիտ և Առբերանի գավառների մասին տեղեկությունները. «Մեղադրել մատենագրին նախ քան փորձել պատշաճ և բավարար մեկնություն տալ նրա խոսքերին, հանձնարարելի մեթոդ չէ», - խորհուրդ է տալիս Ադոնցը Մանանդյանին: Ադոնցի կարծիքով շատ դեպքերում Խորենացին նորարար է: Օրինակ, նա առաջին բանասերն է, որ հետաքրքրվել է «ոստանիկ մարդկանց» հարցով և կամեցել է որոշել, թե ինչ էին ոստանիկ կոչված ազատները: Այս պարագայում գիտնականը Խորենացուն համարում է «հետախույզ» և նշում, որ աղբյուրները, որոնցից օգտվել է նա, հայտնի են ու կրկին հակադարձելով Հ. Մանանդյանին՝ շարունակում է. «Խորենացու խոսքերը այլ բան չեն, եթե ոչ բանասերի փորձ՝ մեկնելու Փարպեցու և Եղիշեի տեղեկությունները»²⁰:

¹⁹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա., էջ 82-83:

²⁰ Նույն տեղում, էջ 111:

Ն. Ադոնցը համաձայն չէ նաև Հ. Մանանդյանի կողմից «Ողբ»-ի տարբեր հատվածների մեկնությանը: Ըստ Ադոնցի, «Խորենացու «Ողբը» որպես մի քերթված վատ աղբյուր է պատմության: Վարդապետներին, կրոնավորներին, վիճակավորներին, աշակերտներին, ժողովականներին, զորականներին, իշխաններին և դատավորներին վերագրված Ադամա յոթ մեղքերը նույնչափ ստույգ են, որքան «տարերջ փոփոխել զբնութիւնս իւրեանց»²¹:

Բագրատունի իշխանների մասին խոսելիս Ադոնցը անդրադառնում է նաև Սահակ Բագրատունուն՝ Խորենացու մեկենասին՝ նշելով, որ նա եղել է Աշոտ Բագրատունու հորեղբոր՝ Բագրատի որդին՝ «գեղաղէշ երեսօք, երևելի հասակաւ եւ ազնուական բնութեամբ»: Ադոնցը, արժևորելով Սահակի դերը, նշում է, որ նա «...անմահ հիշատակ թողեց իբր նախաձեռնող «Հայոց պատմության»²²:

Նիկողայոս Ադոնցը գտնում է, որ Պատմահայրը շատ բան է պարտական Անանուն (Մեբեոս(Հ.Մ)) պատմիչին: «Սրա պարզ, բայց հանճարեղ մտքի սերմերն են, որ այնպես խնամքով հնձել է Խորենացին, հակառակ իր արհամարհական վերաբերմունքին»²³: Տարբեր հոդվածներում գիտնականը փորձել է գտնել և լուծել Անանունի և Մ. Խորենացու պատմությունների նմանությունների և տարբերությունների վերաբերյալ հարցերը, պատմահամեմատական, թվաբանական տարաբնույթ մեթոդներ կիրառելով: Օրինակ, Արշակունի թագավորների գահակալության հերթագայությունը Անանունի և Մովսես Խորենացու աղբյուրների միջոցով քննարկելով՝ Ադոնցը գտնում է, որ «Խորենացու մոտ թվական տվյալների մեջ թափանցած սխալները ուղղելուց հետո ավելի հստակ է դրսևորվում պատմիչի մերձավորությունը Անանունին»²⁴: «Ձուգահեռը, երևան հանելով Խորենացու լիովին բարեխիղճ վերաբերմունքը իր օգտագործած նյութի նկատմամբ, ստի-

²¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա., էջ 128:

²² Նույն տեղում, էջ 235:

²³ Նույն տեղում, էջ 498:

²⁴ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., Երևան, 2006, էջ 261:

պում է մեզ շատ զգույշ լինել և միայն մտացածին բան չտեսնել այնտեղ, որտեղ չենք կարող կամ մինչև հիմա չենք կարողացել ստուգել Խորենացուն ըստ նրա աղբյուրների»²⁵: Ադոնցի կարծիքով, Անանունի առեղծվածը դեռ լուծված չէ և նրա հարցը կապված է Խորենացու խնդրի հետ:

18-րդ դարի վերջերից սկսած Պատմահայրը ենթարկվում էր եվրոպացի տարբեր հայագետների քննադատության, որոնք փորձում էին ապացուցել, թե Խորենացին դիտմամբ կեղծել է իր օգտագործած աղբյուրները, հորինել է գոյություն չունեցող աղբյուրներ, յուրացրել է իրենից առաջ եղած հայ պատմիչների ամբողջ գլուխներ և հյուսելով իր «Պատմության» մեջ, ներկայացրել է որպես սեփականը: Ցավալին այն է, որ օտարազգի գիտնականներին համակարծիք էին նաև մի շարք հայ բանասերներ: Ն. Ադոնցը, ինչպես տեսանք, բարձր է գնահատում «Հայոց պատմություն» աշխատությունը, սակայն, մեծ գիտնականը իր շատ ուսումնասիրություններում չի ընդունում, որ այդ աշխատության հեղինակը ապրել և գործել է 5-րդ, նույնիսկ 6-րդ դարում: «Ներկայումս արդեն փաստ է, որ Խորենացու Պատմությունը գրված է 680 թվականից հետո և 6-րդ դարի մասին խոսք անգամ չի կարող լինել»²⁶: Մեկ այլ առիթով էլ Ադոնցը գրել է. «Միանգամայն ապարդյուն գործ է առաջնորդել Խորենացին դեպի 5-րդ դար: Խորենացին օգտվել է Սեդրեստրոսի և Սոկրատի հայ թարգմանությունից՝ կատարված 678 և 696 թթ. և ապա ուրեմն ուշ է, քան 696 թիվը»²⁷: Խորենացու ժամանակաշրջանի մասին Ադոնցի առաջ քաշած տարբերակներին մենք այնքան էլ համաձայն չենք, սակայն այդ հարցը սույն հոդվածի շրջանակներից դուրս է:

Կարծիք հայտնելով Գր. Խալաթյանցի 1903 թ. Մոսկվայում լույս տեսած «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատ-

²⁵ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., էջ 287:

²⁶ Նույն տեղում, էջ 56:

²⁷ Նույն տեղում, էջ 319:

մության» մեջ» աշխատության մասին՝ Նիկողայոս Ադոնցը կրկին Պատմահոր «պաշտպանի» դիրքերից է հանդես գալիս: «Պրոֆ. Խալաթյանցն այդ հիանալի խնդրի լուծմանը ձեռնամուխ է եղել կանխակալ տրամադրությամբ: Հափշտակվելով Խորենացու մերժողական քննությունների եզրակացություններով՝ նա դրանք հասցրել է ծայրահեղության և այնպիսի տեսություններ ու վճիռներ է կայացրել, որոնք գիտական տեսակետից հեռու են անբասիր լինելուց»²⁸: Ադոնցը ակնարկում է Ա. Գուտշմիդի ու Ա. Կարբիերի կողմից առաջ քաշված տեսությունների եզրակացությունները (Հ.Ս.): Հանս Լեվիի «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» թվականի մասին» հոդվածի մասին խոսելիս Ն. Ադոնցը ևս համաձայն չէ հեղինակի առաջ քաշած տեսությանը, ըստ որի՝ Պատմահոր աշխատությունը գրվել է 876-885 թթ.: «Պարոն Լեվիի առաջ բերած փաստերը չենք գտներ համոզիչ՝ Մովսես Խորենացին Աշոտ թագավորության օրով դնելու համար»²⁹:

Ադոնցի քննադատությունից անմասն չի մնացել նաև Ն. Ակիմյանը, որը իր բանասիրական ուսումնասիրությունները սխալ ուղղությամբ տանելով՝ հակասական եզրահանգումներ է արել, նախ՝ նույնացնելով Ղևոնդ Երեցին և Մովսես Խորենացուն, այնուհետև «Ողբը» չընդունելով որպես «Հայոց պատմության» հատված: Հատկապես երկրորդ կարծիքի մասին իր անհամաձայնությունը փաստերով է հայտնում՝ նշելով. «Ինչպես և լուծվի այս կնճիռը, մի բան մնում է հաստատուն և աներեր, որ «Ողբը» անկապտելի մասն է կազմում «Հայոց պատմության», լինի ամբողջությամբ, թե առանց վերջին հատվածի, որ համարելու է հռետորական եռանդի արգասիք և ոչ իրական կյանքի պատկեր»³⁰:

Երևի Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմություն» աշխատության ժամանակի խնդիրն է եղել պատճառը, որ Ն. Ադոնցն իր

²⁸ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., էջ 294:

²⁹ Նույն տեղում, էջ 318:

³⁰ Նույն տեղում, էջ 341:

«Մաշթոց եւ նրա աշակերտները» ուսումնասիրության մեջ միայն մեկ անգամ է անդրադառնում Պատմահորը՝ Մեսրոպ Մաշտոցի անվան ինդիքը քննելիս, Կորյունի, Եզնիկի և մյուս աշակերտների կողքին չի հիշատակել Մովսես Խորենացուն: «Սակայն, որքան հաւաստի է Մաշթոց անունը, նոյնքան երկբայելի է Մեսրոբ, աւելի ճիշդ Մեսրոպ: Հին մատենագիրները, Կորին եւ Ղազար, գիտեն միայն Մաշթոց անունը. մինչդեռ Խորենացին է առաջինը, որ Մաշթոցի տեղ գործ է ածում Մեսրոպ: Ի՞նչ հիմ ունէր մեր պատմահայրը, անյայտ է. մինչեւ ինդրի պարզելը գերադասելի է անպայման Մաշթոցը»³¹:

Արդիական է նաև Ն. Ադոնցի ուսումնասիրությունը Արցախի մասին: «Արցախի Բագրատունիք» հոդվածում, կրկին հղում անելով Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը», Ադոնցն ընդգծում է, որ այնտեղ հանդիպող «Աղվանիք կամ Առան բռնում էր Դաշտային և Լեռնային Ղարաբաղ և Ուտիք, որ ձգվում էր Պարտավից (Բարդա) մինչև Աղստևի շրջանը»³², այսինքն այդ տարածքները պատմական Հայաստանի մաս են եղել: Այսպիսի տեղեկությունները հատկապես կարևոր են այսօր՝ 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի Հանրապետության կողմից պատմական իրողությունները խեղաթյուրելու փորձերը կանխելու համար:

Ամփոփելով՝ կարող ենք վստահ ասել, որ Ն. Ադոնցը Մովսես Խորենացու մեծ գնահատողն է: «Ճիշտ է, քննադատությունը արդեն հասցրել է բացասական կարծիք հայտնել Խորենացու՝ որպես պատմիչի հեղինակության վերաբերյալ, ապա այն բնավ չի նսեմացրել նրա գործի՝ որպես պատմական հուշարձանի արժեքը»³³:

³¹ Ն. Ադոնց, Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների, Վիեննա, 1925, էջ 9:

³² Ն. Ադոնց, Երկեր, հտ. Ա., էջ 515:

³³ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 544:



ՏԱԹԵՎԻԿ ԲԱԲԼՈՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի
մագիստրատուրայի շրջանավարտ,
Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան
միջնակարգ դպրոցի հայ
գրականության և հայոց լեզվի
ուսուցչուհի

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՈՆՅԸ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Նիկողայոս Ադոնցն անդրադարձել է մեծ լուսավորչի՝ Խ. Աբովյանի վախճանին: Աբովյանը հասարակական-քաղաքական գործիչ էր, նա արծարծել է մի շարք մանկավարժական հարցեր, առաջ է քաշել հայ ազգի լուսավորության գաղափարը, մշակել կրթադաստիարակչական կարևոր հարցեր ապագա սերունդներին ճիշտ կրթելու համար: Աբովյանի թոնիչքը կարճ եղավ գրականության ասպարեզում, բայց եղավ բարձր՝ մինչև Բիբլիական Արարատ:

Ադոնցն իր հետազոտության մեջ քննել է հատկապես Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» հետազոտությունը: Այն լի է մի շարք փաստերով, վավերագրերով, նամակներով: Հարկ է նշել, որ Աբովյանի անհետացման մասին միայն Բակունցը չէ, որ կատարել է հետազոտություն, նրա անհետացման շուրջ գրված են բազմաթիվ ուսումնասիրություններ, գրքեր, հոդվածներ, առաջ են քաշվել հարյուրից ավելի վարկածներ: Աբովյանի անհետացումը հետաքրքրել է թե՛ հայ, թե՛ ռուս, թե՛ օտարազգի հեղինակներին: Մինչև օրս նոր ժամանակների գիտնականներին նրա անհետացման գործը հետաքրքրում է :

Ադոնցը գրում է. «Այն մարդը, որ պետք է խաղաղ հանգչեր փառքի թավշյա բարձերի վերա, կորավ անհայտության մեջ»:¹ Նա գտնում է, որ Բակունցին, սակայն, չի հաջողվել պատռել անհայտության քողը:

Աբովյանի անհետանալուց անմիջապես հետո սկսվում է հետաքննություն դպրոցում: Հետաքննվում են դպրոցի աշխատավարձերի բոլոր ցուցակները՝ պարզելու համար՝ արդյոք սխալներ չկա՞ն:

Մենք գիտենք, որ Աբովյանը զբաղեցնում էր դպրոցի տեսուչի պաշտոնը: Հետաքննվում է նաև դպրոցի նոր տեսուչի՝ Տուրկեստանովի նամակը գավառապետին:

Բակունցը նշում է, որ նամակն ամբողջությամբ չի հրատարակվել. ստորև ներկայացնում ենք թարգմանված հատվածն ամբողջությամբ. «1848 թ. ապրիլի 2-ին (Հ.տ) յուր բնակարանից դուրս է գալիս և այլևս չի վերադառնում Խաչատուր Աբովյանը: Նրա կյանքի, հատկապես անհայտացման մասին հարյուրից ավելի ուսումնասիրություններ, գրքեր և հոդվածներ են գրել հայ, ռուս և այլազգի հեղինակներ: Մինչ այժմ էլ շարունակվում են պրպտումները, սակայն նրա անհայտացման մասին եղած նյութերի վրա այդ ուսումնասիրությունները արժեքավոր բան քիչ են ավելացրել:

Առաջին պաշտոնական գրությունը Աբովյանի անհայտացման մասին Երևանի գավառապետին ուղարկել է Տուրկեստանովը, որ մարտի 30-ից սկսել էր Աբովյանից ընդունել գավառական դպրոցի գործերը: Որովհետև տեղեկացել է հաջորդ օրը ապրիլի 3-ին»²:

Այժմ ներկայացնենք գավառապետին ուղղված նամակը.

Երևանի պարոն՝ն գավառապետին,

«Գուլեժսկի ասետոր Աբովյանը երեկ, վաղ առավոտյան, ինչպես հայտնեց նրա կինը, անհայտ է, թե որտեղ է գնացել և մինչև այժմ տուն չի վերադարձել: Եվ որովհետև նա, համաձայն դպրոցական

¹ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ, Երևան, 2006, էջ 530:

² Ա. Բակունց, Երկեր, հտ. 4, Երևան, 1984, էջ 33:

բարձր իշխանության կարգադրության, պարտավոր էր հանձնել ինձ ինչպես տեսչական պաշտոնը, այնպես էլ կանխիկ գումարը և արքունի գույքը, բայց կարողացավ հանձնել միմիայն անցյալ տարիների մի քանի գործեր, ուստի տեղեկացնելով Ձերդ բարեձննդությանը այս հանգամանքի մասին, պատիվ ունեմ Ձեր համաձայնությունը խնդրելու՝ թույլ տալ ինձ Երևանի դպրոցի ուսուցիչների և արքունի գույքի ընդունելը: Ընդամին պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու Ձերդ բարեձննդությանը կարգադրությունը կոլեժսկի ասեսոր Աբովյանին փնտրելու մասին»³:

Բակունցի կարծիքով՝ ցարական ադմինիստրացիան անհանգստացած էր Աբովյանի անակնկալ անհայտացմամբ, նույնիսկ քննիչներ էր ուղարկել հետաքննելու գործը:

Աբովյանի հետաքննությունը սկսվել է ապրիլի 8-ին: Մտուզվում են դպրոցի դրամարկղերը. ամեն բան ճիշտ էր:

Աբովյանի գործի հետաքննությունն ունեցել է երկու շրջան. առաջինը՝ ապրիլի 6-ից 20-ը, երկրորդը՝ մայիսի 17-ից նախքան հունիսի 24-ը:

Աբովյանի գործով հետաքննությունը հասնում է Խոր Վիրապ, երբ հուլիսի 31-ին գտնում են մարդկային կմախք և ենթադրում, թե հնարավոր է՝ Աբովյանինը լինի, բայց հայազետը շատ փաստերի հետ չի համաձայնում, նույնիսկ նշում է, որ ընտանեկան քնությունը ևս մակերեսային է եղել: Այն համարում չհաստատված: Դատավարության ժամանակ Աբովյանի կնոջը՝ Էմիլյա Աբովյանին են ներկայացնում Երասխի ափից գտած ճտքակոշիկ, կինը հաստատում է, թե Աբովյանինն է:

Նույն դատավարության ժամանակ Էմիլյա Աբովյանը և տան ծառան պատմում են, որ մարտի 31-ից երեք օր մինչև իր անհետացման օրը, Աբովյանը եղել է անքուն, փակվել է սենյակում, չի շփվել: Մնում է ենթադրել, որ նրան անհանգստացրել է կարևոր խնդիր՝ մի-

³ Ա. Բակունց, Երկեր, հտ. 4, էջ 33-34:

գուցե անլուծելի կամ անելանելի, որն էլ ստիպել է նրան փակվել սենյակում, չշփվել և տառապել անքնությամբ:

Էմիլյա Աբովյանը ոչ մի ուրիշ վկայություն չի տալիս, որն օգներ հետաքննությանը:

Ուշադրությունից դուրս չի մնացել նաև հարազատների, ընկերների կողմից գրված նամակները, որոնք ևս ենթարկվել են հետազոտության: Այս և ուրիշ նամակներ ուսումնասիրել է պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը: Մենք կներկայացնենք նախ Ադոնցի կողմից ուսումնասիրվածն ու կարևորություն ստացածը, այնուհետև կանդրադառնանք զուգահեռ Աշոտ Հովհաննիսյանին: Այսպես, Ադոնցն իր ուսումնասիրության ընթացքում եկել է այն եզրակացության, որ Աբովյանի առաջին նամակագիրն անհետացումը կապում է ինչ-որ հանցագործության հետ:

Աբովյանի ընկեր և բարեկամ Գեորգի Ակիմյանը նաև Աբովյանի աշակերտն էր: Ադոնցը նրան ուղղված նամակում գտնում է որոշակի սխալներ: Նամակագիրը գրում է, որ Աբովյանի հետ գերմանացի երկրաբան Հ. Արիխը պետք է բարձրանար Մասիսի գագաթը: Ըստ նամակագրի՝ դա հրաման է եղել և, եթե չկարողանային բարձրանալ, պետք է պատժվեին: Մասիսի գագաթը բարձրանալու մի քանի փորձեր ձախողվել են, սակայն թուղթ էին գրել, թե բարձրացել էին, բայց անցկացված քննությունը բացահայտում է, որ իսկապես չեն կարողացել այդ ժամանակ բարձրանալ: Պահպանվել է գերմանացի երկրաբանի նամակը, բայց ոչ ամբողջությամբ: Բակունցը կարևորել է երկու նամակները: «...Մեկ էլ, որ էն նեմեցն մեկ գիր էր գրել Աբովյանի վրեն, թե ես էս գիրն քեզ գրեցի, ես դեզգերա, ես եսպես մեռա, դուն էլ քո գլխի չարեն տես, բայց որ էն գիրըն երկար չի քաշեց, որ նա կորավ...»⁴: Նամակի այս հատվածով Բողենշտեդը բացատրում է, որ Աբովյանը կարող է անհետացած լինել պրոֆ. Արիսի հետ ունեցած ընդհարման պատճառով Մասիսի գագաթը ելնելու համար: Տեսնենք

⁴ Ա. Բակունց, Երկեր, հտ. 4, էջ 46:

Ադոնցի տեսակետը այս հարցի շուրջ: Ադոնցը *դեզգեթան* բացատրում է որպես *վկայաթուղթ*: Իսկ գիտնականի միտքը հետևյալ ձևով է բացատրում. *ես եսպես մեռա դու էլ քո գլխի ճարը տես, այսինքն՝ ինձ պատիժ է սպառնում, իսկ դու քո գլխի ճարը տես*: Ադոնցը այս տեղեկատվությունը համարել է պարապ երևակայության արդյունք: Մենք նույնպես համաձայն չենք այս տեսակետին, քանի որ Աբովյանը վախկոտ անձնավորություն չէր, որ պատժից խուսափեր: Ինչ վերաբերում է Աբովյանի՝ Մասիսի գագաթը ելնելուն, ապա կարծում ենք, որ բարձրացել է: Այդ մասին կան շատ փաստեր և ուսումնասիրություններ, որոնց մեծ մասն օտար հեղինակների կողմից են կատարված: Աբովյանի՝ Մասիսի գագաթը ելնելու գործը, չլինելով մեր խնդրո առարկան, շատ խորը ուսումնասիրության չենք ենթարկել, բայց չենք էլ կարող անտեսել այդ կարևոր իրադարձությունը: Մենք որոշակի հղումներ կկատարենք մի քանի հեղինակների, որոնք գրել են այդ մասին: Եվ այսպես. «Հեռու հյուսիսից գիտական մի փոքր արշավանք էր եկել Հայաստան, որպեսզի հետազոտեր Արարատ լյառը և բարձրանար նրա անհասանելի կատարը: Մնտիապաշտությունն ու խավարը դարեր շարունակ այնպես էին մթագնել ժողովրդի միտքը, որ հայերի շրջանում այդ մասին մտածելն անգամ սրբապղծություն էր համարվում, մահացու մեղք, ուր թե հանդգնել մագլցել լյառն ի վեր: 1829 թ. սեպտեմբերի 27-ին գիտական արշավախումբը հասավ Արարատի բարձրագույն կատարը: Այս սխրագործությունը ո՛չ միայն գիտական մեծ փառք բերեց նրա մասնակիցներին՝ հռչակավոր բնախույզ ու գիտնական Ֆրիդրիխ Պարրոտին և Էջմիածնի վանքի երիտասարդ դպրին, այլև նոր ուժով բորբոքեց բանականության ու լույսի կռիվն ընդդեմ նախապաշարման ու խավարի: Կամաց-կամաց ցրվում էր տգիտության մշուշը հայոց աշխարհում, մարդիկ սկսում էին հավատալ գիտության ուժին, ջանում լուսավորել ուրիշներին»⁵: Մա իսկա-

⁵ Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյանի կյանքը, գործը և ժամանակը, Երևան, 1967, էջ 314:

պես փառք էր թե՛ Աբովյանի, թե՛ հայոց աշխարհի համար, բայց նաև չմոռանանք, որ Արարատի գագաթը նվաճելը պետք է անախորժություններ ծներ Աբովյանի և եկեղեցականների միջև: Բայց տեսնենք, թե ի՞նչ եղավ հետո, ի՞նչ հոգեկան ապրումներ գերեցին երիտասարդ Աբովյանի հոգին:

«Ես ուրախությունից դողում էի,- պատմում է Աբովյանը,- և մինչդեռ պարոն պրոֆեսորն զբաղված էր ծանրաչափական դիտողություններով, ես մանկան նման հրճվանքով վազվզում էի լեռան գագաթով այս ու այն կողմ և ազահությամբ որոնում մի որևէ առարկա, որը կարողանայի վերցնել հետս ի հիշատակ, բայց խորին տխրությամբ պետք է ասեմ, որ ոչինչ չգտա»⁶: Իսկ Դորպատի համալսարանի պրոֆեսորը, կանգնած Արարատի բարձունքին, բնախույզի հայացքով ուսումնասիրում էր այն, նա հանգիստ էր. «Գտնվում էի թեթևակի ուռուցիկ, համարյա թե խաչաձև մակերեսի վրա՝ երկու հարյուր քայլ պարագծով, որի եզրերը գահավեժ իջնում էին ամեն կողմ, առանձնապես արևելք և հյուսիս-արևելք: Հավերժական կարծր սառույցից, առանց որևէ ընդհատող ժայռի կամ քարի այդպիսին էր ծեր Արարատի գագաթը»⁷: Արշավախումբը բարձրացավ. անդամներն իրենց հետ խաչ էին տարել, որը պետք է դնեին Արարատի գագաթին: Մինչ Պարրոտն ուսումնասիրում էր գագաթը՝ ցանկանալով գտնել Նոյի կանգնած տեղը, Աբովյանն առանց հապաղելու վազում է և խաչը տեղադրում գագաթին: Պարրոտն ասում է. «Շրջակայքը գննելուց հետո շրջվեցի դեպի ընկերներս ու չգտա հավատարիմ Աբովյանին: Հայտնեցին, որ գնացել է խաչը տեղադրելու: Դա ինքս էի ուզում անել և մտքումս արդեն ընտրել էի այդ նպատակին հարմար կլոր տարածության կենտրոնը: Սակայն Աբովյանը կրոնապաշտ եռանդով այս գործն իր ձեռքն էր վերցրել և խաչի համար տեղ էր ընտրել գագաթի հյուսիս-արևելյան ծայրը, որովհետև, ինչպես նա ճիշտ նկատեց, մեջ-

⁶ Պ. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 326:

⁷ Ֆ. Պարրոտ, Դորպատից Արարատ, Երևան, 1990, էջ 75:

տեղում կանգնված խաչը չէր երևա դաշտավայրից: Աբովյանի նպատակն էր, որ այն երևա նաև Արգուտիից և Սուրբ Հակոբից: Խաչը մեր հաջողության գրավականն էր»⁸: Իսկ ահա սեպտեմբերի 28-ին արշավախումբը մտնում է Սուրբ Հակոբ եկեղեցի, ինչպես Նոյ նահապետը. «Նոյը եւ իր որդիքը, եւ իր կինը եւ իր որդկանց կանայքը...» 4000 տարի առաջ իջան Արարատից⁹:

Ակսել Բակունցի կարծիքով՝ Պարբոտն այն մարդն էր, ով անմիջական ազդեցություն է ունեցել Աբովյանի վրա: Բակունցը գրում է, որ մինչև անհետացումը Աբովյանը մի ոտքով դեռ Դորպատում էր:

Ինչպես տեսանք, Աբովյանն արշավախմբի հետ բարձրացավ Արարատի գագաթը՝ պատռելով սնահավատության քողը: Այժմ մենք վերադառնանք մեր խնդրո առարկային՝ Աբովյանի անհետացմանը և փաստերին: Վերադառնանք Բողենշտեղի նամակին: Այն, որ գերմանացի գրողն իր նամակում գրել է, թե Աբովյանը ցանկանում էր թողնել ռուսական ծառայությունը և անցնել Հայաստանի ներքին մասերը, այնտեղ զբաղվել երկրագործությամբ՝ Ադոնցը համարել է դառնացած սրտի վայրկենական բռնկում: Ավելին, Ադոնցը կարծում է, որ սխալ կլինի՝ որպես ծրագրային խորհուրդ տեսնել, քանի որ ըստ Ադոնցի՝ Աբովյանն այնքան միամիտ չէր, որ մտածեր հնարավոր լիներ ապահով ապրել գյուղերում, այն էլ տիրող սոցիալ-քաղաքական վատ պայմաններում:

Ա. Բակունցն առաջ է քաշել մեկ այլ վարկած, այն է՝ Աբովյանը, հիասթափված լինելով ռուսական մթնոլորտից, հանձին Ներսես Աշտարակեցու, գնար Տաճկահայաստան և այնտեղից մեկ այլ տեղ: Կան ուրիշ վարկածներ ևս, որոնք առաջ են քաշել Աբովյանի ընկերները: Ս. Նազարյանն առաջ է քաշել ինքնասպանության վարկածը, իսկ արևմտահայ Ոսկանը՝ Սիբիր արքայազնության վարկածը:

⁸ Ֆ. Պարբոտ, Նշվ. աշխ., էջ 76:

⁹ Ծննդոց, է, 1989, էջ 7:

Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի կարծիքով՝ Ակսել Բակունցն իր կատարած հետախուզումների վերջին օղակը համարել է փախուստը: Ըստ Ա. Հովհաննիսյանի՝ Բակունցն այս վարկածը առաջ է քաշել Բողենշտեդի նամակից. «Աբովյանը իբր Ռուսաստանից դուրս եր վորոնում «նոր տուն և նոր հայրենիք». իբր Աբովյանը գրած է յեղել Բողենշտեդին, թե «վճռել է թողնել ռուս պետական ծառայությունը, Հայաստանի ներքին մասը գնալ և այնտեղ իր պապերի հետ յերկրագործությամբ պարապել»¹⁰: Աշոտ Հովհաննիսյանն իր կատարած ուսումնասիրության ընթացքում հանգել է այն եզրակացության, որ Աբովյանը նմանատիպ նամակներ գրել է նաև Նազարյանին և Ֆրենին, բայց *նոր տուն և նոր հայրենիք* ասելով ի նկատի է ունեցել Ռուսաստանի համալսարանական կենտրոնները, մասնավորապես, Պետերբուրգն ու Կազանը: Պատմաբանը նշում է այն հանգամանքը, որ 1845 թ. Ներսես Աշտարակեցուն գրած նամակում նույնպես՝ «ակնարկել է Կովկասից հեռանալու այդ դիտավորության մասին, նա վորակապես «նոր տուն և նոր հայրենիք» նշում եր վոչ միայն Գերմանիան, այլև Ռուսաստանը»¹¹: Ա. Հովհաննիսյանը, այնուամենայնիվ, անհիմն է համարում այն պնդումը, թե Հայաստանի ներքին մասի տակ պետք է հասկանալ Արևմտյան Հայաստանը: Պատմաբանն ավելացնում է. «Գուցե նոր հայտնաբերվելիք վավերագրերն ավելի պայծառ լույս գցեյին Աբովյանների անցյալի վրա և մասնավորապես պարզաբանեյին Բողենշտեդի գրած տողերի կոնկրետ իմաստը»¹²:

Կան Աբովյանի կողմից գրված շատ նամակներ, որոնք ուսումնասիրողի մոտ առաջացնում են նոր վարկածներ: Օրինակ՝ դորպատյան տարիների նրա օրագիրը, ուր Աբովյանը գրում է. «Շատ անգամ մահ էյի կամենում ինձ. Մտածում էյի յեթե հնար լինի դեղամահ լինել. շատ անգամ սաստիկ ձմրանը առանց ջորապի էյի գնում,

¹⁰ Ա. Հովհաննիսյան, Աբովյան, Երևան, 1933, էջ 59:

¹¹ Նույն տեղում, էջ 62:

¹² Նույն տեղում, էջ 62:

վորպեսզի սրանով գտնեմ իմ մահը»: Դեռ հայրենիք չէր վերադարձել Աբովյանը, երբ «St.-Petersburger Zeitung»-ում տպած իր հոդվածում զանգաստվում էր, թե որքան վիրավորանքներ է կերել ինքը թեկուզ հենց Արարատը բարձրանալու «սրբապղծության» համար. «Իմ յերկրի ժողովուրդը Անդրկովկասում - գրում է Աբովյանը - այդ պատճառով ինձ հետ թշնամացել է և սպառնացել ինձ»¹³: Այստեղից պարզ է դառնում, որ Աբովյանին հալածել են Հայաստանից, ինչու չէ նաև սպառնացել, քանի որ եկեղեցուն դեմ էր Արարատի գագաթն բարձրանալը, եկեղեցին այդ քայլը համարել է սրբապղծություն: Իսկ մենք չպետք է մոռանանք, որ Աբովյանը եկեղեցու դպիր էր:

Ուշագրավ տողեր կան, որոնք դեմոկրատ Աբովյանը գրել է իր «Վերք Հայաստանի» առաջաբանում. «Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Չէի իմանում, թե սրա չարեն ի՞նչ կըլի: Թո՛ղ լսողը չհավատա, ամա էս ցավն էսպես էր սիրոս առել, որ շատ անգամ գծվածի պես ընկնում եմ սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ ետ սիրոս լիքը տուն գալիս... ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող, չունքի աստուծո ահը մտքումս, անմեղ քոռփիս ձենը անկաջումս էր, սերն ու ծնողական գուրը՝ ջիգարումս. ես դիլանայի, էթըմին ո՞վ պահեր»¹⁴: Այս տողերը ապացույցն են այն բանի, որ Աբովյանը երբեք չէր գնա ինքնասպանության, ինչպես որ շատերը պնդում են:

Ինչ վերաբերվում է Բակունցի տեսությանը՝ Ադոնցն այն համարում է բանաստեղծական: Բակունցի եզրակացությունը հետևյալն է. «Այսպիսով՝ Աբովյանն ինքը ապրիլի 2-ի լուսաբացին կամ գիշերը գիտակցաբար է տանից հեռացել, մտքում վճռած լինելով ո՛չ թե ինքնասպանություն, այլ փախուստ այն միջավայրից, որտեղ այլևս ոչ մի կովան չունեիր և որտեղից նա հույս չունեիր երբևիցե կենդանի դուրս գալու, եթե հեղափոխության լուրը կայծակի նման չճեղքեր շրջապա-

¹³ Ա. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 85:

¹⁴ Խ. Աբովյան, Երկեր, Երևան, 1984, էջ 8:

տի խավարը և չխոստանար ազատություն»¹⁵: Ադոնցը Բակունցի աշխատության մասին ասել է հետևյալը. «Ա. Բակունցի աշխատությունը, ամեն պարագային, մի կարևոր նպաստ է գործին շնորհիվ նոր նյութերի և նոր մեկնաբանության: Չենք կարող չնկատել, որ գիրքն ավելի պիտի շահեր, եթե լեզուն և ոճը խնամված լինեին, ինչ որ սպասելի էր մի վիպագրից»¹⁶: Չենք կարող չհամաձայնել հայագետի հետ. իսկապես Բակունցը հավաքել է կարևոր փաստեր, նամակներ, վավերագրեր, որոնք Աբովյանի անհետացման գործով զբաղվողներին ստիպում են խորաքննին ուսումնասիրել և բացահայտել մեծ լուսավորչի անհետացման գործը:

Կարևոր մի նամակ, որը գրել է Խաչատուր Աբովյանը Ներսես Աշտարակեցուն, գրավեց մեր ուշադրությունը. այդ նամակը գտանք Ա. Հովհաննիսյանի «Աբովյան» մենագրության մեջ: Ըստ Հովհաննիսյանի՝ Աբովյանի համար միակ հանգիստ վայրը, որտեղ ինքը կազատվեր մահվան ուրվականից, վանքն էր: Ուստի Աբովյանը գրում է. «Ինչ օգուտ ինձ ուրիշի տված փառքն ու պատիվը, - գրում էր նա, - այս ամենը յես ունիմ բարձրյալի շնորհիվ: Ստացել եմ վաղուց կապիտանի աստիճանը, սպասում եմ շուտով նաև մայրության. իբրև տեղիս արքունական դպրոցի տեսուչ ունիմ նաև ռոճիկ և ամեն տեսակի այլ արտոնություններ, բաց է իմ առաջ ճանապարհն ամենուրեք, ուր վոր հոժար լինիմ ծառայելու: Բայց մի թե ծառայության և աստիճանի համար ե, յոր տանջվեցի մինչև հիմա... Սրտիս անբուժելի ցավը, վոր յեվ պատճառ է լինելու իմ մահվան, իսափանել յեվ իսանգարել է իմ բոլոր գորությունը, մեռցրել իմ աչքում ամբողջ աշխարհը: Չկա ինձ համար այլ կյանք, քան հայրենյաց բարերարությունը... Առաջին որինակն չեմ յես, վոր կամենում եմ թողնել տուն ու զավակ և վերցնել Քրիստոսի իսաչը:

¹⁵ Ա. Բակունց, Երկեր, հտ. 4, էջ 91:

¹⁶ Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., էջ 537:

Կամենում եմ, պատրաստ եմ հոգով և մարմնով՝ խաչ բառնալ հայրենքի սիրո համար»:¹⁷ Շատ անհանգիստ հոգի ուներ Աբովյանը. նրան շարունակ տանջում էին հայրենիքի ծանր վիճակը, դպրոցները. նա ամեն բան անում էր՝ լուսավորություն սփռելու համար, բայց ի՞նչ էր անում կառավարությունը. հալածում, ճնշում, ընկճում, հասցնում հոգեկան սուր վիճակների: Ընդգծված տողերից էլ հասկանալի է, որ նրան մարմնական ցավն էր տանջում, սրտի ցավ: Նրա նման մտածողի համար այդքան դառնություններ կրողի սիրտը հաստատ չէր դիմանա:

Յուրաքանչյուր հետազոտող մի նոր վարկած է առաջ բերում, բայց ոչ ոք մինչ օրս չի բացահայտել Աբովյանի անհեյտացումը: Գրում են, որ նրա կինը՝ Էմիլյան, մինչև կյանքի վերջը սպասել է՝ հավատալով, թե ամուսինը վերադառնալու է: Եթե քամին հարվածում էր դռանը կամ պատուհանին, երեխաներից մեկին ուղարկում էր՝ իմանալու՝ արդյո՞ք հայրը չէ: Պատմաբան Աշոտ Հովհաննիսիանն իր «Աբովյան» մենագրության մեջ հաճախ չի համաձայնում Բակունցի առաջադրած փաստերին: Նրա կատարած ուսումնասիրությունը ևս ուշադրության է արժանի: Ուսումնասիրելով պատմաբանի մենագրությունը՝ հանդիպեցինք որոշակի նամակների, որոնք բացակայում էին Բակունցի մոտ (վերը բերված նամակը), բայց ինչպես արդեն ասացինք, դեռևս առեղծված է մնում, քանի որ չի գտնվել Աբովյանի մարմինը՝ որպես սպացույց նրա մահվան:

¹⁷ Ա. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 96:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ էջ 5

ПРЕДИСЛОВИЕ էջ 7

FOREWORD էջ 9

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՏԱՐԱԾ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ..... էջ 11

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

Ն. ԱԴՈՆՅԸ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ..... էջ 25

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐԸ..... էջ 33

ՌՈՒՋԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ
ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ..... էջ 46

ԳՍՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՅՈՂԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ..... էջ 57

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝
ՈՒՂԴՎԱԾ ՏԱՐԱԼԵԶՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻՆ..... էջ 72

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԳՆԱՀԱՏՈՂ..... էջ 86

ՏԱԹԵՎԻԿ ԲԱԲԼՈՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԸ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ..... էջ 99

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԸ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏ ԵՎ ՀԱՅԱԳԵՏ**

Հոդվածների ժողովածու՝ նվիրված
Նիկողայոս Ադոնցի ծննդյան 150-ամյա հոբելյանին

Ստորագրված է տպագրության :
Չափսը՝ Թուղթը՝ օֆսեր:
Տպագրությունը՝ օֆսեր: տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ
Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru